ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ 2018

Նկարի հեղինակ՝ Կարեն Ախիկյան

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. ընթացքում ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկում են իրականացրել՝ Անահիտ Մկրտչյանը, Արա Ղարագոզյանը, Արայիկ Զալյանը, Արթուր Սաքունցը, Արման Սահակյանը, Զարուհի Հովհաննիսյանը, Կարինե Դավթյանը, Հայկ Թադևոսյանը, Հայկ Հակոբյանը, Հասմիկ Հարությունյանը, Մարիա Աբրահամյանը, Նարե Հովհաննիսյանը, Ռոբերտ Ռևազյանը, Ռուբեն Սարգսյանը, Սերգեյ Գաբրիելյանը, Օֆելյա Զալյանը:

Զեկույցի հեղինակներ՝ Արայիկ Զալյան, Զարուհի Հովհաննիսյան, Հասմիկ Հարությունյան, Նարե Հովհաննիսյան, Ռոբերտ Ռևազյան, Ռուբեն Սարգսյան, Սերգեյ Գաբրիելյան

Սույն հաշվետվությունում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խումբն է, և նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն Դիտորդական խումբը: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց Հասարակության հիմնադրամ-Հայաստանի կամ խորհրդի կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բաց Հասարակության հիմնադրամ-Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն հաշվետվության բովանդակությունը կարող է չհամընկնել «Բաց Հասարակության հիմնադրամ-Հայաստան»-ի տեսակետներին: Սույն հաշվետվության թողարկումը հնարավոր է դարձել Բաց Հասարակության հիմնադրամ-Հայաստանի ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ «Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագրի շրջանակում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ....5
ԱՄՓՈՓՈՒՄ....6
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....7
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՒԺՍՊԱՍԱՐԿՈՒՄ....8
Միջազգային ստանդարտներ....8
Ներպետական կարգավորումներ....8
Իրավիճակը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում....9
ՍՆՈՒՆԴ ԵՎ ՈՐԱԿ....17
Միջազգային չափանիշներ....17
Ներպետական կարգավորումներ....17
Իրավիճակը ՀՀ Քրեակատարողական հիմնարկներում....17
ՔԿՀ-ներում սննդի որակի հիմնահարցերը....21
ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ....24
Միջազգային չափանիշներ....24
Իրավիճակը ՀՀ Քրեակատարողական հիմնարկներում....24
Քրեակատարողական հիմնարկների հատուկ քանակակազմերը ըստ լրակազմի..24
ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ....48
Միջազգային ստանդարտներ....48
Իրավիճակը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում....48
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ: ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԿՀ-ներում....52
Միջազգային ստանդարտներ....52
Իրավիճակը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում....53
ԿԱՆԱՅՔ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ....56
Միջազգային չափանիշներ....56
ԱՐԳԵԼՎԱԾ ԻՐԵՐ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼԻՍ ԳՈԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ. 2014թ., 2015թ., 2016թ. 2017թ....64
ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՈՒՄ....66
Միջազգային ստանդարտներ....66
Իրավիճակը ՀՀ-ում....66
2017-2018 թվականների օրենսդրական փոփոխությունների ուսումնասիրություն....66
2011-2017 թթ. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում արձանագրված հացադուլի, մահվան դեպքերի, ինքնասպանության և ինքնավնասումների դեպքերի վիճակագրություն....70
ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ....75
Խմբի գործունեության խոչընդոտումներ....75

ՀՀ գլխավոր դատախազության կողմից Դիտորդների խմբի 2016 թ. տարեկան զեկույցի մեջ արձանագրված փաստերի ուսումնասիրություն.....84
Հիերարխիկ հարաբերություններ.....84
Խմբի կողմից ԱՆ ներկայացված օրենսդրական առաջարկները.....86
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....87
ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....91

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դիտորդական խմբի հերթական տարեկան հաշվետվությունը ներկայացնում է ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում վերահսկողության արդյունքում արձանագրած խնդիրները:

Հաշվետվությունը ներկայացնում է 2017 թվականի գործունեության արդյունքները: Հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունը, փաստերն ու բարձրացված հարցերը արդյունք են վերահսկողության ընթացքում վեր հանած տվյալների, ներպետական օրենսդրական կարգավորումների և համապատասխան միջազգային չափանիշների համեմատական վերլուծության: Ըստ այդմ, հաշվետվությունը ներկայացնում է դիտորդների հասարակական վերահսկողության կոնկրետ արդյունքները՝ ըստ ոլորտների և համապատասխան ոլորտում արձանագրված խնդիրների, վերջիններիս լուծմանն ուղղված գործողությունների և ՀՀ պատկան մարմինների կողմից տրված արձագանքի ու ձեռնարկված քայլերի: Որոշ ոլորտներում արձանագրված խնդիրներն առավել ցայտուն արտահայտվում են ներկայացվող նկարների միջոցով:

Հաշվետվությունը հիմնվել է տեղեկատվության ստացման տարբեր աղբյուրների վրա, որոնցից են մասնավորապես՝

1. ահազանգերի վրա հիմնված պարբերական այցելություններ և մշտադիտարկումներ
2. պլանային այցելություններ և ոլորտային մշտադիտարկումներ
3. այցելությունների ընթացքում իրականացված առանձնազրույցներ և հարցազրույցներ ազատազրկված անձանց հետ, նախկին ազատազրկված անձանց հետ, որոնք պատժի կրումից ազատվել են 2017 թվականի ընթացքում
4. ազատազրկված անձանց հարազատների դիմումներ
5. զրույց-քննարկումներ քրեակատարողական հիմնարկների անձնակազմերի ներկայացուցիչների հետ
6. փաստաթղթերի ուսումնասիրություններ
7. գրություններ ՀՀ Արդարադատության նախարարություն և դրանց տրված պատասխան գրություններն ու մեկնաբանությունները
8. ներպետական օրենսդրության և միջազգային փաստաթղթերի վերլուծություն

Արձանագրված տվյալները արդյունք են 12 քրեակատարողական հիմնարկներ կատարած այցելությունների: Ընդհանուր առմամբ դիտորդների խմբի կողմից ամփոփիչ տարվա ընթացքում կատարվել է թվով 80 այցելություն:

Հաշվետվությունը ներկայացնում է հետևյալ ոլորտներում տիրող իրավիճակը. Բուժսպասարկում և առողջապահություն, սննդի պայմաններ և որակ, պահման պայմաններ, հացադուլի, ինքնավնասման և ինքնասպանության դեպքեր, արգելված իրերի հայտնաբերում և հետագա ընթացք, խոցելի խմբեր և խտրականության դրսևորումներ, կոռուպցիոն դրսևորումներ, հիերարխիկ հարաբերություններ, պատժից ազատման հնարավորություններ:

Ոլորտային յուրաքանչյուր խնդրի կապակցությամբ հաշվետվությունը ներկայացնում է նաև լուծման հնարավոր առաջարկները՝ համապատասխանաբար «Առաջարկություններ» բաժնում:

Հաշվետվության մեջ Խմբի կողմից ՀՀ պատկան մարմիններին առանձին դատապարտյալների և/կամ կալանավորված անձանց վերաբերյալ գրությունների բովանդակությունը ներկայացնելիս, Խումբը հավատարիմ լինելով անձնական տվյալների գաղտնիության պահպանման սկզբունքին, չի հրապարակում այդ անձանց նույնականացնող տեղեկությունները՝ օգտագործելով միայն սկզբնատառերը: Բացառություն են կազմում միայն քաղաքական բարձր հնչեղություն ստացած դեպքերը, որոնք լայնորեն լուսաբանվել են զանգվածային լրատվության միջոցներով:

Հաշվետվության մեջ օգտագործված են նաև մի շարք եզրույթներ և պայմանականություններ, որոնց բացատրությունները ներկայացնում ենք ստորև.

- խոցելի խմբեր, այս եզրույթով սահմանվել են հատուկ կարիքներ ունեցող անձինք, այն է՝ հատուկ բժշկական օգնություն և/կամ խնամք պահանջող (հոգեկան առողջության խնդիրներ, հաշմանդամություն ունեցող, տուբերկուլյոզով հիվանդ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող) անձինք, ԼԳԲՏԻ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս), «քրեական» օրենքներին չենթարկվող կամ դրանք խախտած և որոշակի հանցագործություն կատարած անձինք:

ԱՄՓՈՓՈՒՄ

2017 թվականի տվյալներով ՀՀ-ում բանտային պայմանները շարունակում են մնալ մտահոգիչ՝ վատ սանիտարահիգիենիկ վիճակով, ոչ համարժեք բուժսպասարկմամբ, համակարգային կոռուպցիոն դրսևորումներով: Խիստ մտահոգիչ է ՔԿՀ-ներում հաշմանդամություն ունեցող անձանց համար համապատասխան հարմարությունների բացակայության հարցը: Շարունակում է խնդրահարույց մնալ խոցելի խմբերի նկատմամբ դրսևորվող խտրական մոտեցումներն ու կին դատապարտյալների պատժի կրման հիմնախնդիրները: Մտահոգիչ է մնում նաև կալանավորվածների և դատապարտյալների շրջանում տիրող հիերարխիկ հարաբերությունները, չգրված «քրեական օրենքները» և հանցավոր հիերարխիկ/միջանձնային համակարգի գոյությունը:

Առավել մտահոգիչ են «Նուբարաշեն» ՔԿՀ պահման նյութական պայմանները, որոշ խցերում պահման պայմանները հասնում են անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի:

2017 թ. ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է ինքնափսաման 607 դեպք, իրականացված սոցիալ-հոգեբանական բնույթի աշխատանքների արդյունքում կանխվել է ինքնափսաման 190 դեպք:

2017 թ. արձանագրած ինքնասպանության 2 դեպքերով անցկացվել է 2 ծառայողական քննություն, որոնցից 1-ի արդյունքներով քրեակատարողական ծառայողների գործողություններում կարգապահական խախտման տարրեր չեն հայտնաբերվել, իսկ 1 ծառայողական քննություն կասեցվել է:

2017 թ. ՔԿՀ-ներում արձանագրվել է մահվան 17 դեպք, որից 8-ը՝ սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների, 2-ը՝ գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարումների, 2-ը՝ ինքնասպանության և 5-ը այլ հիվանդությունների հետևանքով:

Հաշվետու ժամանակահատվածում դատապարտված և կալանավորված անձանց նկատմամբ կիրառված տույժերի գերակշռող մասը կիրառվել է արգելված իր՝ բջջային հեռախոս պահելու համար:

Այս և նմանատիպ այլ խնդիրներ առավել մանրամասն ներկայացվում են զեկույցի համապատասխան բաժիններում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դիտորդների խմբի 2017 թվականի գործունեության արդյունքների ամփոփումը թույլ է տալիս նշել, որ 2017 թվականին իրավիճակը ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում շարունակել է մնալ խնդրահարույց: Չնայած պետության կողմից ձեռնարկված քայլերին ու օրենսդրական ու պրակտիկ բնույթ կրող փոփոխություններին՝ այնուհանդերձ, դեռևս առկա են մի շարք խնդիրներ: Այս կապակցությամբ խումբը, ինչպես նախորդ տարիներին, իրականացրել է օրենքով իրեն վերապահված իրավասությունները՝ ի նպաստ քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց մարդու իրավունքների վիճակի բարելավման:

Համաձայն դիտորդների խմբի կարգի[1]՝ վերահսկողությունն իրականացվում է ՔԿՀ-ներ և մարմիններ այցելություններ կատարելու և կատարված այցելությունների հիման վրա՝ ՀՀ արդարադատության նախարարին և հասարակությանը հաշվետվություններ ներկայացնելու ձևով: Խումբը ներկայացնում է երեք տեսակ հաշվետվություններ՝ ընթացիկ, տարեկան և հրատապ: Հրատապ հաշվետվություններում ներկայացվում են փաստեր քրեակատարողական ծառայությունում բացահայտված մարդու իրավունքների կոպիտ խախտումների վերաբերյալ, խնդիրներ, որոնք պահանջում են հրատապ լուծումներ: Հրատապ հաշվետվության կապակցությամբ ՀՀ ԱՆ-ն ներկայացնում է մեկնաբանություններ երեք օրվա ընթացքում:

Կարգով սահմանված իրավասություններն ու գործառույթները 2017 թվականի ընթացքում ունեցել են պրակտիկայում կյանքի կոչելու հետևյալ պատկերը: Այսպես, ամփոփիչ տարվա ընթացքում խումբը ստացել է ընդհանուր առմամբ **89 հայցադիմում և իրականացրել թվով 80 այցելություն**:

Հատկանշական է, որ շատ հաճախ Խմբի դիտորդների աշխատանքը խոչընդոտվել է ՔԿՀ աշխատակիցների կողմից՝ քննիչի կողմից կալանավորված անձանց նկատմամբ արտաքին աշխարհի շփումների վրա արգելանք դրված լինելու պատճառաբանությամբ /մանրամասները՝ 13-րդ գլխում/:

Ամփոփիչ ժամանակահատվածում խմբի կողմից ընդհանուր առմամբ ներկայացվել է 4 հրատապ և 44 ընթացիկ հաշվետվություն:

Ուղարկվել է թվով 101 գրություն՝ կապված առողջական հարցրեի, ինքնավնասման դեպքերի, ՔԿՀ-ներում առկա հիերարխիկ հարաբերությունների, ինքնավնասումների, արձանագրված խտրականության դեպքերի, անվտանգության ապահովման հարցերի, ինքնավնասումների և հացադուլ հայտարարած անձանց պահման պայմանների հետ:

Հարկ է նշել, որ խմբի և համապատասխան պատկան մարմինների արդյունավետ գործունեության արդյունքում հնարավոր է եղել լուծում տալ մի շարք անհատական բնույթ կրող խնդիրների՝ կապված առանձին անձանց բուժսպասարկման, պահման պայմանների, անվտանգության ապահովման և այլ հարցերի հետ:

[1] ՀՀ արդարադատության նախարարի հրաման թիվ ՔՀ-66-Ն, 18 նոյեմբերի, 2005 թ., ք. Երևան, հասանելի է հետևյալ հասցեում՝ http://pmg.am/hy/about-us/group-order

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՒԺՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Միջազգային ստանդարտներ

Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն սահմանել է, որ ազատազրկված անձինք իրավունք ունեն նույն մակարդակի բժշկական սպասարկման, ինչպիսիք ունեն տվյալ հասարակության մեջ ազատության մեջ գտնվող անձինք: Այս սկզբունքը սերտորեն կապված է անձի հիմնական իրավունքների հետ: Ավելին, Բժշկական սպասարկման անբավարար մակարդակը կարող է հանգեցնել «անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք» հասկացությանը համապատասխանող իրավիճակի: Ավելին, բժշկական սպասարկումը տվյալ հիմնարկում ամենայն հավանականությամբ կարող է կարևոր դեր խաղալ դաժան վերաբերմունքի հետևանքով առաջացած տանջանքների մեղմացման գործում, ինչպես բուն հիմնարկում, այնպես էլ այլ վայրերում (հատկապես ոստիկանական հիմնարկներում): Բացի այդ, բժշկական սպասարկումն իր հատուկ կոչման շնորհիվ կարող է դրական ազդեցություն ունենալ կյանքի ընդհանուր մակարդակի վրա այն հիմնարկում, որտեղ այն կիրառվում է[2]: Ազատազրկման վայրի բժշկական ծառայությունը պետք է հնարավորություն ունենա ազատազրկված անձանց ապահովել առնվազն կանոնավոր ամբուլատոր խորհրդատվությամբ և շտապ բուժօգնությամբ (նաև կարող է ունենալ մահճակալներով ապահովված հիվանդանոցային տիպի բաժանմունք):

Ազատազրկված յուրաքանչյուր անձ պետք է հնարավորություն ունենա օգտվելու բարձրակարգ ատամնաբույժի ծառայություններից: Բացի այդ, ազատազրկման վայրերում աշխատող բժիշկները պետք է մասնագետներ ներգրավելու հնարավորություն ունենան: Շտապ բժշկական օգնության անհրաժեշտության դեպքում պետք է միշտ բժշկին դիմելու հնարավորություն լինի: Բացի այդ, ազատազրկման վայրում միշտ պետք է ներկա լինի առաջին օգնություն ցուցաբերելու ունակ անձ, ցանկալի է բուժքրոջ պաշտոնապես հաստատված որակավորմամբ: Ամբուլատոր բուժումը պետք է վերահսկվի բուժանձնակազմի կողմից. շատ դեպքերում ազատազրկված անձի նախաձեռնությունը բավարար չէ բուժումը շարունակելու համար: Պետք է հնարավոր լինի օգտվել լավ սարքավորված քաղաքացիական հիվանդանոցի կամ ազատազրկման վայրի հիվանդանոցի բժշկական ծառայություններից[3]:

ՄԱԿ-ի վերանայված «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» 24-րդ հոդվածի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց առողջապահության ապահովումը պետության պարտականությունն է: Կանոններով նույնպես սահմանվում է, որ ՔԿՀ-ում տրամադրվող առողջապահական ծառայությունների որակը պետք է համապատասխանի ազատության պայմաններում գործող չափանիշներին, այսինքն՝ բանտում գտնվող անձին պետք է հասանելի լինի քաղաքացիական բուժհաստատություններում տրամադրվող ծառայություններից ոչ պակաս որակի ծառայություն[4]:

Ներպետական կարգավորումներ

ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի (ՔԿՕ) 12-րդ հոդվածով սահմանված դատապարտյալի իրավունքների շարքում ամրագրված է նաև առողջության

---

[2] ԵԽ, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե, Առողջապահական ծառայությունները բանտերում, 2015, հասանելի է հետևյալ հղումով՝ http://agent.echr.am/resources/echr/pdf/ba2e032f91eb6673220a419b698fd89c.pdf

[3] Առողջապահական ծառայությունները բանտերում, CPT/Inf/93/12, CoE

[4] «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ» (Մանդելայի կանոնները), 2015թ., E/CN.15/2015/L.6/ Rev.1

պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, բժշկական օգնություն ստանալու իրավունքը[5]:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է ձերբակալված, կալանավորված և ազատազրկման վայրերում պատիժ կրող անձանց՝ բժշկական օգնություն ստանալու իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով[6]»:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքով նույնպես նախատեսվում են դրույթներ ազատազրկված անձանց առողջության իրավունքի վերաբերյալ, մասնավորապես՝ յուրաքանչյուր կալանավորված անձ իրավունք ունի առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննվել իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին[7]:

Իրավիճակը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում

Վիճակագրական տվյալներ

2017 թվականի հունվարից մինչև 2018 թվականի հունվարի 15-ն ընկած ժամանակահատվածում ՄԻԱԿ/ՁԻԱՀ-ով հաշվառված են եղել 32 դատապարտյալ և կալանավորված անձինք, որոնցից 20-ը՝ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում, 4-ը՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում, 2-ը՝ «Կոշ» ՔԿՀ-ում, 2-ը՝ «Արթիկ» ՔԿՀ-ում, 1-ական՝ համապատասխանաբար «Սևան», «Գորիս», «Աբովյան» և «Հրազդան» ՔԿՀ-ներում:

Տուբերկուլոզով հաշվառված են 19 դատապարտյալ և կալանավորված անձ, որոնցից 18-ը «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում, 1-ը՝ Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն ՊՈԱԿ-ում:

Շաքարային դիաբետ հիվանդությունը ներառված է էնդոկրին հիվանդությունների մեջ, որով հաշվառված են 105 դատապարտյալ և կալանավորված անձինք, որոնցից 25-ը՝ «Նուբարաշեն»-ում, 25-ը՝ «Կոշ»-ում, 12-ը՝«Արթիկ»-ում, 11-ը՝ «Վարդաշեն»-ում, 10-ը՝ «Աբովյան»-ում, 7-ը՝ «Դատապարտյալների հիվանդանոց»-ում, 4-ը՝ «Երևան-Կենտրոն»-ում:

Էնդոկրին հիվանդություններով 3-ական դատապարտյալ և կալանավորված անձինք հաշվառված են «Վանաձոր» և «Գորիս» ՔԿՀ-ներում, 2-ական՝ «Սևան» և «Հրազդան» ՔԿՀ-ներում, 1 անձ հաշվառված է «Արմավիր»-ում:

Հեպատիտներ և չարորակ նորագոյացություններ ախտորոշումներով հաշվառում չի տարվում:

Նշված հիվանդություններով տառապող անձինք գտնվում են քրեակատարողական հիմնարկների բժշկական սպասարկման բաժնի հսկողության տակ, ստանում հավելյալ սնունդ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ամբուլատոր բուժում:

Ստացիոնար բուժման կարիք ունենալու դեպքում վերջիններս տեղափոխվում են ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ:

2017 թվականի հունվարից մինչև 2018 թվականի հունվարի 15-ը Բժշկական անկախ հանձնաժողովը /ԲԱՀ/ Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովին (ՄԲՀ) է ներկայացրել պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդություններով տառապող դատապարտյալների վերաբերյալ 9 որոշում, որոնք ՄԲՀ-ի կողմից բավարարվել են:

ՄԲՀ-ի բոլոր 9 եզրակացությունները ներկայացվել են ՀՀ դատարաններ, որոնցից 6-ը բավարարվել է:

[5] ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք ընդունված 2004թ. դեկտեմբերի 24-ին: Հասանելի է http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=52053 հասցեում:

[6] ՀՀ օրենքը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», ընդունված 1996թ.մարտի 4-ին: Հասանելի է http://www.arlis.am/ DocumentView.aspx?docID=104958 հասցեում:

[7] ՀՀ օրենքը «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին», ընդունված 2005թ. հուլիսի 8-ին: Հասանելի է http://www.arlis.am/ DocumentView.aspx?docid=1853 հասցեում:

Պատժի կրմանը խոչընդոտող հիվանդություններն են՝

1. 2-ը՝ շնչառական օրգանների,
2. 2-ը՝ ներզատական համակարգի,
3. 3-ը՝ նորագոյացություններ,
4. 1-ը՝ մարսողական օրգանների,
5. 1-ը՝ կենտրոնական նյարդային համակարգի:

2017 թվականի հունվարից մինչև 2018 թվականի հունվարի 15-ը ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի 825-Ն որոշմամբ սահմանված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին համապատասխանելու հիմքով ազատվել է 6 անձ:

Եվս 1 դատապարտյալ տեղափոխվել է «Նուբարաշեն» հոգեկան առողջության կենտրոնի հատուկ հսկողության հոգեբուժական բաժանմունք՝ դատարանի կողմից նշանակված հարկադիր բուժման նպատակով:

2017 թվականի հունվարից մինչև 2018 թվականի հունվարի 15-ը քրեակատարողական հիմնարկներում թմրանյութերից կախվածության մեջ գտնվող անձանց թիվը կազմում է 86, որոնցից 20-ը՝ «Արմավիր»-ում, 13-ը՝ «Կոշ»-ում, 11-ը՝ «Արթիկ»-ում, 9-ական՝ «Հրազդան»-ում և «Դատապարտյալների հիվանդանոց»-ում, 7-ը՝ «Սևան»-ում, 6-ը՝ «Վանաձոր»-ում, 5-ական՝ «Նուբարաշեն»-ում և «Գորիս»-ում, 1-ը՝ «Աբովյան»-ում:

Նշված ախտորոշում ունեցող անձինք պահվում են առանց հատուկ սահմանափակումների պայմաններում:

2017 թվականի հունվարից մինչև 2018 թվականի հունվարի 15-ը մեթադոնային փոխարինող բուժում ստանել են 173 անձինք:

2017 թվականի հունվարից մինչև 2018 թվականի հունվարի 15-ը 72 կալանավորված անձ, դատապարտյալ դիմել է մեթադոնային փոխարինող բուժման խնդրանքով, որոնցից բավարարվել է 29-ը:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում նույնասեռականների վերաբերյալ հաշվառում չի տարվում:

2017 թվականի դիտորդների Խմբի կողմից ուսումնասիրության են ենթարկվել քրեակատարողական հիմնարկներում բուժսպասարկման որակը, դեղորայքային ապահովվածության ու վերջիններիս որակի հարցերը, տեխնիկական ու կադրային հագեցվածության հարցերը:

Խումբն արձանագրում է, որ, չնայած ձեռնարկված քայլերին և արձանագրված որոշ դրական փոփոխություններին, այնուամենայնիվ, դեռևս խիստ մտահոգիչ են մասնագիտական պատշաճ բուժօգնության հասանելիության ու քրեակատարողական հիմնարկների բուժծառայությունների կադրային համալրվածության խնդիրները: Այդ է պատճառը, որ Խմբի կողմից բուժսպասարկման վերաբերյալ ստացված ահազանգերի մեծ մասը կապված է եղել ՔԿՀ-ում կամ ժամանակին առաջնային օգնություն չստանալու, կամ ՔԿՀ պայմաններում որակյալ բուժօգնություն ստանալու հնարավորության բացակայության հետ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում բուժսպասարկման հետ կապված ահազանգերի ու ՔԿՀ դիտարկումների արդյունքում Խմբի կողմից ՀՀ ԱՆ է ուղարկվել թվով 23 գրություն՝ բարձրացնելով ազատազրկված անձանց առողջական տարբեր խնդիրների հարցերն ու անհրաժեշտ քայլերը վերջիններիս լուծման ուղղությամբ:

Պետք է նշել, որ գրությունների մեջ առանձնակի տեղ են զբաղեցրել ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի Ն 825-Ն որոշմամբ սահմանված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկի հետ կապված պրակտիկ խնդիրները: Այս առնչությամբ ընդհանուր առմամբ արձանագրվել է թվով 5 դեպք՝

1. Խումբը պարզել է, որ ԲԱՀ-ի 2016թ. սեպտեմբերի 15-ի որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ի դատապարտյալ Ս.Ա.-*ի* մոտ ախտորոշված է՝ «Շաքարային դիաբետ, 2-րդ տիպ, ինսուլինակախյալ ձև, ծանր ընթացքով (օրական

ստանում է 145 /հարյուր քառասունհինգ/ միավոր ինսուլին): Դիաբետիկ հեպատոպաթիա, դիստալ պոլինեյրոպաթիա, ստորին վերջույթների անգիոպաթիա, ճարպային հեպատոզ, սրտի իշեմիկ հիվանդություն, հետինֆարկտային կարդիոսկլերոզ: Վիճակ պսակաձև անոթների ստենտավորումից հետո: Զարկերակային հիպերտենզիա 2-3-րդ աստիճան: Արյան շրջանառության անբավարարություն, ֆունկցիոնալ դաս երրորդ աստիճան: Երկկողմ թույլ արտահայտված երկրորդային լիմֆոստազ: Ալիմենտար կոնստիտուցիոնալ ճարպակալում 4-րդ աստիճան: Գաստրոէնտերոկոլիտ, բարդացած պարապրոկտիտ»:

Դիտորդների Խումբը գտել է, որ Ս. *Ա.*-ի հիվանդությունը համապատասխանում է ՀՀ Կառավարության *2006* թվականի մայիսի *26 N 825*-Ն որոշմամբ սահմանված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկի *28*-րդ կետի *4*-րդ և *9*-րդ կետի *5*-րդ ենթակետերին:

Սակայն, չնայած ախտորոշումներին՝ համապատասխան մարմինների կողմից դատապարտյալի ազատման գործընթացին ընթացք չի տրվել, այլ ամիսներ անց որոշում է կայացրել նոր հետազոտություն անցկացնելու վերաբերյալ, Խումբն առաջարկում է կազմակերպել Ս.Ա.-ի՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդության հիմքով պատժից ազատման գործընթացը:

2. *2017թ. ապրիլի 26-ին Խումբը ընթացիկ հաշվետվությամբ դիմել է ՀՀ ԱՆ՝ հայտնելով, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի դատապարտյալ Հ.Թ.-ի բժշկական փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ վերջինս ունի հիվանդություն, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 26.05.2006թ. N 825-Ն որոշման հավելված 2-րդ-ում սահմանված՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկի 20-րդ կետի 1-ին ենթակետին: Վերոգրյալի հիման վրա Խումբն առաջարկել է նախաձեռնել Հ.Թ.-ին ազատ արձակելու գործընթացը՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդություն ունենալու հիմքով:*

Հաշվետվությանն ի պատասխան՝ 2017թ. մայիսի 10-ին ՀՀ ԱՆ-ից տեղեկացրել են, որ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին ախտորոշման համապատասխանելիության հարցը որոշելու համար առաջարկվել է կատարել գլխուղեղի ԿՏ հետազոտություն և նյարդավիրաբույժի խորհրդատվություն*:*

3. *2017թ. մայիսի 26-ին Խումբը ընթացիկ հաշվետվությամբ դիմել է ՀՀ ԱՆ՝ հայտնելով, որ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ դատապարտյալ Ա.Մ.-ն Խմբին ուղղված նամակով տեղեկացրել է, որ տառապում է մի շարք հիվանդություններով, որոնք համապատասխանում են ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 26-ի N 825*-Ն որոշմամբ սահմանված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին, սակայն իր ազատ արձակման գործընթացը չի կազմակերպվում: Ա.Մ.-ն բողոքել է, որ իր բժշկական քարտում ոչ բոլոր հիվանդություններն են ներառված, և հայտնել է, որ ըստ ՔԿՀ նյարդահոգեբույժ Գ.Ա.-ի և գլխավոր բժիշկ Բ.-ի՝ «առանց գումարի ոչ մի հարց չի լուծվում»: Ահազանգի հիման վրա Դիտորդների խմբի անդամները հանդիպել են Ա.Մ.-ին: Վերջինս Դիտորդների խմբի անդամների հետ հանդիպման ժամանակ պնդել է նամակում բարձրացված հարցերը: Վերոգրյալի հիման վրա՝ Խումբն առաջարկել է քննարկման առարկա դարձնել հաշվետվությամբ բարձրացված հարցերը (ներառյալ՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդության հիմքով պատժից ազատման հնարավորությունը):

Հաշվետվությանն ի պատասխան՝ 2017թ. հունիսի 22-ին ՀՀ ԱՆ-ից հայտնել են, որ 2017թ. ապրիլի 11-ին դատապարտյալ Ա.Մ.-ն տեղափոխվել է թերապևտիկ բաժանմունք, որտեղ վերջինիս մոտ ախտորոշվել է «Լեղաքարային, միզաքարային հիվանդություն: Զարկերակային հիպերտենզիա II°»: Նշանակվել են հակահիպերտենզիվ դեղամիջոցներ: Դատապարտյալ Ա.Մ.-ն ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ից դուրս է գրվել 2017թ. մայիսի 15-ին: 2016թ. սեպտեմբերի 29-ին և 2017թ. ապրիլի 11-ին դատապարտյալը զննվել է նաև ԲԱՀ-ի կողմից: Վերջինիս մոտ ախտորոշվել է «Անձի օրգանական խանգարում, ցուցադրական վարք: Հետտրավմատիկ էնցեֆալոպաթիա՝ ասթենո-նևրոտիկ համախտանիշով: Սրտի իշեմիկ հիվանդություն, զարկերակային

հիպերտենզիա: Քրոնիկական բրոնխիտ: Քրոնիկական գաստրոդուոդենիտ: Քրոնիկական պիելոնեֆրիտ: Գլխի մազածածկ շրջանի աթերոմա: Աղեղանման մետաղյա լար՝ գլխի դիմա-ծոծրակային շրջանի փափուկ հյուսվածքներում»: Նշված ախտորոշումը, սակայն, չի համապատասխանում ՀՀ կառավարության 2006 թ. մայիսի 26-ի 825-Ն որոշման հավելված 2-ում ընդգրկված պատժի կրմանը խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին:

4. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ այցելության ժամանակ հանդիպել են դատապարտյալ Վ.Խ.-ին: Վերջինս խոսում էր հևալով, շնչահեղձ էր լինում, գունատ էր և դժվարությամբ էր տեղաշարժվում: Վ.Խ.-ն հայտնել է, որ ունի սրտի աշխատանքի անբավարարվածություն, բազմիցս հետազոտվել է և կարիք ունի ստենտավորման, սակայն ստենտավորում չեն արել, քանի որ սրտի անոթների պատերը չափազանց բարակ են, վիճակը գնալով ավելի է վատանում: Վերոգրյալի հիման վրա Խումբը առաջարկել է քննարկել ծանր հիվանդության հիմքով Վ.Խ.-ին պատժից ազատելու հարցը:

ԱՆ ստացված պատասխանի համաձայն՝ Աբովյան ՔԿՀ-ում պատիժ կրող դատապարտյալ Վ.Խ.-ն 2017թ. նոյեմբերի 1-ին զննվել է ՀՀ ԱՆ ՔԿԾ ԲԱՀ-ի կողմից: Ուսումնասիրվել է նաև դատապարտյալի վերաբերյալ Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտի կողմից տրված էպիկրիզը, որի համաձայն վերջինիս մոտ ախտորոշված է Զարկերակային հիպերտենզիա III°, ծանր ձև, բարձր ռիսկ: Սրտի իշեմիկ հիվանդություն, լարվածության ստենոկարդիա, III ֆ.դ. (ըստ Կանադական դասակարգման): Հետինֆարկտային կարդիոսկլերոզ: Սինուսային հաճախականություն: Հիսի խրձի ձախ ոտիկի (բիֆասցիկուլյար) պաշարում III ֆ.դ. քրոնիկական սրտային անբավարարություն (NYHA): Թոքային հիպերտենզիա: Տեղեկացվել է նաև, որ նշված հիվանդության ախտահարման աստիճանը չի համապաստախանում ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ում ընդգրկված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին:

5. Դիտորդների խմբի անդամները ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ: Այցելության ժամանակ հանդիպել են դատապարտյալ Ա.Ա.-ին: Վերջինս հիպերտոնիկ կրիզի արդյունքում տարել էր ինսուլտ, անկողնային հիվանդ էր, նրա խնամքը հոգում էր կին դատապարտյալներից մեկը: Նրան մի քանի անգամ տեղափոխել են քաղաքացիական հիվանդանոց, սակայն իրավիճակի փոփոխություն չի արձանագրվել: Խումբը արձանագրել է, որ նման վիճակում գտնվող անձանց քրեակատարողական հիմնարկում խնամելը չափազանց դժվար է, քրեակատարողական հիմնարկները հարմարեցված չեն նման ծանր հիվանդներին խնամելու համար: Վերոգրյալի հիման վրա, առաջարկվել է քննարկել ծանր հիվանդության հիմքով Ա.Ա.-ին պատժից ազատելու հարցը:

Խումբը ԱՆ ստացված պատասխան գրությամբ տեղեկացել է, որ Ա.Ա.-ի հիվանդության ախտահարման աստիճանը չի համապատասխանում ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ում ընդգրկված պատիժը կրելուն խոչընդտող ծանր հիվանդությունների ցանկին:

Խմբի անդամները հերթական այցի ընթացքում պարզել են, որ 2017 թվականի դեկտեմբերի 29-ին դատապարտյալ Ա.Ա.-ն մահացել է:

Սույն գործով Ա.Ա.-ի մահվան դեպքի կապակցությամբ ընթացող քրեական գործին ներգրավվել է Խմբի անդամ կազմակերպությունը՝ ի պաշտպանություն դատապարտյալի կյանքի իրավունքի խախտման դեպքի արդյունավետ քննության ապահովման:

Նշված դեպքերը թույլ են տալիս արձանագրել, որ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ինստիտուտը արդյունավետ չի գործում, ինչը բացասաբար է անդրադառնում ինչպես դատապարտյալների, այնպես էլ քրեակատարողական

հիմնարկների վարչակազմերի վրա, քանզի վերջիններս նման դեպքերում պատշաճ բուժօգնություն ու խնամք տրամադրելու հնարավորություններ չունեն:

Սրան զուգահեռ, արձանագրվել են նաև դեպքեր, երբ անձինք պարբերաբար դիմումներ են ներկայացրել հետազոտվելու նպատակով, սակայն հիմնարկների բուժանձնակազմերի կողմից որևէ միջամտություն չի ցուցաբերվել: Եվ միայն Խմբի միջամտությունից հետո է հնարավոր եղել քայլեր ձեռնարկել:

Այս առումով պետք է նշել նաև, որ դիտորդների Խմբի և «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի համագործակցության արդյունքում հիմնադրամը պատրաստակամություն է հայտնել այցելել ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ և ազատազրկվածների շրջանում ակնաբուժական բուժզննություն անցկացնել և տրամադրել օպտիկական ակնոցներ: Խումբը 2017թ. փետրվարի 17-ին դիմել է ՀՀ ԱՆ՝ առաջարկելով նշել այն ժամանակահատվածը, որի ընթացքում բժիշկները Խմբի անդամների հետ կարող են այցելություն կատարել ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ:

Ի պատասխան՝ 2017թ. փետրվարի 27-ին Խմբին հայտնել են, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հետ աշխատանքային կարգով ձեռք է բերվել հանձայնություն ՀՀ ԱՆ-ում առաջիկայում կազմակերպել քննարկում ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ այցելությունների և հետագա համագործակցության վերաբերյալ: Պատասխան գրության մեջ տեղեկացրել են, որ այցելությունների ժամանակացույցը կքննարկվի և կհաստատվի համապատասխան քննարկումներից հետո:

Խմբի կողմից արձանագրվել է նաև դեպք, երբ պետության կողմից ժամանակին պատշաճ բուժօգնություն չտրամադրելը հանգեցրել է ազատազրկվածի մահվան:

Այսպես, 2017թ. մարտի 17-ին Խումբը ընթացիկ հաշվետվությամբ դիմել է ԱՆ՝ հայտնելով, որ Խմբին է դիմել ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի դատապարտյալ Հ.Գ.-ի մայրը և տեղեկացրել, որ իր որդին 2017թ. հունվարի 1-ից գտնվում է հացադուլի մեջ այն պատճառով, որ ՔԿՀ-ի կողմից որևէ բուժում չի ստանում և սանհանգույցից չի կարողանում օգտվել, քանի որ այն հարմարեցված չէ որոշակի առողջական խնդիրներ ունեցող անձանց համար:

Հաշվետվությանն ի պատասխան՝ ԱՆ-ից տեղեկացրել են, որ 2017թ. փետրվարի 17-ին Հ.Գ.-ն զննվել է բժշկական աշխատանքային հանձնաժողովի (ԲԱՀ) կողմից: Զննման պահին դատապարտյալը գտնվել է հացադուլի մեջ: Նա գանգատվել է ստորին վերջույթի այտուցվածությունից: Հ.Գ.-ին բացատրել են, որ այտուցները կարող են առաջացած լինել հացադուլի պատճառով սպիտակուցային փոխանակության խանգարման հետևանքով: Առաջարկել են դադարեցնել հացադուլը, սակայն նա հրաժարվել է:

2017թ. մարտի 31-ին Հ.Գ.-ն տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, որտեղից շտապ օգնության մեքենայով տեղափոխվել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն: 2017թ. ապրիլի 1-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ, որտեղ էլ 2017թ. ապրիլի 5-ին Հ.Գ.-ն մահացել է, ինչի կապակցությամբ նշանակվել է ծառայողական քննություն, սակայն որևէ ՔԿՀ վարչակազմից որևէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել:

2017թ. ապրիլի 12-ին Խումբը կրկին գրություն է ներկայացրել ԱՆ՝ հայտնելով, որ 2017թ. ապրիլի 5-ին ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում մահացել է Հ.Գ.-ն, ով ուներ մի շարք հիվանդություններ[8]: Խումբը բազմիցս հաշվետվություններ ու գրություններ է ներկայացրել արդարադատության նախարարին՝ արտահայտելով իր մտահոգությունները Հ.Գ.-ի առողջական վիճակի, պահման պայմանների և ոչ պատշաճ բժշկական օգնության տրամադրման վերաբերյալ, որոնք ստացել են նույնաբովանդակ պատասխաններ: Վերոգրյալի հիման վրա Խումբը առաջարկել է իրականացնել արդյունավետ քննություն պարզելու համար քրեակատարողական հիմնարկների

[8] http://pmg.am/hy/news/successful-cases/2017-04-28-14-34-55

կողմից իրենց պարտավորությունների բարեխիղճ կատարման հանգամանքը, ինչպես նաև ազատազրկված անձի մահվան պատճառահետևանքային կապը հնարավոր ոչ պատշաճ և ժամանակավրեպ բուժօգնության տրամադրման հետ:

Հաշվետվությանն ի պատասխան, 2017թ. մայիսի 3-ին ԱՆ-ից տեղեկացրել են, որ 2017թ. ապրիլի 5-ին ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում պատիժ կրող դատապարտյալ Հ.Գ.-ի մահվան դեպքի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով և իրականացվում է նախաքննություն:

Կարող ենք փաստել, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգում ոչ պատշաճ բժշկական միջամտություն ցուցաբերելու արդյունքում պատասխանատու անձանց պատասխանատվության չենթարկելը տարիների ընթացքում հանգեցնում է նոր մահացության դեպքերի: Մինչ Հ. Գ.-ի մահվան դեպքը՝ ՀՀ համապատասխան քրեակատարողական հիմնարկում մահացավ Արթուր Սարգսյանը (Հաց բերողը), ում մահվան հանգամանքների վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարված քննությունը չհանգեցրեց մեղավորների բացահայտմանը և պատշաճ պատժի նշանակմանը: Ամիսներ անց հաջորդեց Հ.Գ.-ի հացադուլի արդյունքում վրա հասած մահը:

Դիտորդների խմբի կողմից արձանագրվել են նաև ՔԿՀ-ներում համապատասխան բուժմասերի միմյանցից տարբերվող, որոշ տեղերում նույնիսկ մտահոգիչ պայմաններ:

Աբովյան ՔԿՀ

Երևան Կենտրոն ՔԿՀ

Արմավիր ՔԿՀ

Արմավիր ՔԿՀ-ում չնայած արձանագրվել է սարքավորումներով հագեցվածություն, ինչը դրական է գնահատվում, սակայն սանհանգույցի պայմանները խնդրահարույց են և համապատասխան կանխարգելիչ քայլեր չձեռնարկելու դեպքում նորակառույց ՔԿՀ սանիտարահիգիենիկ պայմանները ազատազրկված անձանց համար կդառնան անմարդկային:

Ներկայացված ՔԿՀ-ներից տարբերվել է Սևան ՔԿՀ-ն՝ բուժմասի ընդունելի պայմաններով և հագեցվածությամբ:

ՍՆՈՒՆԴ ԵՎ ՈՐԱԿ

Միջազգային չափանիշներ

ՄԱԿ-ի վերանայված «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» կանոն 22-ի համաձայն՝ բանտարկյալը պետք է ապահովվի իր առողջությունն ու ուժերը պահպանելու համար բավարար չափի սննդարար, լավորակ, լավ պատրաստված ու մատուցված սննդով[9]:

Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն իր հերթին սահմանել է, որ սննդակարգը հիվանդությունների կանխարգելման էական նախապայմաններից է, իսկ չափանիշներին չհամապատասխանող սնունդը կարող է նաև բազմաթիվ հիվանդությունների պատճառ հանդիսանալ, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրների[10]:

Ներպետական կարգավորումներ

ՀՀ ՔԿՕ 12-րդ հոդվածի համաձայն՝ ազատությունից զրկված անձն իրավունք ունի առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ ստանալու: Օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում ապահովվում է օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով, որի օրական միջին չափաբաժինները սահմանում է ՀՀ կառավարությունը:

ՀՀ Կառավարության 15 հոկտեմբերի 2015 թվականի 1182-Ն որոշմամբ սահմանվում է ՀՀ ԱՆ Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները[11]: Որոշմամբ սակայն չի հստակեցվում օրվա սննդի սննդարարության արժեքը, ինչպես նաև առողջության վիճակով պայմանավորված հատուկ սննդակարգի վերաբերյալ հարցերը:

Իրավիճակը ՀՀ Քրեակատարողական հիմնարկներում

Ինչպես նախորդ տարիներին, 2017 թվականին նույնպես Խումբն ուշադրության կենտրոնում է պահել քրեակատարողական հիմնարկներում սննդամթերքի պահպանման ու պատրաստման պայմանները, սննդի տարատեսակության ու մատուցման հարցերը: Քննարկվող ժամանակահատվածում առանձնակի ուշադրություն է հատկացվել նաև սննդի որակի հարցին: Մինչ որակի վերաբերյալ առկա արդյունքները ներկայացնելը, պետք է նշել, որ նախորդ տարիների համեմատ սննդի պահպանման և պատրաստման պայմանների բարելավում չի արձանագրվել: Շարունակում է մտահոգիչ մնալ խոհանոցների, սննդի պատրաստման ու պահեստավորման սենյակների խոնավությունն ու ոչ բարեկեցիկ վիճակը:Խմբի համար կրկին մտահոգիչ է մնում այն հանգամանքը, որ ազատազրկվածների մեծ մասը հրաժարվում է ընդունել ՔԿՀ պատրաստած սնունդը:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ դիտարկված քրեակատարողական հիմնարկներում սննդի պատրաստման սանիտարահիգիենիկ նորմերն ու պահանջները հիմնականում պահպանված են եղել, բոլոր դեպքերում արձանագրվել է սննդի նմուշների առկայություն:

2016 թվականի տարեկան հաշվետվության մեջ Խումբը բարձրացրել էր նաև ՔԿՀ-ից դուրս գտնվող ազատությունից զրկված անձանց սննդի ապահովման հարցը: Հղում կատարելով 2015 թվականի հոկտեմբերի 15-ի համար 1182-Ն որոշման 1-ին

[9] Վերանայված «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ» (Մանդելայի կանոնները), 2015թ., E/CN.15/2015/L.6/ Rev.1: Հասանելի է՝ https://www.unodc.org/documents/commissions/CCPCJ/ CCPCJSessions/CCPCJ24/resolutions/L6 R ev1/ECN152015_L6Rev1_e_ V1503585.pdf

[10] Հասանելի է հետևյալ հղումով՝ pdf 45 Տես http://www.euro.who.int/__data/assets/pdf_file/0004/293665/Foodsystems-correctional-settings-literature-review-case-study-ru.pdf?ua= 1

[11] Հասանելի է հետևյալ հասցեում http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101029

հավելվածին՝ խումբը ողջունել էր օրենսդրական կարգավորումները քննարկվող հարցի կապակցությամբ: Մասնավորապես, որոշմամբ սահմանվում է չորս և ավելի ժամ տևողությամբ փոխադրման դեպքում կալանավորված անձին կամ դատապարտյալին տրամադրվող սննդի չափաբաժինները: Ըստ որոշման, նման խումբ անձինք ստանում են հաց, մսի կամ ձկան պահածո, մրգահյութ և պանիր: Խումբը արձանագրել էր սակայն, որ պրակտիկայում որոշման նշված դրույթները չեն իրագործվում, ավելին, սնունդը որը տրվում է ազատազրկված անձանց, բավականին դժվարամատչելի է օգտագործման առումով[12]: Հատկանշական է, որ նույն խնդիրը արձանագրվել է նաև 2017 թվականի այցերի արդյունքում, ինչը նշանակում է, որ ՔԿՀ-ից դուրս գտնվող ազատազրկված անձանց սննդով ապահովման հարցը շարունակում է մնալ խնդրահարույց:

2017 թվականի ընթացքում ՔԿՀ-ներ կատարած պլանային և ըստ ահազանգերի այցելությունների արդյունքում Խումբը արձանագրել է սննդի հետ կապված տարբեր խնդիրներ, ինչով պայմանավորված խմբի կողմից ներկայացվել է թվով 5 գրություն: Գրություններից 3-ը վերաբերել են ՔԿՀ-ներում հավելյալ և դիետիկ սննդի բացակայությանը, 1-ը՝ օրենքով նախատեսված որոշակի սննդատեսակների բացակայության հետ, 1-ը՝ օրական աղի չափաբաժինների հետ:

1. *2017թ. ապրիլի 29-ին Խումբը ընթացիկ հաշվետվությամբ դիմել է ՀՀ ԱՆ՝ հայտնելով, որ Խմբի անդամները 2017* թվականի ապրիլի *19*-ին այցելություն են կատարել ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ: Խմբի անդամները դիտարկել են ճաշարանը և պարզել, որ այցելության օրվա դրությամբ 3 օր ՔԿՀ-ն չի ստացել ձու և միս, ինչը աշխատակիցները հիմնավորել են այն փաստով, որ Զատիկին բոլորին խաշած ձու են տվել, իսկ միս չմատակարարելը մեկնաբանել են Զատիկով պայմանավորված ոչ աշխատանքային օրով: Թեև պետք է նշել, որ ոչ աշխատանքային է եղել միայն երկուշաբթին՝ ապրիլի 17-ը: Խմբի անդամները նաև ճշտել են, որ ՔԿՀ-ում կան 19 հավելյալ սնունդ ընդունող դատապարտված/կալանավորված անձինք: Հաշվի առնելով, որ հավելյալ սննդի հիմնական մասը ձուն է, ապա ստացվում է, որ հավելյալ սնունդ ընդունող անձինք 3 օր չեն ստացել ձու և միս:

Խմբի անդամները նմանատիպ խնդիրներ արձանագրել են նաև այլ ՔԿՀ-ներում:

Բարձրացած խնդրի առնչությամբ ԱՆ-ից տեղեկացրել են, որ մսի պահածոն ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ-ում առկա է եղել առ 2017թ. ապրիլի 16-ը, իսկ հավի ձուն՝ առ 2017թ. ապրիլի 14-ը, որից հետո ապրիլ ամսին դրանք մատակարարի կողմից վերստին մատակարարվել են և տրամադրվել կալանավորված անձանց և դատապարտյալներին:

Ըստ էության ստացվում է, որ մատակարարման ժամկետներով պայմանավորված՝ ազատազրկված անձինք զրկվել են իրենց հասանելիք սննդից:

2. 2017թ. մայիսի 17-ին Խումբը ընթացիկ հաշվետվությամբ դիմել է ՀՀ ԱՆ՝ հայտնելով որ Խմբի անդամները տարբեր ՔԿՀ-ներ կատարած այցելությունների ընթացքում, զրուցելով աշխատակիցների և կալանավորված անձանց ու դատապարտյալների հետ, արձանագրել են մի քանի համակարգային խնդիրներ: Նախ, կալանավորված անձանց և դատապարտյալներին չի տրամադրվում դիետիկ սնունդ, և այդ առումով ընթացակարգերը բացակայում են[13]:

[12] Դիտորդների խմբի 2016 թվականի տարեկան հաշվետվություն, էջ 100, հասանելի է հետևյալ հղումով՝ http://pmg.am/images/%D4%B4%D5%AB%D5%BF%D5%B8%D6%80%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%A2-2016_%D5%A9-%D5%AB_%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf

[13] http://pmg.am/hy/news/successful-cases/2017-11-22-08-35-52

Հաշվետվությանն ի պատասխան՝ 2017թ. հունիսի 2-ին ՀՀ ԱՆ-ից հայտնել են[14], *որ ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի թիվ 542-Ն որոշման 4-րդ կետով սահմանվել է. «Հիմք ընդունելով բժշկի կողմից տրված եզրակացությունը կամ խորհրդատվությունը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող հղի, կերակրող մայր, անչափահաս և (կամ) հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվում է սույն որոշման N4 հավելվածով նախատեսված հավելյալ սնունդ»:*

Այսպիսով, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված նշված խմբերի կալանավորված անձանց և դատապարտյալներին հավելյալ սննդով ապահովելու խնդիրը լուծվել է:

Խումբն արձանագրում է, որ չնայած գոյություն ունեցող և հղում կատարված օրենսդրական կարգավորումներին, այնուհանդերձ պրակտիկայում դիետիկ սնունդ չի տրամադրվել:

3. Հետևողական լինելով նախորդ հաշվետվության մեջ բարձրացված խնդրին՝ Խումբը կրկին դիմել է ՀՀ ԱՆ, նշելով, որ խնդիր է բարձրացվել ոչ թե հավելյալ սննդի տրամադրման վերաբերյալ, այլ՝ դիետիկ սննդի, որոնք էապես տարբեր են, օրինակ՝ շաքարային դիաբետով տառապող անձին անհրաժեշտ է առաջին հերթին դիետիկ, այլ ոչ թե հավելյալ սնունդ: ԱՆ կողմից մատնանշված իրավական ակտում նշված են հավելյալ սննդի ընդամենը երեք տեսակներ՝ կարագ կամ բուսական յուղ *(ձեթ), պանիր և* վարսակաձավար: Մեր կարծիքով դիետիկ սննդի տեսականին պետք է լինի առավել ընդգրկուն և նշված ցանկում առկա սննդամթերքները համարժեք չեն ծածկում իրավական բացը:

Գրությանն ի պատասխան՝ Խումբը տեղեկացվել է, որ **ՀՀ Կառավարության 2015թ. հոկտեմբերի 15-ի N 1182-Ն որոշման N1 հավելվածով նախատեսված սննդատեսակներից պատրաստված համապատասխան ճաշատեսակները որպես դիետիկ սնունդ գործածելու և դրանց բաղադրատեսակներն առավել ընդգրկուն դարձնելու նպատակով ՀՀ ԱՆ ՔԿՎ-ն 2017 թ. հուլիսի 4-ին գրություն է ուղարկել ՀՀ առողջապահության նախարարություն՝ համապատասխան պարզաբանման համար:**

4. Դիտորդների Խումբը *«Նուբարաշեն» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ հանդիպել են ցմահ ազատազրկման դատապարտված Ա.Գ.-ին: Խմբի անդամներին Ա.Գ.-ն հայտնել է, որ* ունի առողջական խնդիրներ՝ ալերգիա և գաստրիտ, ձեթով կամ յուղով պատրաստված սնունդ չի կարողանում օգտագործել, խնդրել է իրեն միայն խաշած սնունդ տրամադրել, թեև ամեն անգամ խոստացել են, սակայն այդպես էլ խնդրանքը չի բավարարվել: Վերջինիս տրամադրվում է միայն հավելյալ սնունդ՝ ձեթ: Արձանագրված կապակցությամբ խումբը առաջարկել է քննարկել Ա.Գ.-*ին* դիետիկ սննդով ապահովելու հարցը:

Խումբը որպես համակարգային խնդիր առաջարկել է նաև քննարկել քրեակատարողական հիմնարկներում դիետիկ սննդի բացակայության հարցը և միջոցներ ձեռնարկել անհրաժեշտ դիետիկ սննդով ապահովելու համար:

ԱՆ-ից ստացված պատասխան գրությամբ հայտնել են, որ ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու,

[14] http://pmg.am/images/%D5%84_17-33.PDF

առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին N 825-Ն որոշման 72-րդ կետի համաձայն՝

(...) Բուժման ընթացքում գործածվում է դեղորայքային թերապիա, դիետիկ սնունդ, կիրառվում են ֆիզիոթերապևտիկ բուժման մեթոդներ, բուժական մարմնամարզություն, աշխատանքային թերապիա և բուժման գործընթացին նպաստող վերականգնողական և այլ մեթոդներ:

ՀՀ Կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական նվազագույն չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 413-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 1182-Ն որոշման հավելված 1-ով նախատեսված սննդատեսակներից պատրաստված համապատասխան ճաշատեսակները, որպես դիետիկ սնունդ գործածելու և դրանց բաղադրատեսակներն առավել ընդգրկուն դարձնելու նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը 2017 թվականի հուլիսի 4-ին գրություն է ուղարկել ՀՀ առողջապահության նախարարություն՝ համապատասխան պարզաբանման համար:

ՀՀ առողջապահության նախարարությունը 2017 թվականի օգոստոսի 17-ի թիվ 40/11-3993 գրությամբ հայտնել է հետևյալը՝

Դիետիկ սնունդ հասկացությունը սահմանված չէ սանիտարական օրենսդրությամբ, այն հանդիսանում է բուժման գործընթացի անբաժանելի մասը: Ելնելով հիվանդի ախտորոշումից՝ հիվանդության ընթացքից և հիվանդի վիճակից բուժող բժշկի կողմից նշանակվում է համապատասխան դիետա: Տարբեր հիվանդությունների ժամանակ նշանակվող դիետաներն իրարից կարող են տարբերվել իրենց քիմիական բաղադրությամբ և էներգետիկ կազմով: Ինչ վերաբերում է հղիների, կերակրող մայրերի սննդակարգին, ապա դրանք որևէ նորմատիվ իրավական ակտով հաստատված չեն և սահմանվում են հղիի նախածննդյան և հետծննդյան հսկողությունն ու բուժօգնությունը իրականացնող բժշկի կողմից՝ առաջնորդվելով իր մասնագիտական գիտելիքներով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներին տրվել է հստակ հանձնարարական՝ որոշման 72-րդ կետի գործնական կիրառում ապահովելու համար առաջնորդվել ՀՀ առողջապահության նախարարության գրության պահանջներով:

5. Դիտորդների խմբի անդամները տարբեր ՔԿՀ-ներ այցելությունների ժամանակ, դատապարտյալ և կալանավորված անձանցից դժգոհություններ են ստացել առ այն, որ ճաշատեսակների մեջ աղի պարունակությունը շատ քիչ է, որի պատճառով ճաշատեսակները ախորժելի չեն: Արձանագրվածի կապակցությամբ ՀՀ ԱՆ է ներկայացվել գրություն, առաջարկելով **վերանայել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց տրվող օրական աղի չափաբաժինը և ավելացնել այն:**

Առաջարկի կապակցությամբ ստացվել է պատասխան առ այն, որ գործնականում ճաշատեսակների մեջ կերակրի աղի չափաքանակի պակասի խնդիր առկա չէ:

Չնայած ներկայացված պատասխաններին և տրված պարզաբանումներին, Խումբը փաստում է, որ պրակտիկայում ինչպես այս, այնպես էլ դիետիկ սննդի տրամադրման խնդիրը շարունակում է մնալ արդիական:

ՔԿՀ-ներում սննդի որակի հիմնահարցերը

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը 2017թ. սննդի որակը ուսումնասիրելու նպատակով նախատեսել էր պլանային այցելությունների ժամանակ քրեակատարողական հիմնարկներից պահածոյացված մսամթերքի, յուղի, կարագի և այլ սննդամթերքի նմուշներ վերցնել՝ փորձաքննության ներկայացնելու համար:

2017թ. նոյեմբերի 13-ին Դիտորդների խումբն այս հարցով դիմել է ՀՀ արդարադատության նախարարին, սակայն առաջարկը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Դիտորդների խումբը քրեակատարողական հիմնարկներում տրամադրվող սննդի նմուշները վերցնելու և դրանք փորձաքննության ներկայացնելու իրավասություն չունի:

Մտահոգված լինելով քրեակատարողական հիմնարկներում տրամադրվող սննդամթերքի որակով՝ Խմբի անդամները 2017թ. նոյեմբերի 30-ին արդարադատության նախարարին հասցեագրված 17-85 գրությամբ ցանկացել են պարզել՝ այն փորձաքննության ենթարկվո՞ւմ է, թե՞ ոչ: Եթե այո, ապա կարևոր է ծանոթանալ փորձաքննությունների արդյունքներին, եթե ոչ՝ առաջարկվել է փորձաքննություն իրականացնել:

2017 դեկտեմբերի 29-ին թվագրված պատասխան գրությամբ նախարարությունը հայտնել է, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ մատակարարված սննդամթերքը ըստ անհրաժեշտության ենթարկվում է փորձաքննության:

Փորձաքննություններն իրականացնում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սննդի անվտանգության պետական ծառայության հանրապետական անասնաբուժասանիտարական և բուժասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը, «Մավաս գրուպ» և «Տոնուս լես» ՍՊԸ-ները:

Փորձաքննության արդյունքներ, սակայն, չեն տրամադրվել այն պատճառաբանությամբ, որ դրանց ուսումնասիրությունները դեռևս շարունակվում են:

Այդ ընթացքում 2017թ. նոյեմբերի 14-ին և 2018թ. հունվարի 12-ին համապատասխանաբար «Արթիկ» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ներ կատարած պլանային այցելությունների ժամանակ Դիտորդների խումբը պարզել է, որ այնտեղ առկա են տավարի մսի պահածոներ՝ տարբեր պիտակներով, տարբեր արտադրողների կողմից և տարբեր քաշերով:

Մասնավորապես, «Արթիկ» ՔԿՀ-ի տավարի մսի պահածոն արտադրված է «Էլիզա-Գոհար» ՍՊՀ-ի կողմից, և պիտակի վրա առկա է «ՔԿՎ պատվերով, ՔԿՀ-ի տավարի վաճառքի ենթակա չէ» նշումը:

Իսկ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի տավարի մսի պահածոն արտադրված է «Արմեն Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ի կողմից, հատկանշական է, որ պիտակի վրա բացակայում է «վաճառքի ենթակա չլինելու» մասին որևէ նշում: Այս կապակցությամբ Խումբը հայտնել է իր մտահոգությունները:

Դիտորդների խմբի գրությանն ի պատասխան՝ արդարադատության նախարարությունը պարզաբանել է, որ 2017թ. քրեակատարողական վարչության կողմից միակողմանի մասնակի լուծվել է տավարի մսի պահածո մատակարարող կազմակերպության հետ կնքված պայմանագիրը:



Պիտակների տարբերությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 28-ի N 1693-Ն որոշմամբ կազմակերպվել է հրատապ գնում՝ մեկ անձից: Մատակարարումը պետք է իրականացվեր երկու օրվա ընթացքում: Գնման հրատապության պատճառով մսի պահածոյի պիտակի վրա չի տեղադրվել «ՔԿՎ պատվերով, ՔԿՀ-ի տավարի վաճառքի ենթակա չէ» գրառումը:

Արտադրողները տարբեր են եղել, քանի որ մինչև 2017թ. նոյեմբերի 14-ը քրեակատարողական հիմնարկներ տավարի մսի պահածոյի մատակարարումը իրականացրել է «Էլիզա-Գոհար» ՍՊԸ-ն՝ մեկ կիլոգրամը 1242 ՀՀ դրամ արժեքով: Իսկ 2018թ. հունվարի 12-ից «Արմեն Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ն է տավարի մսի պահածո մատակարարել քրեակատարողական հիմնարկներ՝ մեկ կիլոգրամը 1730 ՀՀ դրամ արժեքով:

Վերոնշյալ փորձաքննության արդյունքները Դիտորդների խմբին չեն ուղարկվել մինչև 2018թ. մարտ ամիս: Փոխարենը դրանք տրամադրվել են Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՀԿ-ին, ինչից պարզ է դարձել, որ պահածոյացված միսը չի համապատասխանում կնքված պայմանագրի տեխնիկական բնութագրին[15]:

Դիտորդների խմբի անդամները 2018թ. մարտի 2-ին թիվ 18-20 գրությամբ կրկին դիմել են նախարարությանը և խնդրել են տեղեկացնել, թե արդյոք 2014-16 թթ. կատարվել են սննդի որակի փորձաքննություններ: Միաժամանակ տեղեկություններ են պահանջել առ այն, թե արդյոք անհամապատասխանություն արձանագրվել է, իսկ անհամապատասխանություն արձանագրած լինելու դեպքում արդյոք որևէ մեկը ենթարկվել է պատասխանատվության:

Վերոնշյալ գրությանն ի պատասխան՝ նախարարությունից հայտնել են, որ 2014-16թթ. քրեակատարողական վարչություն մատակարարվող սննդամթերքը փորձաքննության չի ենթարկվել, քանի որ մատակարարվող ընկերության կողմից ներկայացվել են ապրանքների որակի հավաստագրեր:

Իսկ 2017թ. ընթացքում քրեակատարողական հիմնարկներ մատակարարված պահածոյացված մսամթերքը, բուսական յուղը, սերուցքային կարագը ենթարկվել են փորձաքննության և կազմվել են փորձարկման արձանագրություններ:

Մատակարարման ենթակա «Տավարի մսի պահածո» ապրանքատեսակը չի համապատասխանել պայմանագրով նախատեսված տեխնիկական պահանջներին: Արդյունքում՝ մատակարարող ընկերության հետ կնքված պայմանագիրը միակողմանի լուծվել է, տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանող մատակարարված ապրանքը վերադարձվել է մատակարարին և վերջինս ենթարկվել է պայմանագրի գումարի 0.5 տոկոսի չափով տուգանքի: Նաև միջնորդություն է ներկայացվել գնումների բողոքարկման խորհուրդ՝ հիշյալ մատակարարող ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված ընկերությունների ցուցակում ներառելու համար:

Հավելյալ տեղեկություն, ներառյալ ներկայացված միջնորդության արդյունքների վերաբերյալ, Խմբին չի տրամադրվել:

[15] http://hcav.am/events/21-2-18-7/

ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Միջազգային չափանիշներ

Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն բազմիցս նշել է, որ բանտերում նախատեսվածից ավելի մեծ թվով բանտարկյալներ պահելը ծայրահեղ վատ է ազդում այնտեղ մատուցվող բոլոր ծառայությունների և իրականացվող միջոցառումների վրա. Նվազեցնում է, և հավանաբար զգալիորեն, բանտերում կյանքի ընդհանուր մակարդակը: Ավելին, բանտի կամ նրա որևէ մասի գերբնակեցման աստիճանը ֆիզիկական առումով ինքնըստինքյան կարող է լինել անմարդկային կամ նվաստացուցիչ[16]:

Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններով սահմանվում է, որ քրեակատարողական հիմնարկների խցերը պետք է համապատասխանեն սանիտարահիգիենիկ պահանջներին, ընդ որում առանձնահատուկ ուշադրության պետք է արժանանան կլիմայական պայմանները՝ մասնավորապես՝ նվազագույն մակերեսը, լուսավորությունը, ջեռուցումը և օդափոխությունը[17]:

Իրավիճակը ՀՀ Քրեակատարողական հիմնարկներում

Դիտորդների խմբի 14 տարվա գործունեության թիրախում, ի թիվս այլ հարցերի, մշտապես առանձնակի կարևորվել է քրեակատարողական հիմնարկների պահման պայմանները, հիմնարկների գերբնակեցման և յուրաքանչյուր ազատությունից զրկված անձին նվազագույն բնակելի տարածություն ապահովելու հարցը: 2017 թվականին նույնպես Խումբը իր ուշադրության կենտրոնում է պահել նշված հարցերը: Ցավով պետք է նշել, որ հաշվետու ժամանակաշրջանի համար ևս վերաբերելի են Խմբի կողմից նախորդ տարիներին բարձրացված և արձանագրված խնդիրները: Այսպես, պլանային և ըստ ահազանգերի կատարված այցերի ընթացքում Խումբը արձանագրել է ինչպես խցային, այնպես էլ կացարանային մտահոգիչ պայմաններ՝ կապված խոնավության, օդափոխության համակարգերի բացակայության, բնական ոչ բավարար լուսավորության, ջեռուցման, հիգիենայի պահպանման և սանիտարահիգիենիկ պահանջների ապահովման պայմանների բացակայության ու ջրամատակարարման հարցերի հետ:

Քրեակատարողական հիմնարկների հատուկ քանակակազմերը ըստ լրակազմի

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում հատուկ քանակակազմը եղել է 3833, որից 1200-ը եղել են կալանավորված անձինք: Հարկ է նշել, որ հատուկ քանակակազմը ըստ լրակազմի նույն ժամանակահատվածի համար նախատեսված է եղել 5424, որից կալանավորված անձանց թիվը՝ 1180: Այս առումով մտահոգության տեղիք է տալիս որոշ ՔԿՀ-ներում արձանագրված գերբնակեցման հարցը՝ կալանավորված անձանց մասով: Օրինակ, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում նախատեսված 550-ի փոխարեն արձանագրվել է 657 կալանավոր, «Արթիկ» ՔԿՀ-ում՝ նախատեսված 50 կալանավորի պարագայում՝ 57, «Վարդաշենում» 34-ի փոխարեն՝ 53 կալանավոր, «Գորիս» ՔԿՀ-ում 35-ի փոխարեն՝ 54 կալանավոր, «ԴՀ»-ում նախատեսված 6-ի փոխարեն՝ 26 կալանավոր:

---

[16] Խոշտանգումների և անմարդկային կամարժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (ԽԿԿ), Inf(92)3-part2

[17] Վերանայված «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ» (Մանդելայի կանոնները), 2015 թ., կանոն 13, E/

Քրեակատարողական հիմնարկների հատուկ քանակակազմն ու դրա թվաքանակը ներկայացվում է ստորև.

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակը				
ՔԿՀ	Հատուկ քանակակազմը ըստ լրակազմի 01.01.2017թ.դրությամբ	Հատուկ քանակակազմի թվաքանակը 01.01.2017թ. դրությամբ	Հատուկ քանակակազմը ըստ լրակազմի 01.01.2018թ. դրությամբ	Հատուկ քանակակազմի թվաքանակը 01.01.2018թ. դրությամբ
«Նուբարաշեն»	820, որից 550 կալ.	825, որից 657 կալ.	780, որից 590 կալ.	792, որից 676 կալ.
«Երևան-Կենտրոն»	60, որից 45 կալ.	40, որից 34 կալ.	60, որից 45 կալ.	42, որից 35 կալ.
«Արթիկ»	373, որից 50 կալ.	352, որից 57 կալ.	373, որից 50 կալ.	306, որից 54 կալ.
«Վանաձոր»	245, որից 80 կալ.	197, որից 47 կալ.	245, որից 80 կալ.	208, որից 67 կալ.
«Վարդաշեն»	339, որից 34 կալ.	239, որից 53 կալ.	339, որից 34 կալ.	214, որից 69 կալ.
«Գորիս»	215, որից 35 կալ.	119, որից 54 կալ.	182, որից 50 կալ.	95, որից 30 կալ.
«Աբովյան»	265, որից 100 կալ.	164, որից 44 կալ.	265, որից 100 կալ.	129, որից 41 կալ.
«Սևան»	548	484	548	365
«Կոշ»	640	457	640	322
«ԴՀ»	464, որից 6 կալ.	107, որից 26 կալ.	464, որից 6 կալ.	149. որից 51 կալ.
«Հրազդան»	215, որից 80 կալ.	201, որից 56 կալ.	215, որից 80 կալ.	204, որից 79 կալ.
«Արմավիր»	1240, որից 200 կալ.	648, որից 172 կալ.	1240, որից 200 կալ.	710, որից 195 կալ.
Ընդամենը	5424, որից 1180 կալ.	3833, որից 1200 կալ.	5351, որից 1235 կալ.	3536, որից 1297 կալ.

2017 թվականին արձանագրված պահման պայմանների խնդիրներն ու մտահոգությունները առավել ցայտուն կերպով կարելի է ներկայացնել հետևյալ ՔԿՀ-ների օրինակով:

<u>Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկ</u>

2017թ. հունվարի 21-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդների Խմբի անդամները ահազանգի հիման վրա այցելություն են կատարել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ: Այցելության ընթացքում Խմբի անդամները զրուցել են 1-ին հարկում գտնվող թիվ 2 խցի ազատազրկվածներ Ա. Հ.-ի, Ա. Ս.-ի, Օ.Շ.-ի, Կ.Ս.-ի և .Ս.-ի հետ: Վերջիններս տեղեկացրել են, որ վարչակազմի ներկայացուցիչների հետ կոնֆլիկտ է առաջացել այն պատճառով, որ իրենք այդ օրը չեն ցանկացել տեղափոխվել հինգերորդ հարկում գտնվող թիվ 89 խուց: Ազատազրկվածները նշել են, որ դեպքից մի քանի օր առաջ ՄԻՊ-ի գրասենյակից այցելություն են կատարել իրենց խուց, որից հետո ՔԿՀ-ի աշխատակիցները տեղեկացրել են, որ այդ հարկի խցերը փակվելու են, և որոշում է կայացվել իրենց խուցը տեղափոխել հինգերորդ հարկ: Իրենք գնացել և տեսել են տվյալ խուցը և ժամանակ են խնդրել վարչակազմից մինչև փետրվարի 5-ը, որպեսզի սեփական միջոցներով վերանորոգեն խուցը, սակայն վարչակազմը ժամանակ չի տրամադրել, նշելով, որ այն կարող են վերանորոգել այդ խցում գտնվելով: Միևնույն ժամանակ, ազատազրկվածները տեղեկացրել են, որ 5-րդ հարկի խցի պատուհանը փոքր է (թեև պետք է նշել, որ ՔԿՀ-ի աշխատակիցները խոստացել են գարնանը մեծացնել այն):

Քանի որ ՔԿՀ-ի աշխատակիցները տեղափոխման համար ժամանակ չեն տրամադրել, իրենք սառնարանը քաշել են դռան դիմաց, որպեսզի աշխատակիցները ներս չմտնեն ու ինքնավնասումներ են կատարել: Ազատազրկվածները բացատրել են, որ դա արել են, որպեսզի իրենց ծեծի չենթարկեն: Ինքնավնասումներ կատարած ազատազրկված

անձինք նշել են, որ տևական ժամանակ է խնդրել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի թեստ անցկացնել, քանի որ կասկածներ ունեն, որ իրենցից մի քանիսի մոտ կա վարակ, սակայն մինչև օրս նման հետազոտություն չի անցկացվել:

Խմբի անդամները այցելել են նաև թիվ 89 խուց ստուգելու խցի պայմանները: Խցում բետոնե հատակից ամրացված են եղել 5 երկհարկանի մահճակալ, պատուհանը փոքր է եղել, բնական լուսավորությունը վատ: Զուգարանի պատը խոնավությունից քանդված էր, զուգարանը վերանորոգման կարիք ուներ: Խուցը 2-րդ խցի համեմատ չոր է եղել:

ՔԿՀ-ի աշխատակիցները տեղեկացրին, որ տվյալ խցի դատապարտյալներին իրենք դեռևս հունվարի 13-ին են տեղեկացրել, որ պետք է տեղափոխվեն, և նրանց ժամանակ են տրամադրել, որպեսզի իրենց միջոցներով վերանորոգեն խուցը, սակայն մինչ օրս որևէ քայլ չի ձեռնարկվել, ուստի հունվարի 20-ին պահանջել են տեղափոխվել և վերանորոգել, երբ հնարավորություն կունենան:

ԱՆ 27.02.2017 թվականին ստացված պատասխան գրությամբ տեղեկացվել է, որ 89 խուցը մասնակի վերանորոգվել է և բնակեցվել 23.01.2017թ.: Խցի մակերեսը կազմում է 30մ^2, իսկ վերանորոգման աշխատանքները շարունակվում են: Խցում առկա է բնական լուսավորության համար նախատեսված պատուհան, որի հավելյալ ճաղավանդակը հանվել է՝ առավել լուսավորություն ապահովելու նպատակով: Խցի սանհանգույցը գտնվում է բարվոք վիճակում: Առաստաղը ամբողջությամբ, իսկ պատերը կիսով չափ ներկվել են: Խցում պահվող անձինք ապահովված են անհատական քնելատեղերով և անկողնային պարագաներով:

Խումբը 2017թ. հունվարի 23-ին դիմել է ԱՆ, որտեղ նշել է նաև ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի թիվ 89 խցում վերանորոգման աշխատանքներ կազմակերպելու անհրաժեշտության վերաբերյալ:

2017 թ. մարտի 3-ին Խմբի անդամները կրկին այցելել են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ, որտեղ դիտարկել են նաև թիվ 89 խուցը և արձանագրել, որ նշված խցում վերանորոգման աշխատանքներ տեղի չեն ունեցել: Ասվածի ապացույցը խցի դիտարկման ընթացքում դիտորդների կողմից արված լուսանկարներն են[18]:

Վերոգրյալի հիման վրա՝ Խումբը իր մտահոգությունն է հայտնել առ այն, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի թիվ 89 խցի պայմանները հանգեցնում են անազատության մեջ պահվող անձանց հանդեպ վատ վերաբերմունքի և կոչ է արել քայլեր ձեռնարկել թիվ 89 խցի վերանորոգման աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ:

ԱՆ-ն կրկին տեղեկացրել է, որ հունվարի 21-ի առաջին այցելությունից հետո ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿՀ-ի թիվ 89 խցում վերանորոգման աշխատանքներ են իրականացվել միայն բնակելի հատվածում հարդարման տեսքով, ինչը արտացոլված չէ Խմբի գրությանը կից ներկայացված լուսանկարներում:

Նուբարաշեն ՔԿՀ-ի 89-րդ խցի բնակելի մակերեսն ու սանհանգույցը ամբողջությամբ վերանորոգելու և հարդարելու նպատակով 2017թ. ապրիլի 4-ին տրամադրվել են շինարարական նյութեր: Նշված խցում 2017թ. ապրիլի 21-ի դրությամբ իրականացվել են վերանորոգման աշխատանքներ:

2017թ. ապրիլի 26-ին Խումբն ընթացիկ հաշվետվությամբ դիմել է ՀՀ ԱՆ՝ հայտնելով, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ դիտորդները

18 http://pmg.am/hy/news/successful-cases/89

հայտնաբերել են, որ 1-ին հարկի թիվ 7 կարանտինային խցին հարող միջանցքում տիրում է գարշահոտություն և խոնավություն, այդ հատվածը գտնվում է քարուքանդ վիճակում և այդ մասով անցնելն արդեն իսկ մեծ տհաճություն է պատճառում:

Վերոգրյալի հիման վրա Խումբն առաջարկել է քայլեր ձեռնարկել նշված հատվածը բարեկարգելու և թիվ 7 կարանտինային խուցը փակելու ուղղությամբ:

ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿՀ, թիվ 7 կարանտինային խուց

Հաշվետվությանն ի պատասխան՝ 2017թ. մայիսի 6-ին ՀՀ ԱՆ-ից տեղեկացրել են, որ նշված հատվածում կոյուղաջրերը խցանված են եղել, և խցերի զուգարաններից կեղտաջրերը լցվել են միջանցք, ինչն էլ հանգեցրել է միջանցքի և խցերի կեղտոտ լինելուն և գարշահոտությանը: Այդ կապակցությամբ հիմնարկի կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում հատուկ ծառայությունների և տեխնիկայի միջոցով վերացվել են համապատասխան խնդիրները, մաքրվել, լվացվել և ախտահանվել են խցերը և միջանցքը:

Հարկ է նշել նաև, որ հիմնարկում կարանտինային խցերի առկայությունը խիստ անհրաժեշտություն է, և մեկ խուց փակելը կհանգեցնի հիմնարկի բնականոն աշխատանքի խափանմանը:

Ինչ վերաբերում է միջանցքի պատերի վերանորոգմանը, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջանցքը նկուղային հարկում է, և պատերը ամբողջությամբ խոնավ են, հարդարման աշխատանքներ դեռևս հնարավոր չէ իրականացնել[19]:

4.2. 2017թ. մայիսի 12-ին Խումբը ընթացիկ հաշվետվությամբ դիմել էր ՀՀ ԱՆ՝ հայտնելով, որ Խմբի անդամները 2017թ. մայիսի 5-ին այցելություն են կատարել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ: Այցելության ժամանակ դիտորդների Խմբի անդամները արձանագրել են, որ ՔԿՀ-ի 1-ին հարկերում տիրում է գարշահոտություն և խոնավություն,

[19] http://pmg.am/hy/news/successful-cases/1

պատերից ծեփը թափված է, այդ հատվածները քարուքանդ վիճակում են, առկա են հակասանիտարահիգիենիկ պայմաններ: Կարելի է ասել, որ թե՛ աշխատողները, թե՛ 1-ին հարկում գտնվող կալանավորված անձինք և դատապարտյալները գտնվում են անմարդկային պայմաններում:

Վերոգրյալի հիման վրա Խումբն առաջարկել է քննարկել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի 1-ին հարկում գտնվող խցերը և մասնաշենքերը շահագործումից հանելու հարցը:

Հաշվետվությանն ի պատասխան՝ 2017թ. հունիսի 19-ին ՀՀ ԱՆ-ից պատասխանել են, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի թիվ 3 ռեժիմային մասնաշենքի առաջին հարկում գտնվող բանտախցերը չեն շահագործվում, բացառությամբ պատժախցերի և կարանտինային խցերի, որոնք շահագործումից հանել հնարավոր չէ՝ հիմնարկում տվյալ ռեժիմներին համապատասխան տարածքի բացակայության պատճառով:

Միաժամանակ, հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի կողմից ներկայացված տեղեկանքի համաձայն՝ առաջին հարկում գտնվող թիվ 7, 8, 9 և 10 կարանտինային խցերին հարող միջանցքով անցնող ջրահեռացման համակարգի խցանման հետևանքով առաջացած խնդիրները լուծվել են, մասնավորապես՝ խցերը և միջանցքները մաքրվել և ախտահանվել են: Նաև հայտնել են, որ քրեակատարողական ծառայության կողմից հայտարարվել է անհրաժեշտ շինարարական նյութերի ձեռքբերման մրցույթ՝ առաջին հարկում հարդարման և վերանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով:

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ, 1-ին հարկ, 4-րդ խուց

Նուբարաշեն ՔԿՀ 1-ին հարկ խուց 5-րդ



Նուբարաշեն ՔԿՀ 1-ին հարկ խուց 6-րդ



Նուբարաշեն ՔԿՀ 1-ին հարկ հացադուլ հայտարարած անձանց համար նախատեսված խուց.

Այցելության պահին խցում երկու հացադուլավոր էին, սենյակը կեղտոտ էր: Պատճառը, ըստ հացադուլ հայտարարած անձանց, այն էր, որ ՔԿՀ-ի վարչակազմը ավել չի տրամադրում՝ մաքրություն կատարելու համար:

Հացադուլավորների խուց



ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿՀ, 1-ին հարկ, միջանցք

Միջանցքում՝ այս հարկ մտնելիս, դիտորդները նկատել են այրված լարեր, ինչը հրդեհի արդյունք է եղել: Ուշագրավն այն է, որ այդ լարերը անվտանգության տեսախցիկների լարերն են և արդեն տևական ժամանակ է, ինչ դրանք այրված են: Կարելի է ենթադրել, որ անվտանգության տեսախցիկների կեսից ավելին չեն աշխատում:



Նուբարաշեն ՔԿՀ 1-ին հարկի հսկիչի աշխատասենյակ.

Նուբարաշեն ՔԿՀ-ի 1-ին հարկում մշտապես նկատվել է գարշահոտություն, ջրահեռացման համակարգի արտահոսք:

Խումբը 2017թ. մայիսի 12-ին թիվ 17-32 ընթացիկ հաշվետվությամբ մտահոգություն էր հայտնել՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի 1-ին հարկի պայմանների վերաբերյալ և առաջարկել էր քննարկել այդ խցերը շահագործումից հանելու հարցը:

Հաշվետվությանն ի պատասխան, 19.06.2017թ. թիվ 04/16.1/10345-17 գրությամբ տեղեկացել է, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի առաջին հարկում գտնվող

բանտախցերը չեն շահագործվում, բացառությամբ պատժախցերի և կարանտինային խցերի, որոնք շահագործումից հանել հնարավոր չէ՝ հիմնարկում տվյալ ռեժիմներին համապատասխան տարածքի բացակայության պատճառով: Միաժամանակ տեղեկացրել են, որ կարանտինային խցերին հարող միջանցքով անցնող ջրահեռացման համակարգի խցանման հետևանքով առաջացած խնդիրները լուծվել են, մասնավորապես՝ խցերը և միջանցքները մաքրվել և ախտահարվել են:

2017թ. հունիսի 22-ին ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ Դիտորդների խմբի անդամներն արձանագրել են, որ նշված հատվածում, բացի պատժախցերից և կարանտինային խցերից, գործել է նաև հացադուլավորների համար նախատեսված խուցը: Դիտորդների այցելության պահին այնտեղ գտնվել են 6 ազատազրկված անձինք: Նշված խցում և միջանցքում տիրում էր գարշահոտություն, խուցը խոնավ էր, օդափոխություն չկար: Հացադուլի մեջ գտնվող անձինք լինում են ավելի հյուծված, օդափոխության բացակայությունը և խցի խոնավությունը նշված անձանց վիճակն ավելի են ծանրացնում: Խումբը գտել է, որ նշված հանգամանքները համակցության մեջ հանգեցնում են հացադուլի մեջ գտնվող անձանց նկատմամբ անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:

Վերոգրյալի հիման վրա, առաջարկվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում հացադուլավորների համար առանձնացնել այլ խուց՝ ավելի բարվոք պայմաններով, և որը չի գտնվի հիմնարկի առաջին հարկում:

2017թ. հուլիսի 19-ի ԱՆ պատասխան գրությամբ Խումբը տեղեկացել է, որ ՀՀ ԱՆ ՔԿՎ-ի կողմից ներկայացված տեղեկանքի համաձայն ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿՀ-ի շահագործվող խցերի գերբեռնվածությունը ներկայումս թույլ չի տալիս հիմնարկի այլ մասնաշենքերը օգտագործել հացադուլ իրականացնող ազատազրկված անձանց առանձնացված պահելու համար:

Միաժամանակ հայտնել են, ներկայումս քննարկումներ են ընթանում վերոնշյալ հարցի հնարավոր լուծման ուղղությամբ:

Խմբի կողմից 2017թ. դեկտեմբերի 2-ին կազմակերպվել է այց ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ: Այցելության ժամանակ դիտարկվել են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի 1-ին հարկի խցերը: Արձանագրվել է, որ այդ հատվածում տեսախցիկների մեծ մասը չէր աշխատում: Ըստ աշխատակիցների՝ 1-ին հարկում բնակվում էին նաև այն անձինք, որոնք խցակիցների հետ ունեն խնդիրներ և նրանց հետ չեն ցանկանում բնակվել, այդ պատճառով նշված անձանց ժամանակավորապես տեղափոխում են 1-ին հարկի խցեր: Նշված խցերից էր թիվ 4 խուցը, որտեղ գտնվում էր 1 անձ, նշված խուցը խոնավ էր: Խմբի անդամները այցելել են նաև թիվ 04 խուցը, որտեղ գտնվում էին հացադուլ հայտարարած անձինք: Նշված խցերում առկա էին հակասանիտարահիգիենիկ պայմաններ: ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի 1-ին հարկի խցերի անմարդկային պայմանների վերաբերյալ խումբը բազմիցս անդրադարձել է, սակայն նախարարությունից տեղեկացրել են, որ ՔԿՀ-ի ծանրաբեռնվածության պատճառով այդ խցերը հնարավոր չէ շահագործումից հանել:

Խոսելով Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկի մասին, պետք է վերհիշել դեռևս 2016 թվականին ԽԿԿ կողմից 2015 թվականի այցի արդյունքում ՀՀ իշխանություններին ներկայացված զեկույցը, որտեղ բարձրացվել են Նուբարաշեն ՔԿՀ-ում առկա խնդիրները և որպես լուծում քննարկվել է նաև այս հիմնարկի փոխարեն մեկ այլ, նոր քրեակատարողական հիմնարկ կառուցելու հարցը[20]:

[20] CPT/Inf (2016) 31, Report to the Armenian Government on the visit to Armenia carried

ԳՈՐԻՍ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

2017թ. հունիսի 20-ին Խումբը ընթացիկ հաշվետվությամբ դիմել է ՀՀ ԱՆ՝ հայտնելով, որ Խմբի անդամները ՀՀ ԱՆ «Գորիս» ՔԿՀ այցելության ժամանակ արձանագրել են հետևյալ խնդիրները, մասնավորապես՝ ՔԿՀ-ի շենքային պայմանների անբարեկարգություն, պատերը խոնավություն և բորբոսների առկայություն, հացի արտադրամասի սանիտարահիգիենիկ անմխիթար վիճակ: Նման իրավիճակից անմասն չէ նաև ՔԿՀ-ի ճաշարանը: Առհասարակ ամբողջ հաստատությունը գտնվում է վատ վիճակում, ներառյալ աշխատակիցների աշխատասենյակները:

Ինչ վերաբերում է սննդի մասով դիտարկումներին, ապա պետք է նշել, որ ՔԿՀ-ի կողմից ստացված հավկիթը չունի նշում պիտանելիության ժամկետի վերաբերյալ, առկա էր միայն արտադրման օրը, որը 16-օրյա վաղեմություն ուներ: Այս առումով պետք է նշել, որ ՀՀ Կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի Ն 1438-ն որոշումը սահմանում է ձվի արտադրությանը, մակնշմանը, փաթեթավորմանը, պահմանը, փոխադրմանը, իրացմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջները: Որոշման համաձայն՝ մակնշումը պետք է լինի հայերենով կամ հայերեն և այլ լեզուներով՝ ըստ մատակարարման պայմանագրի, պարզ, հստակ ու ընթեռնելի, իսկ տառերի ու թվերի բարձրությունը պետք լինի 3 մմ-ից ոչ պակաս[21]:

Կերակրատեսակների նմուշները չունեին պիտակներ նմուշառման ժամի, օրվա և ամսվա վերաբերյալ: Հավելյալ սնունդ ստանում են երկու դատապարտյալներ, որոնց օրական չափաբաժնի մեջ է մտնում նաև կարագը, սակայն այցելության պահին դիտորդներն արձանագրել են, որ կարագի վրա բորբոս է եղել: Աշխատակիցների պնդմամբ հավելյալ սնունդ ստացող դատապարտյալներին հասանելիք կարագի մի քանի ամսվա չափաբաժինը միանգամից են ստանում, ինչի պատճառով էլ նման խնդիր է առաջանում: Վերոգրյալի հիման վրա Խումբն առաջարկել է քննարկել արձանագրված խնդիրները՝ հետագայում իրավիճակը շտկելու նպատակով:

Հաշվետվությանն ի պատասխան՝ 2017թ. հուլիսի 27-ին ՀՀ ԱՆ-ից տեղեկացրել են, որ հիմնարկը հիմնադրվել է 1812թ.: Շինության հիմքերն ամբողջությամբ քայքայված են, ինչը նպաստում է նստվածքի առաջացմանը, որի պատճառով էլ կրող կոնստրուկցիաները և կոմունիկացիոն ցանցերը վնասվել են: Մթնոլորտային տեղումների և կոմունիկացիոն ցանցերից դուրս մղված ջրերի հետևանքով ամբողջ շինության պատերը գերհագեցված են խոնավությամբ, քանի որ բացակայում է հիդրոմեկուսիչ շերտը: Շենք-շինությունները վթարային վիճակում են և նրանց կապիտալ վերանորոգման աշխատանքները նպատակահարմար չեն: ՀՀ քաղաքաշինության մասնագետները կարծիք են հայտնել, որ նշված վերանորոգման աշխատանքները վերջնական չեն կարգավորի առաջացած խնդիրը, քանի որ հետագայում կրկին վերանորոգման աշխատանքների անհրաժեշտություն կառաջանա: Այդ իսկ պատճառով 2010թ. ՀՀ քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրի շրջանակներում ՀՀ ԱՆ ՔԿՎ-ի կողմից պատվիրվել են նախագծա-նախահաշվարկային փաստաթղթեր, ձեռք է բերվել տարածք նոր քրեակատարողական հիմնարկ կառուցելու համար:

Խմբի անդամների՝ քրեակատարողական հիմնարկ այցելության օրվա դրությամբ, հիմնարկի պահեստում առկա հավկիթները, համաձայն դրանց վրա առկա թողարկման ամսաթվի նշման, ունեին 16 օրվա վաղեմություն: Հավկիթների պահպանման ժամկետ է սահմանվել 25 օր: Նշված ապրանքատեսակը դեռևս գտնվում էր օգտագործման համար թույլատրելի ժամկետի մեջ:

---

out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 5 to 15 October 2015

[21] http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=93057

Կերակրատեսակների նմուշները պահվում են սառնարանում, իսկ նմուշառման ժամի, օրվա և ամսվա վերաբերյալ պիտակները ինքնասոսնձվող թղթից են, որոնց վրա կատարվում է գրառում և սոսնձվում նմուշառման ժամանակ և հետո տեղադրվում են սառնարանում, այդ պատճառով տաք և սառը ջերմաստիճաններից պիտակները պոկվել էին: Կարագի վրա բորբոսի առկայությունը պայմանավորված է եղել սառնարանի անսարքությամբ: Սառնարանի դուռը հերմետիկ չփակվելու և տաք օդը ներթափանցելու պատճառով սառնարանում դրված կարագի արտաքին մակերեսի վրա տեղ-տեղ առաջացել են բորբոսանման հետքեր: Արձանագրված թերությունների վերաբերյալ քննարկվել և ձեռք են բերվել նմուշառման նոր պիտակներ, սառնարանի անսարքությունը շտկվել է, ինչպես նաև տրվել են հանձնարարականներ հետագայում նման թերությունները բացառելու և սննդամթերքի պահպանման կանոնները պահելու վերաբերյալ:

Այս երկհարկանի շինությունը Գորիս ՔԿՀ-ն է, որտեղ պահվում են կալանավորված և դատապարտված անձինք.



Միջանցք Պատժախուց

Գորիս Քրեակատարողական հիմնարկի հացի արտադրամաս:

Գորիս քրեակատարողական հիմնարկի հսկիչի աշխատասենյակ.

Հարկ է նշել, որ այստեղ պայմանները խնդրահարույց են ոչ միայն ազատազրկված անձանց, այլ նաև հիմնարկի աշխատակիցների համար: Ավելին, հիմնարկի աշխատակիցները չունեն բավարար աշխատանքային և հանգստի պայմաններ:

Գորիս քրեակատարողական հիմնարկի բուժմաս.

Հավելյալ սնունդ ստացող անձանց համար նախատեսված կարագ.

Կարտոֆիլ մաքրելու սարք.

Գորիս Քրեակատարողական հիմնարկի խոհանոցային պայմաններ.

Ի տարբերություն մնացած քրեակատարողական հիմնարկների՝ ՀՀ ԱՆ «Գորիս» ՔԿՀ-ի՝ այս պայմաններում պատրաստվող սնունդն ավելի համեղ և ախորժելի էր, քան մնացած քրեակատարողական հիմնարկների սնունդը: Այս ՔԿՀ-ում գրեթե սնունդ չի թափվում.



Զբոսահրապարակ.

Գորիս ՔԿՀ-ում դատապարտյալների կողմից պատրաստված աղոթքի վայր.

«ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ.

2017թ. հունիսի 20-ին Խումբը ընթացիկ հաշվետվությամբ դիմել է ՀՀ ԱՆ՝ հայտնելով, որ Խմբի անդամները ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ այցելության ժամանակ արձանագրել են մի քանի խնդիրներ:

1) Խմբի անդամները դիտարկել են Ա.Ս.-ի, Ա.Լ.-ի, Ա.Հ.-ի և Խ.Գ.-ի պահման պայմանները: Դիտարկումների համաձայն՝ մասնաշենքի 1-ին հարկը, որտեղ պահվում էին նշված անձինք, ուներ 1 միջանցք և 5 հիվանդասենյակներ, որոնք նախատեսված էին մեկական անձի համար, և 1 ընդհանուր զուգարան: Այդ մասնաշենքում կենտրոնական օդափոխության համակարգը բացակայում էր, օդափոխությունը կատարվում էր պատուհանները բացելու միջոցով: Սակայն սենյակների դռների փակ լինելու պատճառով օդի շրջանառությունը լիարժեք չէր կատարվում, ինչի արդյունքում սենյակներում օդը հեղձուցիչ էր դառնում: Սենյակներում չկան զուգարաններ և հոսող ջուր: Ըստ ազատազրկված անձանց՝ հսկիչին կանչելու դեպքում արագ արձագանքում է, սակայն խնդիր լինում է հիմնականում առավոտյան, երբ կանչերը շատ են լինում, իսկ հսկիչների թիվը ավելի փոքր է: Այդ իսկ պատճառով՝ հիվանդները ստիպված են լինում մոտ 10 րոպե սպասել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ ՔԿՀ-ում պահվում են միայն հիվանդություն ունեցող դատապարտյալներ և կալանավորված անձինք, Խումբն առաջարկել է հիվանդասենյակներն ապահովել լրացուցիչ օդափոխության սարքերով և սենյակներում տեղադրել սանհանգույցներ:

2) Խմբի անդամները հանդիպել են Ա.Ս.-ին: Վերջինս հայտնել է, որ շուրջ 3 ամիս է, ինչ գտնվում է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում, սակայն մինչև օրս որևէ բժշկական օգնություն չի ստացել: Նույնիսկ համարժեք դեղորայքներ չի ստացել, այն դեպքում, երբ, ըստ նախնական ախտորոշման, տառապում է ֆուռենկուլյոզ հիվանդությամբ: Նրա գլխի և մարմնի տարբեր հատվածներում կային թարախային գոյացություններ: Ա.Ս.-ի վերաբերյալ ՔԿՀ-ի պետը հայտնել է, որ արդեն հանձնարարություններ է տվել, և Ա.Ս.-ն կստանա անհրաժեշտ բուժումը: Նշվածի կապակցությամբ Խումբն իր հերթին նույնպես առաջարկել է Ա.Ս.-ին ժամանակին ապահովել պատշաճ և անհրաժեշտ բուժօգնությամբ:

Հաշվետվությանն ի պատասխան՝ 2017թ. հուլիսի 25-ին ՀՀ ԱՆ-ից տեղեկացրել են, որ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի կալանավորված անձանց Ա.Ս.-ի, Ա.Լ.-ի և Ա.Հ.-ի հիվանդասենյակներում առկա պատուհանները բավարար օդափոխություն և լուսավորություն են ապահովում հիվանդասենյակի համար: Բաժանմունքը, որտեղ պահվում են վերոնշյալ կալանավորված անձինք, բաղկացած է իրար մոտ տեղակայված մի քանի հիվանդասենյակներից և փոքր տարածք է զբաղեցնում, որի արդյունքում կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից պահակակետի ծառայողին կանչելու հնարավորությունը առավելագույնս հասանելի է, այդ թվում նաև զուգարան ուղեկցելու նպատակով:

Ա.Ս.-ի բժշկական օգնություն չստանալու վերաբերյալ մասնավորապես հայտնել են, որ 2017թ. հունիսի 19-ին վերջինս տեղափոխվել է թիվ 1 համալսարանական կլինիկայի ալեգոլոգիական բաժանմունք, որտեղ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում կազմակերպվել է անհրաժեշտ հետազոտությունը և նշանակվել է համապատասխան բուժում: 2017թ. հունիսի 22-ին Ա.Ս.-ն տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, որտեղ շարունակում է ստանալ նշանակված բուժումը:

Ինչ վերաբերում է Ա.Ս.-ին, ապա ԱՆ-ն գրությամբ հայտնել է, որ որևէ փաստաթղթի բացակայության դեպքում անձը կալանավորվածներին պահելու վայր կամ ուղղիչ հիմնարկ չի ընդունվում: Վերջինս 2017թ. հունիսին 29-ին բացատրություն է տվել այն մասին, որ անձնական իրերի և իրեն պատժախուց տեղափոխելու հետ կապված որևէ խնդիրներ չունի:

Դատապարտյալների հիվանդանոց ՔԿՀ, խոհանոց.



Դատապարտյալների հիվանդանոց ՔԿՀ, սանհանգույց.

Տեսակցության սենյակներ

ԱՐԹԻԿ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Խմբի կողմից Արթիկ ՔԿՀ այցի ընթացքում արձանագրվել են ոչ բարվոք վիճակում գտնվող խցեր, միևնույն ժամանակ՝ նկատվել է ազատազրկված անձանց պահման պայմանների միջև մեծ տարբերություն՝ կապված վերջիններիս սոցիալական պայմանների հետ:

Այսպես, ՔԿՀ առաջին հարկում դիտարկված խցերում պատերի ծեփը և առաստաղը քանդված են եղել խոնավության պատճառով, սանհանգույցը գտնվել է անմխիթար վիճակում, խցերի վարդակները եղել են պատերից դուրս եկած վիճակում և վտանգ պարունակել անձանց համար:

Արթիկ ՔԿՀ, 1-ին հարկ, 6-րդ խուց

Ի տարբերություն առաջին հարկերի ոչ բարվոք վիճակում գտնվող խցերի՝ ՔԿՀ 2-րդ հարկում պահման պայմանները եղել են շատ ավելի լավ: Այդ խցերում պատիժ կրել են սոցիալապես ավելի ապահովված անձինք: Խումբը արձանագրել է, որ կախված սոցիալական վիճակից՝ հնարավոր է ՔԿՀ-ում պատիժ կրելիս առավել լավ պայմաններ ունենալ:

Արթիկ ՔԿՀ, 2-րդ հարկ, 9-րդ խուց



Նույն իրավիճակն արձանագրվել է նաև կիսաբաց ռեժիմի որոշ կացարաններում, որտեղ պայմանները աննկարագրելիորեն ավելի լավն են եղել, ինչը իհարկե ողջունելի է, սակայն մտահոգիչ՝ նույն ՔԿՀ-ում գտնվող ավելի վատ պայմաններով կացարանների հետ համեմատությամբ: Քանզի պետության հսկողության տակ գտնվող յուրաքանչյուր անձ պետք է անձի արժանապատվությանը համապատասխանող պայմաններում պատիժ կրի:

Արթիկ ՔԿՀ, կիսաբաց ռեժիմ, կացարան 21



Այցի ընթացքում խումբը դիտարկել է նաև ՔԿՀ պատժախցային մասնաշենքը, որտեղ գտնվում են պատժախցերը, հացադուլ հայտարարած անձանց համար նախատեսված խցերը, ինքնամեկուսացվածները, որոշ դեպքերում նաև կարանտինում գտնվող անձինք:

Այդ հատվածում օդափոխության համակարգ չի նկատվել, հատկանշական է, որ խցերը եղել են թույլատրելիից ավելի տաք, սակայն խցում պահվող անձը ինքնուրույն չի կարող կառավարել ջեռուցման կենտրոնացված համակարգը:

Այդ հատվածում դիտարկված խցերի մեծամասնությունը վերանորոգման կարիք ունի, անմխիթար վիճակում է նաև վարչակազմի համար նախատեսված աշխատասենյակը և սանհանգույցը:

Պատժախցային մասնաշենք (ԽՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ)

Դրական է գնահատվել ՔԿՀ 5-րդ մասնաշենքում գտնվող տեխնիկապես հագեցած մարզասրահը, ինչը հնարավոր է եղել պատրաստել ոչ թե պետության միջոցների հաշվին, այլ բարերարների օգնությամբ: Նմանապես, ողջունելի են ՔԿՀ երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակների պայմանները:

Մարզասրահ

ՀՀ ԱՆ Արթիկ ՔԿՀ, Երկարատև տեսակցության սենյակ

Սրան զուգահեռ, խիստ մտահոգության տեղիք է տալիս ՔԿՀ աշխատակիցների համար գոյություն ունեցող պայմաններն ու հնարավորությունները:

Արթիկ ՔԿՀ-ի պատժախցային մասնաշենք

Հսկիչի աշխատասենյակ

Արմավիր ՔԿՀ

Արմավիր քրեակատարողական հիմնարկ այցի ընթացքում խումբը դիտարկել է ՔԿՀ ընդհանուր շենքային պայմաններն ու առանձին հատվածները՝ խոհանոց, գրադարան, արհեստանոց, լվացքատուն, սննդի պահեստներ: Հարկ է նշել, որ ՔԿՀ որոշ հատվածներ դրական են գնահատվել ինչպես պայմանների, այնպես էլ հագեցվածության առումով: Խոսքը վերաբերում է մասնավորապես գրադարանին, լվացքատանը, արհեստանոցին:

Արմավիր ՔԿՀ, լվացքատուն

Արմավիր ՔԿՀ, արհեստանոց

Սննդի պահեստ

Մտահոգության տեղիք է տվել սակայն ՔԿՀ դիտարկված մեկուսարանի խցերը: Այսպես, Խմբի դիտարկումների համաձայն, խցերում պահարանների դռները կոտրված են եղել, առաստաղի լույսերը ամբողջությամբ չեն գործել, խցի պատերը, ներառյալ նաև սանհանգույցինը, խոնավությունից մաշված և բորբոսնած են եղել:

Արմավիր ՔԿՀ, մեկուսարան



Արձանագրվածը խնդրահարույց է հատկապես այն պատճառով, որ ՔԿՀ-ն հանդիսանում է նոր շինություն, սակայն արդեն իսկ նկատելի են նման խնդիրներ:

Իրականացված այցերի ընթացքում դիտորդների Խմբի կողմից առանձնակի ուշադրության են արժանացել «Սևան» ՔԿՀ-ի տեսակցությունների սենյակները, որոնք, մի կողմից ողջունելի են, մյուս կողմից ի ցույց են դնում տիրող անհավասար պայմանները՝ կախված ազատազրկված անձանց սոցիալական պայմաններից: Ինչպես տեղեկացրել են ազատազրկված անձինք, առավել լավ պայմաններով սենյակները կահավորվել և նորոգվել են իրենց իսկ միջոցներով և «դրսի» աջակցությամբ:

Սևան ՔԿՀ, երկարատև տեսակցությունների սենյակներ





ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

Միջազգային ստանդարտներ

Ընդհանուր կանոնի համաձայն՝ ազատազրկումը ստեղծում է այնպիսի իրավիճակ, որում ազատությունից զրկված անձը իր առօրյա բոլոր կարիքների ապահովման համար կախվածության մեջ է ընկնում հիմնարկի վարչակազմից: Ըստ այդմ, քրեակատարողական հիմնարկների վարչակազմերը պետք է հնարավորինս ապահով և մարդկային միջավայրում երաշխավորեն ազատազրկման կրումը տանելի դարձնելու համար: Այս առումով առաջնային է համարվում հնարավոր չարաշահումների և կոռուպցիոն ռիսկերի բացառումը վարչակազմերի և ազատազրկված անձանց կողմից, ինչը պահանջում է բարձր մակարդակի հսկողություն:

Միավորված ազգերի կազմակերպության՝ «Բանտերում հակակոռուպցիոն քայլերի» ձեռնարկի մեջ սահմանվել է, որ փակ հաստատություններում կոռուպցիոն դրսևորումները անվտանգության լուրջ խնդիրներ են ստեղծում ինչպես ազատազրկվածների, այնպես էլ վարչակազմի համար[22]:

ՄԱԿ-ի «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները» սահմանում են ազատազրկման վայրերում վերահսկողության բոլոր ոլորտները, ներառյալ նաև կոռուպցիոն դրսևորումները հաղթահարելու քայլերը: Ըստ այդմ, կանոնների 4-րդ[23] կետի համաձայն՝ «Ազատազրկման տեսքով պատժի կամ նմանատիպ այլ միջոցի նպատակն ու արդարացումը հասարակությանը հանցագործությունների պաշտպանելն է: Այս նպատակին հնարավոր է հասնել, եթե ազատազրկման ընթացքը օգտագործվում է ազատազրկվածի հասարակություն վերաինտեգրման և օրինապահ ապրելակերպի ձևավորմանը նպաստելու համար»: Կանոնը վերահաստատում է այն փաստ, որ ազատազրկումն օգտագործվում է հանցագործություններից պաշտպանելու և կրկնահանցագործությունը նվազեցնելու համար, ինչը պահանջում է անվտանգ, ապահով և արժանավայել միջավայր, ինչպես նաև գործուն քայլեր ազատազրկվածի սոցիալական վերաինտեգրմանը նպաստելու համար: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ ազատազրկման վայրում առկա են կոռուպցիոն դրսևորումներ, ապա վերաինտեգրման համար ստեղծվում են լրացուցիչ խոչընդոտներ:

Նման խնդիրներից և դրսևորումներից խուսափելու համար պահանջվում է ոչ միայն ազատությունից զրկված անձի կարիքների ու ռիսկերի գնահատում, այլ նաև համապատասխան վերականգնողական ծրագրերի ու պահանջներին բավարարող միջավայրի ապահովում ու բանտային հմուտ վարչակազմի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացում:

Իրավիճակը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում

Հայաստանյան ՔԿՀ-ներում գտնվող անձանցից Դիտորդական խումբն իր գործունեության ողջ ընթացքում ստացել է բազմաթիվ տեղեկություններ այն մասին, որ ՔԿՀ-ներում տարբեր խնդիրների լուծման կամ արտոնություններից օգտվելու համար կատարվում են որոշակի վճարումներ, օգտագործվում են բարեկամական կապերը և նմանատիպ այլ երևույթներ, որոնք բնութագրվում են որպես կոռուպցիոն դրսևորումներ[24]:

---

[22] The United Nations Convention against Corruption, Handbook on Anti-Corruption Measures in prisons

[23] United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (the Nelson Mandela Rules)

[24] Նմանատիպ տեղեկություններ փոխանցվել/ում են խմբին հիմնականում

2013-ից ի վեր Դիտորդական խումբը խորացված դիտարկել է ՀՀ ՔԿՀ-ում առկա կոռուպցիոն խնդիրները՝ ուսումնասիրելով դրա դրսևորումներն ինչպես մակրո-, այնպես էլ միկրո-մակարդակներում:

2014-2015թթ. Դիտորդական խումբն իրականացրել է կոռուպցիոն դրսևորումների մակրո-մակարդակի ուսումնասիրություն[25]: Իսկ 2016թ. իրականացվել է կոռուպցիայի խնդրի միկրո-մակարդակի մանրակրկիտ ուսումնասիրություն, որի արդյունքները համեմատվել են 2013-ի իրականացված նույնատիպ ուսումնասիրության արդյունքների հետ[26]: Ուսումնասիրության համադրելիությունն ապահովելու համար 2016-ի., 2013թ. պես, ընտրվել է «Նուբարաշեն» ՔԿՀ-ն: Տվյալ ՔԿՀ-ում պահվում են կալանավորված անձինք, ցմահ դատապարտյալներ, դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո վերաբաշխման սպասողներ, նախկին զինվորական կամ ոստիկանության համակարգում աշխատած անձինք, օտարերկրյա քաղաքացիներ և այլ անձինք:

Արդեն իսկ մշակված և կիրառված մեթոդաբանությամբ 2017թ. նույնպես իրականացվել է ուսումնասիրություն[27], որն ի հայտ է բերել այն, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում գրեթե փոփոխություններ տեղի չեն ունեցել՝ 2016 հետ համեմատած: Գրեթե փոփոխություններ չեն եղել ինչպես կոռուպցիոն դրսևորումների մակարդակի նվազեցման առումով, այնպես էլ ՔԿՀ-ում առկա կոռուպցիոն «սակագնային ցուցակի» մեջ: Այդ իսկ պատճառով նախորդ տարիներին կատարված ուսումնասիրությունների արդյունքները չկրկնելու համար այս տարի կանդրադառնանք միայն կոռուպցիայի դրսևորումներին մի քանի կոնկրետ ոլորտներում:

Առողջապահություն

Հարցվածների (ՔԿՀ-ում պահվողների կամ նրանց ազգականների) մեծ մասը նշել է, որ բժշկական ծառայությունից օգտվում են հիմնականում առաջնային բուժօգնություն ստանալու կամ քրոնիկական հիվանդությունների սրացման դեպքերում:

Թե 2016 թ. և թե 2017թ. ստացված տվյալների համաձայն՝ ՔԿՀ-ի բուժկետում 1 ամիս գտնվելու համար կալանավորված անձը կամ դատապարտյալը հիմնականում վճարում է ամսական մոտ 90.000 ՀՀ դրամ: 2013 թ. այդ «ծառայության» արժեքը 50.000-60.000 ՀՀ դրամ էր: Եթե ՔԿՀ-ում պահվող անձին անհրաժեշտ է տեղափոխել քաղաքացիական հիվանդանոց հետազոտվելու համար[28], ապա նրան տեղափոխող աշխատակիցներին (պահակախումբ) նա վճարում է հիմնականում 5000 ՀՀ դրամ և/կամ բենզինի գումարը (այս արժեքը նույնն է բոլոր տարիներին): 2016-2017թթ. տվյալներով՝ քաղաքացիական հիվանդանոց տեղափոխելու թույլտվություն ստանալու համար վճարը կազմել է 200-250

«Նուբարաշեն», «Կոշ», «Սևան», «Արթիկ», «Վանաձոր», «Արմավիր» ՔԿՀ-ներից:

[25] Տես ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2014-2015 թվականների գործունեության հաշվետվությունը, էջ 64: Հասնելի է http://pmg.am/images/2014-2015_PMG_Annual_report.pdf

[26] Տես ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2013 թվականի գործունեության հաշվետվությունը, էջ 23-27: Հասանելի է http://pmg.am/images/PMG_report_2013.pdf

[27] Ուսումնասիրության տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ազազրկված անձինք, որոնք 2017թ. գտնվել են «Նուբարաշեն» ՔԿՀ-ում, և/կամ նրանց ազգականները

[28] Քաղաքացիական հիվանդանոցում հետազոտվելը ներառում է միայն ոչ հրատապ դեպքերը:

ԱՄՆ դոլար (համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 1 ԱՄՆ դոլարը 480.5 ՀՀ դրամ էր)[29], «ԴՀ» ՔԿՀ տեղափոխվելու համար՝ 240.000-480.000 ՀՀ դրամ, իսկ «ԴՀ» ՔԿՀ-ում մեկ ամիս գտնվելու համար վճարվում է 50.000-70.000 ՀՀ դրամ[30]:

Կապն արտաքին աշխարհի հետ

Ըստ 2017թ. հարցվածներից ստացված տվյալների՝ հավելյալ տեսակցության իրավունքի համար, որպես կանոն, անհրաժեշտ է լինում վճարել 20.000 ՀՀ դրամ (2016թ.՝ 5000-10.000 ՀՀ դրամ): Որոշ դեպքերում տեսակցության համար արտոնյալ պայմանների՝ առանց հերթ կանգնելու և ավելի հարմարավետ պայմաններում տեսակցելու (երկարատև տեսակցության սենյակում) համար նույնպես գումար են վճարվում՝ 40.000-50.000 ՀՀ դրամ: Այս «դրույքաչափերը» նույն էին և՛ 2013 թ. և՛ 2016 թ.:

Հարցվածների գերակշռող մասը արտաքին աշխարհի հետ շփման համար առավել նախընտրում է որպես կապի միջոց օգտագործել բջջային հեռախոսը, քան օգտվել քարտաֆոնային հեռախոսից (տակսոֆոն):

2013 թ. բջջային հեռախոսը ՔԿՀ մտցնելու գինը 5000-10.000 ՀՀ դրամ էր, իսկ վերջին տարիներին (2016 և 2017թթ.) այդ «ծառայության» արժեքը բարձրացել է՝ կազմելով 30.000-50.000 ՀՀ դրամ: Ընդ որում, 30.000 ՀՀ դրամը վճարվում է հասարակ բջջային հեռախոսների համար, իսկ 50.000 ՀՀ դրամը՝ բջջային հեռախոսի, որով հնարավոր էր օգտվել համացանցից (ինտերնետից):

Խուզարկության դեպքում կալանավորված անձի և/կամ դատապարտյալի մոտ բջջային հեռախոս հայտնաբերելու և առգրավելու դեպքում գումար է վճարվում այն վերադարձնելու համար՝ 10.000-15.000 ՀՀ դրամի չափով:

Ըստ ստացված տվյալների՝ նույնիսկ այն դեպքում, երբ անձը կատարում է բոլոր «պահանջվող» վճարումները, նա պարբերաբար ՔԿՀ-ի աշխատակիցներին անվերադարձ մեկ հասարակ բջջային հեռախոս է հանձնում՝ բջջային հեռախոսների հայտնաբերման և առգրավման դրական վիճակագրությունն ապահովվելու համար:
Նշենք նաև, որ ՔԿՀ-ում պահվող անձինք, որպես կանոն, չեն օգտվում նամակագրության իրենց իրավունքից: Գրավոր հաղորդակցությունը հիմնականում կիրառվում է իրենց քրեական գործերով տարբեր ատյաններ դիմումներ ուղարկելիս:

Այսպիսով, 2013 թ., 2016 թ. և 2017թ. ուսումնասիրությունների արդյունքները «Նուբարաշեն» ՔԿՀ-ի օրինակով ցույց տվեցին, որ կոռուպցիոն դրսևորումները ՔԿՀ-ում ոչ միայն չեն վերացել, այլև որոշ դեպքերում նույնիսկ տեղի է ունեցել վճարումների դրույքաչափերի աճ՝ 2013-ի համեմատ:

2017թ. կոռուպցիայի դեմ պայքարի միակ դրսևորումը եղել է «Վանաձոր» ՔԿՀ-ում: 2017թ. աշնանը ՀՀ ԱԱԾ կողմից ձերբակալվել են «Վանաձոր» ՔԿՀ-ի 5 ղեկավար պաշտոնատար անձինք և նրանց կաշառք տալուն օժանդակած անձը[31]: Այս գործի շրջանակում կատարված բացահայտումները ի ցույց արեցին ՔԿՀ-ում առկա կոռուպցիոն համակարգի մեխանիզմները և սկզբունքները: 2018թ. դիտարկումների արդյունքում

[29] Հասանելի է http://www.armstat.am/am/?id=17010&nid=126

[30] «ԴՀ» ՔԿՀ տեղափոխելու համար 50.000-70.000 ՀՀ դրամ վճարվում է այն դեպքում, եթե ազատությունից զրկված անձն առողջ է: Իսկ եթե նա ունի առողջական խնդիրներ, ապա «գումարը կազմում է մոտ 25.000 ՀՀ դրամ:

[31] http://hetq.am/arm/news/82557/korupcion-hancagortsutyunner-katarelu-kaskatsanqov-dzerbakalvel-en-vanadzor-qkh-i-xekavar-pashtonyaner.html

պարզ կդառնա, թե որքանով «Վանաձոր» ՔԿՀ-ում տեղի ունեցած բացահայտումները բերեցին տվյալ հիմնարկում կոռուպցիայի մակարդակի նվազեցմանը կամ այդ խնդրի լուծմանն առհասարակ:

Չնայած Վանաձորում ձեռնարկված հակակոռուպցիոն դրսևորումների, որոնց արդյունավետությունը կգնահատվի հետագայում, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում կոռուպցիայի ուղղությամբ ոչ միայն դրական փոփոխություններ չեն նկատվում, այլ նաև տարեցտարի տեղի է ունենում «մատուցվող ծառայությունների» սակագների աճի: Գնաճը մասնավորապես հիմնավորվում է նրանով, որ կոռուպցիոն դրսևորումները համակարգային խնդիրներ են, և հայտարարվող հակակոռուպցիոն գործողությունները դեռևս չեն տվել իրենց արդյունքները: Ուստի և առաջարկվում է խնդիրները լուծելու համար իրականացնել իրատեսական և համակարգային բարեփոխումներ:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ: ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ

Միջազգային ստանդարտներ

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային փաստաթղթերը պարտավորեցնում են պետություններին իրենց վերահսկողության ներքո գտնվող բոլոր ազատազրկված անձանց համար ապահովել պաշտպանություն և խնամք: Քրեական արդարադատության համակարգում նույնասեռականները այս առումով համարվում են ծայրահեղ խոցելի խումբ, ինչը պահանջում է համապատասխան քաղաքականության և ծրագրերի մշակում՝ վերջիններիս կարիքների ապահովման համար, ինչպես նաև հնարավոր վիկտիմիզացիայից խուսափելու նպատակով:

Գոյություն ունեցող մարդու իրավունքների պաշտպանության բոլոր փաստաթղթերը[32]առանց որևէ վերապահության և տարբերակման վերաբերում են բոլոր ազատազրկվածներին: Ավելին, այս փաստաթղթերում տեղ գտած հավասարության սկզբունքը պահանջում է դրական գործողությունների ձեռնարկում՝ խոցելի խմբերի, ներառյալ նույնասեռականների նկատմամբ հնարավոր խտրականության դրսևորումները բացառելու համար:

Ավելին, Սեռական կողմնորոշման և Գենդերային ինքնության վերաբերյալ միջազգային մարդու իրավունքների կիրառման Յոգյակարտյան սկզբունքների 9-րդ կետի սահմանում է, որ «Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի նկատմամբ պետք է արժանապատվությունը հարգող վերաբերմունք ցուցաբերվի: Սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը յուրաքանչյուր անձի արժանապատվության անբաժանելի մասն են կազմում[33]»:

ՄԱԿ-ի Հատուկ կարիքներով դատապարտյալների վերաբերյալ ձեռնարկով սահմանվում է[34], որ նույնասեռական համարվող ազատազրկված անձանց հիմնական կարիքը սեռական շահագործումից պաշտպանված լինելն է, ինչը հիմնականում հնարավոր է տեղի ունենա այլ դատապարտյալների կողմից: Ինչ վերաբերում է վերջիններիս նկատմամբ խտրական դրսևորումներին, ապա խնդրահարույց է դիտարկվում հատկապես իրավաբանական օգնություն տրամադրելու հարցը, քանզի գոյություն ունեցող խորը կարծրատիպերը խոչընդոտում են այս խումբ անձանց ապահովել պատշաճ իրավաբանական օգնությամբ:

Ընդունված մոտեցումների համաձայն կարևորվում է նաև նման խումբ անձանց պատշաճ հոգեբանական օգնության և հոգեբանական ծրագրերի տրամադրումը, հատկապես եթե վերջիններս հանդիսանում են սեռական բնույթի հանցագործությունների և խտրականության զոհ կամ տեղի է ունեցել արժանապտվությունը նվաստացնելու դրսևորումներ:

---

[32] Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիր, Քաղաքական և Քաղաքացիական իրավունքների մասին Դաշնագիր, Խոշտանգումների դեմ պայքարի ՄԱԿ-ի Կոնվենցիա, ՄԱԿ-ի Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ և այլն:

[33] The Yogyakarta Principles on the Application of International Human Rights Law in relation to Sexual Orientation and Gender Identity.

[34] UN Office on Drugs and Crime, Handbook on Prisoners with special needs, 2009

Իրավիճակը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում

Խոցելի խմբերի մեջ ներառվում են հիմնականում հատուկ բժշկական օգնություն և/կամ խնամք պահանջող ազատազրկված անձանց, ԼԳԲՏԻ անձանց, ինչպես նաև «քրեական» օրենքներին չենթարկվող կամ դրանք խախտած և որոշակի հանցագործություն կատարած ազատազրկված անձինք: Նշված խմբերի խոցելիությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ բացի ՔԿՀ-ում բոլոր ազատազրկված անձանց համար ընդհանուր խնդիրներից, խոցելի խմբերը բախվում են նաև՝ իրենց որոշակի կարգավիճակով (կողմնորոշմամբ կամ հիվանդությամբ) պայմանավորված, խնդիրների և հանդիսանում են առավել խարանված խումբը քրեակատարողական համակարգում:

Հաշվետու շրջանում առանձնակի ուսումնասիրության են ենթարկվել ԼԳԲՏԻ անձինք:

Նույնասեռականներ

Վերջին տարիների ընթացքում ՀՀ քրեակատարողական հիմնարկներում տիրող իրավիճակը՝ կապված սեռական վարքագիծ ունեցող տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդկանց և սեռական կողմնորոշում ունեցող՝ գեյ, բի և տրասգենդեր մարդկանց մասով, մնացել է անփոփոխ:

Ավելին, շարունակվում և խորանում է խարանն ու խտրականությունը և համատարած խոշտանգումները նույնասեռական համարվող ազատազրկվածների նկատմամբ: Ինչը բացատրվում է այդ խմբին պատկանող ազատազրկվածների սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ: Շարունակում է մտահոգիչ մնալ նույնասեռականների աշխատանքային շահագործումը, ինչն արդեն ընդունված պրակտիկա է մի շարք քրեակատարողական հիմնարկներում:

Առաջին և ամենատեսանելի խտրական վերաբերմունքը ի հայտ է գալիս նույնասեռական անձանց խոցելի խմբերի համար նախատեսված խցերում պահելու փաստով, որոնք գրեթե բոլոր ՔԿՀ-ներում գտնվում են անբարենպաստ պայմաններում, այն է՝

- Կոտրված ապակիներով պատուհաններ (օրինակ՝ «Նուբարաշեն» ՔԿՀ)
- Անսարք վարդակներ
- Անկայուն սենյակային ջերմաստիճան
- Ոչ հիգիենիկ վիճակ
- Կոտրված մահճակալներ
- Ամբողջովին չվերանորոգված խցեր:

ՔԿՀ-ում առավել և ամենախոցելի կարգավիճակում են գտնվում հատկապես նույնասեռական համարվող անձինք: Այս խմբի բոլոր ներկայացուցիչները պահվում են իրենց համար նախատեսած խցերում, որոնք հիմնականում տարբերվում են նույն ՔԿՀ-ի այլ խցերից իրենց անշուքությամբ և ոչ բարվոք վիճակով: Հարկ է նշել, որ նույն խցում և կարգավիճակում գտնվողներից ոչ բոլորն են հանդիսացել իրականում նույնասեռական՝ մինչև ազատազրկումը[35]: Ըստ ՔԿՀ-ի աշխատակիցների՝ նույնասեռական անձանց տեղափոխում են նույնասեռականների համար նախատեսված խցեր, նույնասեռական

[35] Հարկ ենք համարում նշել, որ «քրեական» չգրված օրենքների համաձայն նույնասեռական անձի հետ սեռական հարաբերություն ունեցող հետերոսեքսուալ տղամարդը, որը սեռական ակտի ժամանակ հանդես է եկել «տղամարդու» դերում, չի դիտարկվում որպես SUS/նույնասեռական անձ:

(չնայած ինչպես արդեն նշեցինք. միշտ չէ, որ այդ անձինք նույնասեռական են լինում մինչև ազատազրկումը) դատապատյալների և/կամ կալանավորված անձանց գրավոր դիմումների համաձայն, որոնց մեջ որպես հիմք նրանք նշում են իրենց սեռական կողմնորոշումը և պատիժը այլոց հետ նույն խցում կրելու անհնար լինելու փաստը: Եվ ըստ նույն աշխատակիցների՝ դա արվում է նրանց անվտանգությունը ապահովելու նպատակներից ելնելով, մասնավորապես՝ զերծ պահելով վերջիններիս շահագործումից, սեռական և այլ տիպի բռնությունից, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից և այլնից:

Այս խումբը ինչպես նաև որոշակի հանցագործություններ կատարած անձանց և հանցագործ կաննոներ և/կամ նորմեր խախտած, և/կամ այդ կանոններով չառաջնորդվող անձանց խմբերը նույնպես ենթարկվում են հոգեբանական ճնշումների և որոշ դեպքերում սեռական բռնությունների՝/ոտնձգությունների/ և շահագործման՝ այլ ազատազրկված անձանց կողմից: Նույնասեռական անձինք նույնպես թե՛ ՔԿՀ-ի աշխատակիցների, թե այլ ազատազրկվածների կողմից բնորոշվում են տարբեր բացասական և նվաստացնող բնութագրումներով և ներգրավվում են նվաստացնող աշխատանքներում[2][36] (այլ ազատազրկված անձանց կողմից այդպես են բնութագրվում որոշ աշխատանքներ ՔԿՀ-ներում): Համաձայն ՔԿՀ-ների աշխատակիցների՝ այս տիպի աշխատանքներում խոցելի խմբերը և հատկապես այդ խմբերից նույնասեռականները իրենց դիմումների համաձայն են ընդգրկվում, մինչդեռ նման իրավիճակը ՀՀ գրեթե բոլոր ՔԿՀ-ներում համատարած բնույթ է կրում (բացառությամբ «Վարդաշեն» ՔԿՀ-ի), ինչը իր հերթին հիմք է տալիս կարծելու, որ այդ դիմումները սեփական նախաձեռնությամբ չեն ներկայացվում:

Չնայած բազմիցս ՔԿՀ-ների աշխատակիցները զգուշացվել են, որ նույնասեռական և այլ խոցելի խմբերի անձանց պիտակավորումը համարվում է վիրավորանք, արժանապատվությունը նսեմացնող փաստ և ատելության խոսք, այնուամենայնիվ, դիտորդական գործունեության ընթացքում խումբը պարբերաբար արձանագրել է ՔԿՀ աշխատակիցների կողմից բացասական և նվաստացնող բնութագրումների ներկայացումը այս խումբ անձանց նկատմամբ:

Համաձայն ՔԿՀ-ների աշխատակիցների՝ դատապարտյալներն ու կալանավորները ցանկություն չունեն «նման» մարդկանց հետ շփվել և օգտվել նույն սպասքից: Բանտային չգրված օրենքների համաձայն, եթե հետերոսեքսուալ անձը շփվում է նույնասեռական անձի հետ, ապա նա «կոտրվում» է և զրկվում է «նորմալ մարդ» կարգավիճակից: Այս հանգամանքները առավել խոցելի են դարձնում տվյալ խմբի ներկայացուցիչներին և հետագայում կարող են բերել հասարակություն վերաինտեգրման բարդությունների:

Այսպիսով՝ խոցելի խմբերը ակամա կրկնակի պատիժ են կրում ՔԿՀ-ներում՝ ի տարբերություն այլ ազատազրկվածների: Այս կամ այլ խոցելի խմբի ներկայացուցիչ լինելը բերում է, կամ հիմք է ստեղծում այդ անձանց նվաստեցմանը, խոշտանգմանը, հոգեբանական ճնշմանը, առողջությանը վնաս հացնելուն և շահագործմանը:

Եվ այսպիսի վերաբերմունք տեղի է ունենում չնայած այն հանգամանքին, որ Յոգյակարտյան 9–րդ սկզբունքի համաձայն պետությունները հնարավորինս ապահովում

[36] ՔԿՀ-ների տարածքի մաքրում, խցերի մաքրում, աղբի թափում, զուգարանների և սանհանգույցի մաքրում և այլն: ՀՀ կառավարության 3 օգոստոսի 2006 թվականի թիվ 1543-Ն որոշման համաձայն յուրաքանչյուր կալանավորված կամ դատապարտյալ անձ պետք է պահի իր անձնական հիգիենայի կանոնները, սակայն նույնասեռական անձանց հանձնարարվում և պարտադրվում է կատարել զուգարանի և լողասենյակի մաքրություն, աղբահանություն, տարածքի մաքրություն:

են բոլոր դատապարտյալների մասնակցությունն իրենց պահման մասին որոշումների կայացմանը, որը կհամապատասխանի իրենց սեռական կողմնորոշմանն ու գենդերային ինքնությանը, ապահովում են պաշտպանության միջոցներ բոլոր դատապարտյալների համար, ովքեր կարող են խոցելի լինել բռնության կամ անթույլատրելի վերաբերմունքի դրսևորման տեսանկյունից սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով, ինչպես նաև ողջամիտ սահմաններում ապահովում են, որպեսզի այդ պաշտպանության միջոցները չուղեկցվեն ավելի շատ սահմանափակումներով, քան դրանք սովորաբար կիրառվում են այլ ազատազրկվածների նկատմամբ:

Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունը պետք է ջանքեր ներդնի թե ՔԿՀ-ների աշխատակիցների, թե դատապարտյալների / կալանավորների կրթական գիտելիքների բարձրացմանը նույնասեռական անձանց և այլ խոցելի խմբերի վերաբերյալ և ձեռնարկի միջոցներ՝ ուղղված խտրականության մերժմանը և դրանից բխող հետևանքների կանխարգելմանը:

Անհանդուրժող վերաբերմունքի, ատելության խոսքի և խարանի ու խտրականության առկայությունը թե՛ կալանավորների/դատապարտյալների, թե՛ ՔԿՀ աշխատակիցների կողմից հանգեցնում է ԽՏՐԱԿԱՆ վերաբերմունքի նույնասեռական անձանց և այլ խոցելի խմբերի ներկայացուցիչների նկատմամբ, ինչը պայմանավորված է վերջիններիս մասին կարծրատիպային և կանխակալ, հանցավոր աշխարհի կողմից որպես «նորմ» ընդունված չգրված օրենքներով և ՀՀ-ում խտրականությունը դատապարտող օրենքի բացակայությամբ:

ԿԱՆԱՅՔ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ

Միջազգային չափանիշներ

Բանտում գտնվող կանայք կենսաբանական և սոցիալական դերով պայմանավորված, տարբերվող կարիքներ ունեցող խումբ են: Հաճախ կանայք առանձնակի խոցելիություն ունեն՝ պայմանավորված նաև իրենց սոցիալական վիճակով և մշակութային դերերով: Առկա է կանանց ներհատուկ կարիքներն անուշադրության մատնելու ռիսկ՝ հատկապես հաշվի առնելով, որ նրանք բանտարկյալների մեջ փոքրամասնական խումբ են հանդիսանում: Կին բանտարկյալների հետ աշխատելիս կարևոր է հաշվի առնել մի շարք գործոններ, մասնավորապես՝ բանտարկումից առաջ նրանց կրած հնարավոր ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական բռնությունը՝ ներառյալ ընտանեկան բռնությունը, հոգեկան առողջության կարիքների բարձր մակարդակի առկայությունը, թմրադեղերից կամ ալկոհոլից կախվածության մակարդակը, առողջական որոշակի, օրինակ՝ վերարտադրողական կարիքները, երեխաների և/կամ ընտանիքի անդամների խնամքն իրականացնելու պարտականությունները, ինչպես նաև ազատվելուց հետո զոհայնացվելու և ընտանիքների կողմից լքվելու բարձր հավանականությունը:

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԽԿԿ) անդրադարձել է ազատազրկված կանանց առանձնահատկություններին՝ մշակելով չափանիշներ: ԽԿԿ չափանիշները պետք է դիտարկել միջազգային այնպիսի փաստաթղթերի համատեքստում, ինչպիսիք են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի նախադեպային որոշումները, Եվրոպայի խորհրդի Եվրոպական բանտային կանոնները[37], Կին բանտարկյալների հետ վարվեցողության և կին իրավախախտների նկատմամբ կիրառվող՝ «Ազատազրկված կանանց նկատմամբ վերաբերմունքի և կանանց նկատմամբ այլընտրանքային պատժամիջոցների վերաբերյալ» ՄԱԿ-ի կանոնները (Բանգկոկյան կանոններ)[38] և «Բանտարկյալների հետ վարվեցողության» ՄԱԿ-ի ստանդարտ նվազագույն կանոնները (Նելսոն Մանդելայի կանոններ)[39]:

Այս փաստաթղթերում սահմանվում են կանանց պահման պայմանների և նրանց նկատմամբ վերաբերմունքի չափանիշներ, որոնք պետությունները պետք է ներդնեն և կիրառեն ազատազրկված կանանց պահման համար նախատեսված հաստատություններում /առողջությանը, անձնական հիգիենային, արտաքին աշխարհի հետ կապին, երեխաների խնամքին, անվտանգությանը, ՔԿՀ անձնակազմի վերապատրաստմանը վերաբերող հարցեր/: Բանգկոկի կանոնները խրախուսում են պետություններին ներդնել կանանց համար այլընտրանքային պատիժների պրակտիկա՝ առաջարկելով սահմանել «սեռի հատկանիշներով պայմանավորված առանձնահատուկ միջոցներ»:

ՀՀ-ում կին և անչափահաս ազատազրկվածների համար նախատեսված է մեկ քրեակատարողական հիմնարկ, այն է՝ «Աբովյան» ՔԿՀ-ն:

[37] Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006) 2 հանձնարարականը, ընդունվել է 2006 թվականի հունվարի 11-ին:

[38] Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի թիվ 65/229 բանաձևը, ընդունվել է 2010 թվականի դեկտեմբերի 21-ին:

[39] Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի թիվ 70/175 բանաձևը, հավելված, ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 17-ին:

Պահման պայմաններ, պատշաճ կացարան

Այցերի ընթացքում խումբը բացահայտել է, որ կալանավորվածների պահման վայր հանդիսացող մասնաշենքը խոնավ է, հատակը՝ բետոնից, առաստաղներին ու պատերին առկա են եղել բորբոսանման ծածկույթներ: Ակնհայտորեն կա շենքի մաշվածության խնդիր, որը երևում է նաև լուսանկարներում:

Նշվածի առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 73-րդ հոդվածով հստակ ամրագրված է, որ ուղղիչ հիմնարկում դատապարտյալին հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ չափանիշներին, ինչպես նաև ապահովի նրա առողջության պահպանումը: Միևնույն ժամանակ Եվրոպական բանտային կանոնների 19.1-րդ կանոնով էլ սահմանվում է, որ անազատության մեջ պահելու վայրերի տարածքները պետք է մշտապես պահվեն մաքուր և պատշաճ վիճակում: Ակնհայտ է, որ նման պայմաններն ոչ միայն չեն համապատասխանում ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված նույնիսկ նվազագույն չափանիշներին, այլև իրական վտանգ են սպառնում անազատության մեջ գտնվող անձանց առողջության պահպանման համար:

Պատշաճ հիգիենա և բուժօգնություն
Հիգիենա

Կանանց բնորոշ հիգիենայի կարիքները պետք է հավուր պատշաճի հոգալ: Հատկապես կարևոր է սանիտարական և լվացվելու հարմարությունների անարգել հասանելիությունը, հիգիենայի անհրաժեշտ պարագաների (սանիտարական սրբիչների և տամպոնների) համարժեք քանակության առկայությունը և արյան հետքեր կրող իրերի անվտանգ հեռացումը: Բանտում կանանց համար դրանց առկայությունը չապահովելն ինքնին կարող է հավասարազոր լինել նվաստացուցիչ վերաբերմունքի[40]:

Խցերում, որտեղ պատիժը կրում են կին դատապարտյալներ, կան սանհանգույցներ, որտեղ կա նաև շուրջօրյա ջրամատակարարում, սակայն կանայք չեն կարողանում հարմարավետ հոգալ իրենց հիգիենայի հարցերը՝ մշտական տաք ջրի բացակայության պատճառով:

[40] ԽԿԿ-ի գործունեության վերաբերյալ 10-րդ ընդհանուր զեկույց, պարբ. 31: Էստոնիա.2012 թվականի այցելություն, պարբ. 60:

Առհասարակ, անձնական հիգիենայի պահպանումը մեծ նշանակություն ունի ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ կանանց ֆիզիկական և հոգեկան առողջության և բարեկեցության համար: Հարկ է ընդգծել, որ Եվրոպական բանտային կանոնների 19.4-րդ կանոնի համաձայն՝ պետք է համարժեք հնարավորություններ ստեղծել, որպեսզի ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ կարողանա կլիմային համապատասխան ջերմաստիճանի պայմաններում ցնցուղ ընդունել կամ լողանալ, ընդ որում՝ հնարավորության դեպքում ամեն օր, սակայն շաբաթն առնվազն երկու անգամ: Նշված կանոնների 19.7-րդ կանոնով էլ ամրագրվում է, որ հատուկ պայմաններ պետք է ապահովվեն կանանց սանիտարական կարիքների համար[41:]

Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտ է նկատել, որ թեև ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի №1543-Ն որոշման հավելվածի 36-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր կալանավորված անձ կամ դատապարտյալ լոգանք կամ ցնցուղ պետք է ընդունի կլիմային համապատասխան ջերմաստիճանի պայմաններում՝ առնվազն յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ, իսկ հնարավորության դեպքում՝ ավելի հաճախակի, եթե դա անհրաժեշտ է ընդհանուր հիգիենայի պահպանման համար, այնուամենայնիվ,
ԽԿԿ-ն բազմիցս անդրադարձել է այս խնդրին և առաջարկել ավելացնել անազատության մեջ պահվող անձանց լոգանք ընդունելու հաճախականությունը՝ հիմք ընդունելով Եվրոպական բանտային կանոնների 19.4-րդ կանոնը, համաձայն որի՝ պետք է համարժեք հնարավորություններ ստեղծել, որպեսզի ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ կարողանա կլիմային համապատասխան ջերմաստիճանի պայմաններում ցնցուղ ընդունել կամ լողանալ, ընդ որում՝ հնարավորության դեպքում ամեն օր, սակայն շաբաթն առնվազն երկու անգամ (իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ)՝ ելնելով ընդհանուր հիգիենայի պահպանության նպատակից:

Հաշվի առնելով կանանց համար հիգիենայի պահպանման առանձնահատկությունները՝ չափազանց կարևոր է նրանց ապահովել լոգանքի և հիգիենայի պահպանման պատշաճ պայմաններով՝ նախատեսելով համապատասխան հարմարանքներ և ավելի հաճախ լոգանք ընդունելու հնարավորություն:

Անհրաժեշտ է նաև հավելել, որ Հայաստանի վերաբերյալ ԽԿԿ-ի 2016 թվականի զեկույցում, ի թիվս այլ առաջարկների, նախատեսված է եղել, որ լոգանք ընդունելու հնարավորություն պետք է ընձեռվի առնվազն շաբաթը երկու անգամ[42:]

[41] https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae
[42] https://rm.coe.int/16806bf46f, կետ 73:

Թեև ՔԿՀ-ն ապահովում է կանանց հիգիենայի պարագաներով, սակայն ոմանք նախընտրում են հարազատներից ստանալ:

ԽԿԿ-ն խորհուրդ է տալիս, որպեսզի ազատազրկված բոլոր կանանց համար ապահովվի սանիտարական և լվացվելու հարմարությունների անարգել հասանելիությունը, հիգիենայի անհրաժեշտ պարագաների (սանիտարական սրբիչների և տամպոնների) համարժեք քանակության առկայությունը և արյան հետքեր կրող իրերի անվտանգ հեռացումը: Բանտում կանանց համար սեփական արժանապատվությունը պահպանելու համար անհրաժեշտ նվազագույն պարագաների առկայությունը չապահովելն ինքնին կարող է հավասարազոր լինել նվաստացուցիչ վերաբերմունքի:[43]

Բուժօգնություն

Պատշաճ բժշկական սպասարկումն ազատությունից զրկված անձանց համար արժանապատիվ վերաբերմունքի հիմնարար տարրերից է:

Կանանց հասարակություն վերաինտեգրման գործընթացը ավելի դժվար է: Ազատազրկված կանանց մոտ ավելի շատ են հոգեկան առողջության խնդիրներ առաջանում՝ երեխաներից հեռու գտնվելու, կարոտի, հետագայում հասարակության կողմից պիտակավորվելու վախի և այլ գործոնների ազդեցությամբ: Ուստի կանայք հոգեբանական աշխատանքի կարիքը զգում են ավելի հաճախ: ՔԿՀ-ում մեկ հոգեբան կա, որը չի բավարարում պահանջարկին:

Նշվածով պայմանավորված՝ հարկ է հստակ միջոցներ ձեռնարկել ապահովելու քրեակատարողական հիմնարկում անհրաժեշտ քանակությամբ բժշկական սպասարկում իրականացնող բարձրակարգ մասնագետների ընդունումն ու ապահովելու անազատության մեջ գտնվող անձանց պատճաշ բժշկական սպասարկում ստանալու իրավունքը:

Մահվան դեպքեր

Աբովյան ՔԿՀ-ն նախատեսված չի անկողնային հիվանդների խնամքի համար, սակայն այցելությունների ընթացքում խումբը արձանագրել է անկողնային հիվանդների, որոնց խնամում էին այլ բանտարկյալներ, ինչն անընդունելի է և չի ապահովում անազատության մեջ գտնվող անձանց պատշաճ բժշկական սպասարկում ստանալու իրավունքի իրականացումը:

Խմբի կողմից հրատապ հաշվետվություններ են ներկայացվել նախարարություն՝ նրաց առողջական վիճակի և նրանց հիվանդությունների համապատասխանությունը ՀՀ կառավարության № 825-Ն որոշման հավելվածում ընդգրկված՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին, սակայն պաշտոնական գրությամբ Խմբին հայտնել են, որ հիվանդությունների ախտահարման աստիճանը չի համապատասխանում վերոնշյալ որոշմանը կից հիվանդությունների ցանկին: Հատկանշական է, որ ՀՀ ԱՆ պատասխանից մեկ շաբաթ անց կինը մահացել է Աբովյան ՔԿՀ-ում, ինչը լուրջ մտահոգության տեղիք է տալիս:

[43] ԽԿԿ-ի գործունեության վերաբերյալ 10-րդ ընդհանուր զեկույց, պարբ. 31:

Կրթություն և զբաղվածություն

Աբովյան ՔԿՀ-ում արդեն մեկ տարուց ավելի անչափահասների համար հանրակրթությունը անմատչելի է: Իհարկե, ողջունելի է, որ անչափահասների թիվը կտրուկ նվազել է, սակայն անկախ այդ հանգամանքից, կրթական իրավունքի իրացումը պետության պարտավորությունն է՝ ամրագրված ինչպես ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով, այնպես էլ «Հանրակրթության մասին» ՀՀօրենքով:

Հարկ է նկատել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ դատապարտյալն ունի հնարավոր և օրենքով նախատեսված կրթություն ստանալու իրավունք: Համանման դրույթ է նախատեսված նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով, սակայն ստեղծված իրավիճակում պատշաճ չի ապահովվում անազատության մեջ գտնվող անչափահաս անձանց կրթության իրավունքը, մինչդեռ Եվրոպական բանտային կանոնների 28.7-րդ կանոնով հստակ սահմանվում է ոչ միայն անազատության մեջ գտնվող անձանց կրթության իրավունքի իրականացումը, այլև նախատեսվում է, որ ազատությունից զրկված անձանց կրթությունը պետք է գործնականում հնարավորինս ներհյուսված լինի երկրում առկա կրթական և մասնագիտական վերապատրաստման համակարգին, որպեսզի ազատ արձակվելուն պես նշված անձինք կարողանան առանց դժվարությունների շարունակել իրենց կրթությունն ու մասնագիտական վերապատրաստումը:

Կանանց համար ևս կրթություն ստանալը խրախուսելի է, քանի որ հաճախ ՔԿՀ-ում հայտնվելով սոցիալապես խոցելի շերտերից, նրանք զրկված են լինում կրթություն ստանալու հնարավորություններից:

ԽԿԿ-ն իր գործունեության մասին 2-րդ ընդհանուր զեկույցում նշել է, որ ազատազրկված անձանց նորմալ կեցության համար ծայրահեղ կարևոր է իրագործել միջոցառումների բավարար ծրագրեր (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն): Այս ծրագրերի իրականացումը կարևոր է բոլոր հիմնարկների համար անկախ նրանից, թե ում համար են նրանք նախատեսված՝ դատապարտյալների, թե կալանավորվածների[44]:

Այդ բացը լրացնելու համար ՔԿՀ-ում գործում են մի քանի կրթական խմբակներ՝ լեզուների ուսուցում, վարսահարդարի դասընթացներ, ինչ վերաբերում է զբաղվածությանը, ապա կանայք զբաղվում են կարի և փաթեթավորման արտադրամասում, ներգրավվում են խոհանոցային գործերում, հետևում՝ մաքրությանը:

ԽԿԿ-ի այցելող պատվիրակությունները չափազանց հաճախ են հանդիպում իրավիճակների, որոնցում իգական սեռի բանտարկյալներին առաջարկվում են նրանց համար «պատշաճ» համարվող միջոցառումներ (օրինակ՝ կար կամ ձեռագործ աշխատանք): Այնուհանդերձ, նման խտրական մոտեցումը կարող է միմիայն ամրապնդել կանանց սոցիալական դերի վերաբերյալ հնացած կարծրատիպերը:[45]

[44] https://rm.coe.int/1680696a3f, կետ 47:

[45] Չեռնոգորիա. 2013 թվականի այցելություն, պարբ. 53: Նիդերլանդներ (Կարիբյան մաս). 2014 թվականի այցելություն, պարբ. 158: Շվեյցարիա.2011 թվականի այցելություն, պարբ. 62:

Աբովյան ՔԿՀ-ում գործում է նաև գրադարան, մարզասրահ, սակայն քչերն են օգտվում ժամանցի այս ձևերից, նաև՝ մարզասրահի ոչ բարվոք վիճակից ելնելով:

Անհրապույր է նաև զբոսանքի համար նախատեսված վայրը, և կանանց հավաստմամբ դժվարությամբ են օգտվում իրենց հատկացված ժամանակից և գնում զբոսանքի:

Այս առնչությամբ անհրաժեշտ է նկատել, որ անազատության մեջ գտնվող անձանց զբաղվածության և զբոսանքի իրավունքի ապահովումը հիմնարար նշանակություն ունի ինչպես այդ անձանց առողջության պահպանման, այնպես էլ հետագայում նրանց վերաինտեգրման խթանման հարցում:

Զբոսանքի ընթացքում ազատությունից զրկված անձանց մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորության տրամադրման կարևորությանն անդրադարձ է կատարվել նաև Եվրոպական բանտային կանոններում: Նշված փաստաթղթի 27.3-րդ և 27.4-րդ կանոնները նախատեսում են, որ ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացմանն ուղղված համապատասխան միջոցառումները, մարզվելու և ժամանցի համար հնարավորությունների ապահովումը պետք է կազմեն ազատությունից զրկման վայրի ռեժիմի մի մասը: Ավելին, ազատությունից զրկման վայրի ղեկավարությունը պետք է նպաստի դրան՝ ապահովելով համապատասխան սարքերով և սարքավորումներով:

Համանման կարգավորումներ է նախատեսված նաև Նելսոն Մանդելայի կանոններով, որի 23-րդ կանոնով ամրագրված է, որ ազատությունից զրկված բոլոր անձինք, ովքեր ներգրավված չեն բացօդյա աշխատանքներում, ունեն ամենօրյա մեկ ժամից ոչ պակաս տևողությամբ բացօդյա մարմնամարզությամբ զբաղվելու իրավունք:

Կապն արտաքին աշխարհի հետ

Անկասկած, կին բանտարկյալներից շատերի առջև ծառացող հիմնական խնդիրներից է նրանց ազատազրկման վայրի՝ տնից շատ հեռու գտնվելը, քանի որ կին բանտարկյալները սակավաթիվ են, և համապատասխանաբար սակավաթիվ են կանանց բանտերը: Դա նշանակում է, որ նրանց ընտանիքների համար մարտահրավերներ են ծագում նրանց հետ շփումները պահպանելու հարցում: Համայնքի, ընտանիքի և հատկապես երեխաների հետ կապերի խզումը կարող է լուրջ անհանգստության և տառապանքի պատճառ դառնալ կանանց համար, որոնցից շատերն իրենց երեխաների առաջնային խնամակալներն են: Ավելին, եթե ամուսնական տեսակցությունները տվյալ երկրում թույլատրված են, ապա կին բանտարկյալները սովորաբար չեն օգտվում նույն իրավունքներից, ինչ տղամարդ բանտարկյալները: Դա այն ոլորտներից է, որոնցում կին բանտարկյալները խտրականության են ենթարկվում բանտային համակարգերի մեծ մասում, որը խիստ բացասական հետևանքներ է ունենում կին բանտարկյալների հոգեկան աշխարհի համար: Նվազ բարենպաստ այդ վիճակը կարող է էլ ավելի բարդանալ այն համակարգերում, որոնցում կարգապահական տույժի տեսակներից է ընտանիքի հետ շփումների կրճատումը կամ արգելումը:[46] Մինչդեռ Բանգկոկյան կանոնների 26-րդ կանոնով հստակ ամրագրվում է, որ ազատությունից զրկված կանանց կապն իրենց ընտանիքի անդամների, այդ թվում՝ երեխաների, երեխաների խնամակալների և օրինական ներկայացուցիչների հետ պետք է խրախուսել և նպաստել բոլոր ողջամիտ միջոցներով: Հնարավորության սահմաններում պետք է հակակշռել իրենց բնակության վայրերից հեռու գտնվող քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված կանանց համար առաջացող անբարենպաստ պայմանները: Ավելին, նույն փաստաթղթի 28-րդ կանոնով էլ սահմանում է, որ երեխաների հետ տեսակցությունները պետք է անցկացվեն այնպիսի միջավայրում, որը նպաստում է տեսակցությունների դրական փորձին, այդ թվում՝ վարչակազմի վերաբերմունքի առումով: Մեր դիտարկման ժամկետում Աբովյան ՔԿՀ-ում չկային մայրերի հետ ապրող մինչև 3 տարեկան մանկահասակ երեխաներ, սակայն պատճառը ոչ թե այն է, որ նրանք չեն կալանավորվում, այլ մայրերի ցանկությունը՝ երեխաներին չմեծացնել բանտային պայմաններում:

[46] Նույն տեղը:

Ի տարբերություն տղամարդկանց, որոնց առավել կանոնավոր և պատրաստակամ են այցելում իրենց ընտանիքների անդամները, կանայք ավելի խոցելի են հարազատների կողմից մերժված լինելու և դատապարտված լինելու խարանը կրելու տեսանկյունից: Ամուսինները լքում են նրանց, զրկում կապից՝ երեխաների հետ: Սակայն երբեմն նաև կանայք են հրաժարվում տեսակցել բանտային պայմաններում իրենց երեխաների հետ՝ ծածկելով իրենց գտնվելու վայրը:

Տեսազանգի հնարավորություն ՔԿՀ-ում չկա, միայն հեռախոսազանգն է, որն իրականացվում է քարտերի միջոցով:

ԽԿԿ-ն համարում է, որ նորմ պետք է լինեն բաց տեսակցությունները, որոնց ընթացքում թույլատրվում է ֆիզիկական կոնտակտն ընկերների՝ հատկապես երեխաների և զուգընկերների հետ: Բանտում գտնվող կանանց զգալի մի մասը մայրեր են և ընտանիքի հիմնական խնամատարներ: Ընտանիքից և երեխաներից անջատումը կարող է առանձնակի բացասական ազդեցություն ունենալ թե՛ բանտարկյալների, թե՛ նրանց ընտանիքի անդամների, հատկապես երեխաների վրա:[47]

Այս առումով հատկանշական է Վրաստանի օրինակը: Քրեակատարողական հիմնարկներում գտնվող բանտարկյալներին որոշակի պայմաններին հետևելու դեպքում կարող է իրավունք տրվել որոշ ժամանակով լքել ազատազրկման վայրը, այդ թվում՝ աշխատանքի, ուսման նպատակով կամ հանգստյան օրերն «ազատության մեջ» անցկացնելու համար: Կին բանտարկյալները կարող են նաև ընտանեկան այցելություններ ունենալ, ինչի համար թույլտվությունը պետք է հաստատի հաստատության ղեկավարը և քրեակատարողական դեպարտամենտի պետը: Բացի այդ, կանայք, ում երեխաները կալանավայրում եղել են նրանց հետ միասին, իսկ 3 տարին լրանալուց հետո լքել են ազատազրկման վայրը և բաժանվել մորից, հանգստյան օրերին իրավունք ունեն լքել կալանավայրը[48]:

Հաշվի առնելով բանտում պահվող կանանց պարագայում ընտանեկան հարաբերությունները պահպանելու կենսական կարևորությունը՝ պետք է քաջալերել և բոլոր խելամիտ միջոցներով աջակցել ընտանիք՝ ներառյալ երեխաների, վերջիններիս խնամակալների և օրինական ներկայացուցիչների հետ շփումները:[49]

[47] ԽԿԿ-ի 2014 թվականի այցելությունն Իռլանդիա, պարբ. 109:

[48] https://jam-news.net/?p=27012 http://www.parliament.ge/en/ajax/downloadFile/72000/Gender_Equality_NAP_report_2016_ENG_Edited_Final_July_2017

[49] Կին բանտարկյալների հետ վարվեցողության և կին իրավախախտների նկատմամբ կիրառվող՝ ազատազրկման հետ չառնչվող միջոցների վերաբերյալ Միավորված ազգերի

ԱՐԳԵԼՎԱԾ ԻՐԵՐ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼԻՍ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ. 2014թ., 2015թ., 2016թ. 2017թ.

Խմբի անդամները ՔԿՀ-ներ կատարած այցելությունների ընթացքում հանդիպումներ են ունեցել տարբեր արարքներ կատարելու համար պատժախցերում հայտնված անձանց հետ՝ պարզելու պատժախուց տեղափոխելու հիմքերը: Խմբի անդամների ունեցած հանդիպումներից պարզ է դարձել, որ դատապարտված և կալանավորված անձանց նկատմամբ կիրառված տույժերի գերակշռող մասը կիրառվել է արգելված իր՝ բջջային հեռախոս պահելու համար:

Բջջային հեռախոս արգելված իր պահելու համար կիրառված տույժերը հետագայում բացասական ազդեցություն են ունեցել դատապարտյալների պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցի քննարկման համար և բազմաթիվ են բողոքները, որ դատապարտյալների պայմանական վաղաժամկետ նիստով կայացված մերժված որոշումների հիմքում դրվել է բջջային հեռախոս հայտնաբերելու արդյունքում կիրառված տույժը:

Լրացուցիչ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արգելված իր (բջջային հեռախոս) պահելու համար պատժվում են դատապարտված և կալանավորված անձինք: Նրանք պատժվում են նկատողության, խիստ նկատողության կամ մինչև 15 օր տևողությամբ պատժախուց տեղափոխվելու միջոցով: Արձանագրվել է նաև, որ այս համատեքստում չեն իրականացվում ծառայողական քննություններ՝ պարզելու արգելված իրերի ՔԿՀ մուտք գործելու հանգամանքները:

2014թ. ՀՀ ԱՆ բոլոր ՔԿՀ-ներում հայտնաբերվել է 1576 բջջային հեռախոս, որի արդյունքում իրականացվել է ընդամենը 48 ծառայողական քննություն: 2015 թ. ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պահվող անձանց մոտ հայտնաբերվել է 2458 բջջային հեռախոս, որի արդյունքում իրականացվել է 31 ծառայողական քննություն, որից 3 ծառայողական քննություններով 6 ծառայողի նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր: 2016-ի ընթացքում ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պահվող անձանց մոտ հայտնաբերվել է 2200 բջջային հեռախոս, որի արդյունքում իրականացվել է 57 ծառայողական քննություն:

2017-ի ընթացքում ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պահվող անձանց մոտ հայտնաբերվել է 1839 բջջային հեռախոս, որի արդյունքում իրականացվել է 111 ծառայողական քննություն: Իրականացված ծառայողական քննությունների 22-ով 40 քրեակատարողական ծառայողի նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր:

2014թ. ՀՀ ԱՆ ՔԿՀ ներքին կանոնակարգով սահմանված պատիժը կրելու կարգի և պայմանների խախտման համար կարգապահական տույժի է ենթարկվել 2586 անձ, 2015թ.՝ 2835 անձ, իսկ 2016թ.՝ 2556 անձ, 2017թ. 2380 որոնցից 915-ը ստացել են նկատողություն, 347-ը՝ խիստ նկատողություն, իսկ 1118 հոգի տեղափոխվել է պատժախուց:

2014-2015թթ. ընթացքում կալանավորված և դատապարտված անձանց նկատմամբ տույժերի կիրառման վերաբերյալ ոչ մի որոշում չի բողոքարկվել:

2016թ. դիտորդներն արձանագրել են նույն պատկերը, սակայն երբ Խումբը դիմել է ՀՀ ԱՆ-ին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու հարցմամբ, պատասխան է ստացվել, որ 2016թ. հաշվառում չի իրականացվել:

2017թ. ընթացքում կալանավորված և դատապարտված անձանց նկատմամբ տույժերի կիրառման վերաբերյալ բողոքարկվել է ընդամենը 3 որոշում:

Ազատազրկված անձանց կողմից Խմբի անդամներին տրված տեղեկատվության համաձայն, դա պայմանավորված է նրանով, որ ազատազրկվածները կորցրել են վստահությունը ՀՀ արդարադատության նկատմամբ:

կազմակերպության կանոններ (Բանգկոկյան կանոններ), 26-րդ կանոն:

Դիտորդների խումբն արձանագրել է նաև, որ ՔԿՀ աշխատակիցները կարգապահական տույժ նշանակելու մասին որոշումների օրինակները չեն տրամադրում տույժի ենթարկված անձանց, ինչպես նաև նրանց չի բացատրվում տվյալ որոշումների բողոքարկման կարգը:

Մինչդեռ, ՔԿՀ-ում արգելված իր բերելու համար նախատեսված է վարչական պատասխանատվություն 100.000-500.000 ՀՀ դրամի չափով:

Քրեակատարողական ծառայության մասին ՀՀ օրենսգրքով սահմանված են ՀՀ արդարադատության նախարարի, ՀՀ ՔԿՎ պետի, ՔԿՀ ղեկավարի լիազորությունները, ըստ որի՝ ՀՀ արդարադատության նախարարը[50], ՔԿՎ պետը[51] և ՔԿՀ ղեկավարը[52] օժտված են ծառայողական քննություններ նշանակելու լիազորությամբ:

Այսպիսով, իրավասությունները սահմանող իրավական նորմերը, մի կողմից, և արգելված իր համարվող բջջային հեռախոսների հայտնաբերման դեպքերի վերաբերյալ փաստերը և ձեռնարկված գործողությունները հիմք են տալիս ենթադրել, որ ՀՀ արդարադատության նախարարը, ՔԿՎ պետը և ՔԿՀ ղեկավարը դրսևորել են անգործություն, և հիմք է տալիս ենթադրելու կոռուպցիոն մեծ ռիսկերի գոյության հավանականության մասին՝ նրանց անմիջական ներգրավվածությամբ և/կամ իմացությամբ:

---

[50] Տես «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք, 25-րդ հոդվածի 5-րդ մաս, ընդունված 2005թ. հուլիսի 8-ին: Հասանելի է http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=55538

[51] Տես «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք, 26-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ, ընդունված 2005 թ. հուլիսի 8-ին: Հասանելի է http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=55538

[52] Տես «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք, 28-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ ընդունված 2005թ. հուլիսի 8-ին: Հասանելի է http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=55538

ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՈՒՄ

Միջազգային ստանդարտներ

Միավորված ազգերի կազմակերպության կողմից Ազատազրկման հետ կապ չունեցող նվազագույն ստանդարտ կանոնների /ՏոկիոյիԿանոններ/ չորրորդ մասով սահմանված են դատապարտյալների կողմից հասարակություն վերադառնալու մեխանիզմներն ու անհրաժեշտ գործողությունները: Մասնավորապես, սահմանված է, որ իրավասու մարմինը պետք է իր տրամադրության տակ հետդատապարտման մի շարք այլընտրանքներ ունենա՝ ինստիտուցիոնալացումից խուսափելու և դատապարտյալների ինտեգրմանը նպաստելու նկատառումներից ելնելով: Իսկ նույն գլխի 9.4 կետի համաձայն՝ ազատման ցանկացած եղանակ պետք է հնարավորինս վաղ իրականացվի[53]:

Եվրոպայի խորհրդի կողմից 2003 թվականին ընդունվել է պայմանական ազատման վերաբերյալ /2003/22 հանձնարարականը՝ հիմք ընդունելով այն, որ պայմանական ազատումը նոր հանցագործության կատարումը կանխելու և դատապարտյալի պլանավորած ու վերահսկվող ինտեգրումն ապահովելու ամենաարդյունավետ միջոցներից մեկն է:

Հանձնարարականի համաձայն՝ պայմանական ազատումը նշանակում է դատապարտյալի վաղաժամկետ ազատումը՝ հետազոտման անհատականացված պայմանների ներքո: Ընդ որում, ներումն ու համաներումը այս սահմանման մեջ չեն մտնում: Հանձնարարականում տեղ գտած ընդհանուր սկզբունքների համաձայն պայմանական ազատումը պետք է նպատակ հետապնդի օգնել դատապարտյալին բանտային կյանքից անցում կատարել հասարակական օրինապահ կյանքի՝ հսկողության և հետազոտման պայմաններ սահմանելու միջոցով: Ներպետական օրենքները պետք է նման հնարավորություն ընձեռեն բոլոր դատապարտյալներին՝ ներառյալ ցմահ ազատազրկվածներին:

Իրավիճակը ՀՀ-ում

2017-2018 թվականների օրենսդրական փոփոխությունների ուսումնասիրություն

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի գործունեությունն ու արդյունավետության բարձրացումը մշտապես եղել է դիտորդների խմբի ուշադրության կենտրոնում: Սա պայմանավորված է մի կողմից այն հանգամանքով, որ դատապարտյալներից ստացվող բողոքների գերակշիռ մասը վերաբերում է այս ինստիտուտի ոչ արդյունավետ գործունեությանը, մյուսի կողմից դիտորդները կարևորում են դատապարտյալների իրավական կարգավիճակին ուղղված ցանկացած մեխանիզմի արդյունավետ գործունեությունը:

2017 թվականի ընթացքում օրենսդրական փոփոխություններ տեղի ունեցան վաղաժամկետ ազատման համակարգում, ինչին հաջորդեցին նաև պրակտիկայում փոփոխությունները: Մասնավորապես, փոփոխություններ տեղի ունեցան «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-49_Ն 1-ին հոդվածը չեղյալ ճանաչելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու» մասին և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքներում:

[53] United Nations Standard Minimum Rules for Non-Custodial Measures 1990, (The Tokyo Rules), United Nations

Կատարված փոփոխությունները միտված էին մասնավորապես՝

1. Անկախ հանձնաժողովների և քրեակատարողական հիմնարկի վարչակազմերի գործառույթների տարանջատմանը.
2. Անկախ հանձնաժողովի կազմից ենթահանձնաժողովների վերացմանը
3. Անկախ հանձնաժողովների կազմի վերանայում և անդամների ներգրավում հետևյալ ոլորտներից՝ հոգեբան, հոգեբույժ ՀՀ առողջապահության նախարարությունից, սոցիալական աշխատող ՀՀ սոցիալական և աշխատանքի հարցերի նախարարությունից, կրիմինոլոգ ՀՀ ԱՆ-ին, ներկայացուցիչ ՀՀ նախագահի աշխատակազմից, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից և հասարակական կազմակերպություններից.
4. Որոշում կայացնելու չափանիշների սահմանում.
5. Անկախ հանձնաժողովի որոշումների բողոքարկման հնարավորություն.

2017 թվականին արձանագրվել է դատապարտյալների՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման թվի կտրուկ աճ: Այսպես, համաձայն պաշտոնական տվյալների՝ 2017 թվականի հունվար-մայիս ամիսներին պատժի կրումից ազատվել է 50 ազատազրկված անձ, հունիս-դեկտեմբեր ամիսներին՝ 315, ընդհանուր առմամբ 2017 թվականին վաղաժամկետ ազատվել է 365 ազատազրկված անձ:

Հատկանշական է, որ 2017 թվականի առաջին կեսին քրեակատարողական հիմնարկների կողմից քննարկվել է ընդհանուր առմամբ 1969 անձի գործ, որից ՔԿՎ կողմից դրական եզրակացություն է ստացել 245-ը: 245-ից անկախ հանձնաժողովների կողմից դրական եզրակացության է արժանացել 61 գործ:

Նույն տարվա երկրորդ կեսին արձանագրվել է հետևյալ պատկերը: Անկախ հանձնաժողովի քննարկմանը ներկայացվել է ընդհանուր առմամբ 2303 անձի գործ, որից դրական եզրակացություն անկախ հանձնաժողովի կողմից տրվել է 162-ով, սակայն վերջնական արդյունքում դատարանի կողմից դրական որոշում տրվել է 315 գործով[54]: Այսինքն, անկախ նրանից, որ անկախ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն, վերջիններս դատարանների կողմից ստացել են դրական որոշում: Ըստ այդմ, 2017 թվականի արդյունքները զգալիորեն բարձրացել են: Համեմատության համար նշենք, որ 2016 թվականին ՔԿՀ վարչական հանձնաժողովների նիստերին ներկայացվել է թվով 4560 դատապարտյալի գործ, որից անկախ հանձնաժողովներին ներկայացվել են թվով 620 դատապարտյալներ: Անկախ հանձնաժողովի կողմից այս թվից հավանության արժանացել է 156-ը, իսկ դատարանի կողմից ազատ է արձակվել վերջնական արդյունքում ընդհանուր առմամբ 115 դատապարտյալ[55]:

Չնայած իրականացված փոփոխություններին և վաղաժամկետ ազատման ենթարկված դատապարտյալների արձանագրված թվի աճին, այնուհանդերձ, պետք է նշել, որ դեռևս կան լուրջ մտահոգություններ: Խնդիր են եղել հատկապես անկախ հանձնաժողովների կողմից կայացվող որոշումները: Մասնավորապես, որոշումները չեն եղել հիմնավորված և պատճառաբանված: Բացի այդ, արձանագրվել են նաև որոշման կայացման ընթացակարգային խնդիրներ, որոնք ընհանուր առմամբ բացասաբար են անդրադարձել համակարգի արդյունավետ գործունեության վրա: Վերջինս էլ հիմք է հանդիսացել օրենսդրական նոր փոփոխությունների:

[54] ՀՀ ԱՆ ստացված պաշտոնական տվյալներ

[55] http://pmg.am/images/%D4%B4%D5%AB%D5%BF%D5%B8%D6%80%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%A2-2016_%D5%A9-%D5%AB_%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf

Նախ պետք է նշել, որ անկախ հանձնաժողովների ձևավորման մասին ՀՀ Նախագահի հրամանագիրը ուժը կորցրել է և անկախ հանձնաժողովները ինստիտուցիոնալ առումով այլևս գոյություն չունեն պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում:

Սրան զուգահեռ, 2018 թվականի մայիսի 22-23-ի խորհրդարանական լսումներով անցկացվեց «Քրեական օրենսգրքում փոփոխությունների կատարելու մասին» և կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթներով նախատեսված փոփոխությունների քննարկումը, ինչի արդյունքում առաջարկվող օրենսդրական փաթեթներն արդեն ընդունվել են:

Համաձայն 2018 թվականի օրենսդրական կարգավորումների՝ ինստիտուցիոնալ առումով պայմանական վաղաժամկետ ազատման հարցում հիմնական դերակատարումը ընկնում է **քրեակատարողական ծառայության և պրոբացիոն ծառայության վրա**[56]**:**

Մասնավորապես, նոր ընթացակարգի համաձայն՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու նպատակով դատապարտյալը սահմանված ժամկետներում իրավունք ունի գրավոր դիմում ներկայացնել պատիժը կատարող հիմնարկի **վարչակազմին:**

Դատապարտյալի գրավոր դիմումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն այդ մասին պաշտոնապես ծանուցում է **պրոբացիայի ծառայությանը և քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնին՝** կցելով դատապարտյալի անձնական գործի ամփոփ տեղեկանքը և անհրաժեշտ այլ փաստաթղթերը: Քրեակատարողական ծառայությունը և պրոբացիայի ծառայությունը պաշտոնական ծանուցումն ստանալուց հետո՝ 80 օրվա ընթացքում, կազմում և ներկայացնում են **զեկույցներ:**

Եթե **քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցները դրական են,** ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու **հարցը դատարան ներկայացնելու մասին որոշում** և յոթ աշխատանքային օրվա ընթացքում միջնորդագրով ներկայացնում դատարան:

Եթե **քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցներից <u>մեկը բացասական</u> է,** ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը **դատարան ներկայացնելու մասին որոշում,** եթե դատապարտյալը տալիս է գրավոր համաձայնություն, և յոթ աշխատանքային օրվա ընթացքում միջնորդագրով ներկայացնում դատարան:

Եթե քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցները բացասական են, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան չներկայացնելու մասին որոշում: Այս դեպքում դատապարտյալը կարող է որոշումը բողոքարկել դատարան[57]:

---

[56] ՀՀ Օրենքը ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին, Կ-309-26.04,2018_ՊԻՄԻ-011/2

[57] ՀՀ Օրենքը ՀՀ Քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում

Եթե քրեակատարողական ծառայության կամ պրոբացիայի կողմից ներկայացված զեկույցներից մեկը բացասական է, ապա դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կարող է կրկին քննարկել համապատասխան որոշման ընդունումից հետո **երեք ամիս անց:**

Այն դեպքում, երբ առկա է դատարանի կողմից պատժից վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը մերժելու մասին որոշում, ապա դատապարտյալի պատիժը կրելուց ազատման կամ չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կրկին կարող է քննարկման ներկայացվել վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ **վեց ամիս անց:**

Նշված կարգավորումները թեպետև միտում ունեն ավելի արդյունավետ դարձնել պատժի կրումից ազատման ինստիտուտի գործունեությունը, սակայն օրենսդրական նման կարգավորումները արդեն իսկ հիմք են տալիս որոշակի մտահոգությունների: Մասնավորապես՝

1. Պրոբացիոն ծառայության համար զեկույցներ ներկայացնելու պարտադիր օրենսդրական պահանջի արդյունավետ իրագործումը ենթադրում է պրոբացիոն ծառայողների մասնագիտական կարողությունների առկայություն, ինչպես նաև դատապարտյալի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության առկայություն, ինչը հավաքված կլինի պարբերական աշխատանքների արդյունքում: Մինչդեռ ներկայումս պրոբացիոն ծառայությունը ոչ մասնագիտական կարողությունների, ոչ ֆունկցիոնալ առումով դեռևս նման երաշխիք չի տալիս:
2. Քրեակատարողական ծառայության ներգրավումը պատժից ազատման գործընթացում հնարավոր է ավելորդ զբաղվածություն ստեղծի առաջին հերթին քրեակատարողական ծառայության համար, ինչը բացասաբար անդրադարձ կունենա որոշումները ողջամիտ ժամկետներում ընդունելու համար:
3. Ինչպես քրեակատարողական ծառայության, այնպես էլ պրոբացիոն ծառայության կողմից ներկայացվող զեկույցները պետք է արտացոլեն դատապարտյալի ուղղմանն ուղղված նախադրյալները, վարքագծի փոփոխություններն ու հեռանկարները, ինչը պահանջում է դատապարտյալի հետ **ստատիկ և դինամիկ** պլանով աշխատանք և ըստ այդմ նաև հստակ չափանիշներ և պայմաններ այդ աշխատանքը և ըստ այդմ դատապարտյալի վարքագծի փոփոխությունները գնահատելու համար: Մինչդեռ, դեռևս տեսանելի չեն վարքագծի փոփոխությունները գնահատելու հստակ և իրատեսական չափանիշները, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում բացակայում են այն պայմաններն ու հնարավորությունները, որոնք թույլ կտան դատապարտյալների հետ առավելագույնս աշխատանքներ տանել:
4. Դատարանի կողմից վաղաժամկետ ազատման մերժման դեպքում դատապարտյալի գործը կրկին կարող է քննության ենթարկվել այդ որոշման ուժի մեջ մտնելուց հետո 6 ամիս անց, ինչը ողջամիտ ժամկետ չէ:

կատարելու մասին, Կ-309-26.04.2018-ՊԻՄԻ-011/2

2011-2017թթ. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում արձանագրված հացադուլի, մահվան դեպքերի, ինքնասպանության և ինքնավնասումների դեպքերի վիճակագրություն

Հացադուլ

2015-17թթ. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում անձանագրվել է հացադուլի 1310 դեպք, որից 531-ը՝ 2015թ., 385-ը՝ 2016թ., իսկ 394-ը՝ 2017թ.:

2017թ. հացադուլ հայտարարելու ամենաշատ դեպքերը գրանցվել են «Նուբարաշեն» ՔԿՀ-ում՝ 190 դեպք, այնուհետև՝ «Արմավիր» և «Հրազդան» ՔԿՀ-ներում՝ համապատասխանաբար 96 և 36 դեպք: Հացադուլ հայտարարելու ամենաքիչ դեպքերը արձանագրվել են «Գորիս»-ում՝ 2 դեպք, և «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում՝ 1 դեպք / Տես **Գծապատկեր 1/:**



Հացադուլ հայտարարելու պատճառներից գլխավորը ազատությունից զրկված անձանց՝ քրեական գործերի հետ կապված խնդիրներն են:

Պատճառներից են նաև վարչակազմի կողմից իրենց պահանջների անտեսումը (օրինակ՝ խուցը փոխելու պահանջը), հիվանդանոց չտեղափոխելը, պայմանական վաղաժամկետ չազատելը և այլն:

Մահվան դեպքեր

Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորում է պետության պոզիտիվ պարտավորությունը կյանքի իրավունքի պաշտպանության գործընթացում, որն իր հերթին երաշխավորում է՝ թե պետության և պետության անունից հանդես եկող անձանց հսկողության տակ գտնվող անձանց (օրինակ՝ ՔԿՀ[58], ՁՊԿ[59], *զինված ուժեր և այլն) կյանքի իրավունքը:*

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի լույսի ներքո՝ կյանքի նկատմամբ վտանգը կանխելու պարտականությունն անառարկելիորեն հանդիսանում է պետության պոզիտիվ պարտականությունը (Տես մասնավորապես Tanribilir v. Turkey, No. 21422/93, § 70, 16 November 2000, Keenan v. the UK, No. 27229/95, §§ 88-89, Servet Gunduz v. Turkey, No. 4611/05, 11 January 2011, § 63):

---

[58] Քրեակատարողական հիմնարկներ:

[59] Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայր:

Այս պարտականությունն անխուսափելիորեն վերաբերում է նաև պետության և պետության անունից հանդես եկող անձանց հսկողության տակ գտնվող անձանց կյանքի նկատմամբ վտանգն արդյունավետորեն կանխելուն ուղղված օրենսդրական միջոցառումներ և վարչարարություն ապահովելու պետության պոզիտիվ պարտականությանը (տես՝ Ramon Alvarez v. Spain (dec.), No. 51192/99, July 3, 2001, Oneryildiz v. Turkey [GC], No. 48939/99, § 89):

Դիտորդների խումբը ուսումնասիրել է 2011-2017 թթ. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի վիճակագրությունը:

Ընդհանուր առմամբ

Այսպիսով, 2011-ից մինչև 2017 թվականներն ընկած ժամանակահատվածում մահվան ամենաշատ դեպքերը գրանցվել են 2014թ.-ին՝ 38 դեպք, այնուհետև 2011-ին՝ 32 դեպք: 2016թ. արձանագրվել է մահվան 29 դեպք, իսկ 2012 և 2015թթ.՝ 28-ական դեպք: Ուսումնասիրվող ժամանակահատվածում մահվան ամենաքիչ դեպքերը գրանցվել են 2013 և 2017թթ.՝ համապատասխանաբար 19 և 17 դեպք / Տես **Գծապատկեր 2/:**



2011-2015թթ. ընթացքում արձանագրվել է մահվան 145 դեպք, որից 53-ը՝ սիրտ-անոթային համակարգի, 41-ը՝ ընդհանուր ինտոքսիկացիայի, 13-ը՝ գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարումների, 4-ը՝ լյարդի ցիռոզի, 3-ը՝ հեմորագիկ շոկի, 2-ը՝ էկզոգեն թունավորման, 1-ը՝ շնչառական անբավարարվածության, 10-ը՝ այլ առողջական խնդիրների և 18-ը՝ ինքնասպանության հետևանքով:

2016թ. ՔԿՀ-ներում արձանագրվել է մահվան 29 դեպք, որից 9-ը՝ սիրտ-անոթային հիվանդությունների, 3-ը՝ գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարման, 2-ը՝ ընդհանուր ինտոքսիկացիայի, 8-ը՝ այլ հիվանդությունների և 7-ը ինքնասպանության հետևանքով: Մահվան 14 դեպքը գրանցվել է ՔԿՀ-ներում, 8-ը՝ քաղաքացիական բժշկական հաստատություններում: ԱՆ ՔԿՀ-ներում մահացության դեպքերից 9-ով հարուցվել են քրեական գործեր, որոնցից միայն 1 քրեական գործով է նախաքննությունը շարունակվում: Մնացած քրեական գործերով վարույթը կամ կասեցվել է, կամ կարճվել:

2017 թ. ՔԿՀ-ներում արձանագրվել է մահվան 17 դեպք, որից 8-ը՝ սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների, 2-ը՝ գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարումների, 2-ը՝ ինքնասպանության և 5-ը այլ հիվանդությունների հետևանքով / Տես **Գծապատկեր 3/:**

Այսպիսով՝ 2011-2017թթ. գրանցվել է մահվան ընդհանուր 191 դեպք:



Հատկանշական է, որ 2016թ. կտրուկ աճել է այլ հիվանդություններից մահացածների թիվը՝ ընդամենը 2 դեպքով զիջելով նախորդ 5 տարիների դեպքերին: Արձանագրենք, որ ոչ ՔԿՀ-ում, ոչ քաղաքացիական բժշկական հաստատության որևէ աշխատակից/բժիշկ պատասխանատվության չի ենթարկվել այս դեպքերից և ոչ մեկի համատեքստում:

Նշենք նաև, որ 2015թ. ընթացքում ծանր հիվանդությունների պատճառով պատժի հետագա կրումից ՔԿՀ-ներից ազատ է արձակվել ընդամենը 9 անձ, 2016թ.՝ 7 անձ, իսկ 2017թ.՝ 6 անձ:

Այսպիսով նախորդ տարիների համեմատ 2017թ. նվազել է ծանր հիվանդության հիմքով պատժի կրումից ազատ արձակվածների թիվը:

Ինքնասպանության դեպքեր

2011-2017թթ. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում գրանցվել է ինքնասպանության 27 դեպք:

2011 և 2016 թթ. ընթացքում արձանագրվել է ինքնասպանության ամենաբարձր ցուցանիշը՝ 7-ական դեպք, իսկ ամենացածր ցուցանիշը՝ 2013 և 2017թթ.՝ 2-ական դեպք: 2012, 2014 և 2015թթ. գրանցվել է ինքնասպանության 3-ական դեպք: /Տես **Գծապատկեր 4/:**



2016թ. արձանագրված ինքնասպանության բոլոր 7 դեպքերով հարուցվել են քրեական գործեր:

2017թ. արձանագրած ինքնասպանության 2 դեպքերով անցկացվել է 2 ծառայողական քննություն, որոնցից 1-ի արդյունքներով քրեակատարողական ծառայողների գործողություններում կարգապահական խախտման տարրեր չեն հայտնաբերվել, իսկ 1 ծառայողական քննություն կասեցվել է:

Ինքնավնասումներ

2016թ. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է ինքնավնասման 879 դեպք և կանխվել է ինքնավնասման 135 դեպք: Հատկանշական է, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում նշված ժամանակահատվածում շուրջ 250 ինքնավնասման դեպքերը կատարվել են ընդամենը 2 դատապարտյալի կողմից: Ինքնավնասումները հիմնականում դրսևորվել են աջ և/կամ ձախ նախաբազուկների, որովայնի, պարանոցի վնասումներով: Արձանագրվել են նաև ոտքերը հատակին գամելու դեպքեր:

2017թ. ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է ինքնավնասման 607 դեպք, իրականացված սոցիալ-հոգեբանական բնույթի աշխատանքների արդյունքում կանխվել է ինքնավնասման 190 դեպք:

2017թ. ընթացքում «Գորիս» և «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկներում ինքնավնասման դեպքեր չեն արձանագրվել: Ամենաշատ դեպքերը արձանագրվել են «Նուբարաշեն» և «Արմավիր» ՔԿՀ-ներում՝ համապատասխանաբար 211 և 174 դեպք: «Դատապարտյալների հիվանդանոց»-ում գրանցվել է ինքնավնասման 68 դեպք, «Հրազդան»-ում՝ 53, «Վանաձորում»՝ 40, «Արթիկ»-ում՝ 29, «Աբովյան»-ում՝ 12, իսկ «Վարդաշեն»-ում՝ 8 դեպք: Ինքնավնասման 5-ական դեպք է արձանագրվել «Սևան» և «Կոշ» ՔԿՀ-ներում, ինչը 2017թ. ընթացքում արձանագրված ինքնավնասումների ամենացածր ցուցանիշն է /Տես **Գծապատկեր 5/:**



Ինքնավնասումների պատճառները հիմնականում կապված են քրեական գործերի, տեղաբաշխման, անձնական խնդիրների հետ, որոշ դեպքերում ինքնավնասում են կատարում հոգեկան անհավասարակշիռ վիճակում, որոշ դեպքերում էլ՝ ներկայացվում են անօրինական պահանջներ:

Յուրաքանչյուր ինքնավնասման դեպքով կազմվել են նյութեր, անցկացվել է հետաքննություն, մինչդեռ ծառայողական քննություններ չեն անցկացվել:

Ինքնավնասումների դեպքերի ուսումնասիրության արդյունքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը (այսուհետ՝ Դիտորդների խումբ) այն եզրակացությանն է հանգել, որ արդյունավետ քննություն չի տարվել պատճառները և քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների հնարավոր մեղքի հավանականությունը պարզելու համար: Չեն քննվել մի շարք հարցեր, օրինակ, ինչպես էր հնարավոր կանխել ինքնավնասումները, կամ ինքնավնասումները արդյոք պատճա՞ռ են դատապարտյալների հետ տարվող ոչ բավարար կամ արդյունավետ սոցիալ-հոգեբանական աշխատանքների:

Կատարված աշխատանքները, ըստ էության, դեռևս բավարար արդյունքի չեն հանգեցրել, հետևապես՝ անհրաժեշտ են նոր մոտեցումներ, ինչը կարող է համադրվել քրեակատարողական հիմնարկների փորձի հետ: Արդյունքում հնարավոր է մշակել նոր ռազմավարություն՝ ոլորտում առկա խնդիրները հաղթահարելու հարցում:

Ուստի, կարևորելով ՔԿՀ-ներում ինքնավնասումների հոգեբանական դրդապատճառների բացահայտումը, վերլուծությունը, ինչպես նաև դրանց կանխարգելմանն ուղղված քայլերի մշակումը՝ Դիտորդների խումբը 2017թ. նախնական պայմանավորվածություն է ձեռք բերել բարձր որակավորում ունեցող հոգեբանների հետ, ովքեր պատրաստակամություն են հայտնել այցելել «Դատապարտյալների հիվանդանոց»՝ ինքնավնասում կատարած անձանց հետ հոգեբանական աշխատանքներ կատարելու նպատակով:

Նշված հոգեբանների մուտքը «Դատապարտյալների հիվանդանոց» ապահովելու, ինչպես նաև հոգեբանական աշխատանքները կազմակերպելու հարցով Դիտորդների խմբի անդամները 2017թ. նոյեմբերի 30-ին դիմել են ՀՀ արդարադատության նախարարություն:

Մինչդեռ Դիտորդների խմբի առաջարկը նախարարությունը մերժել է՝ պատճառաբանելով, որ քրեակատարողական հիմնարկները համալրված են հոգեբան մասնագետներով, ովքեր իրականացնում են ինքնավնասումների հոգեբանական դրդապատճառների բացահայտում և պլանավորում են կանխարգելիչ միջոցառումներ: Իսկ անհրաժեշտության դեպքում հոգեբան մասնագետներ են հրավիրվում «Այգ» հոգեբանական ծառայությունների կենտրոնի կողմից՝ քրեակատարողական վարչության և կենտրոնի միջև կնքված հուշագրի շրջանակներում:

2017թ. դեկտեմբերի 27-ի գրությամբ Դիտորդների խումբը արդարադատության նախարարությանը առաջարկել է կրկին քննարկել ներկայացված հոգեբաններին քրեակատարողական հիմնարկներ մուտք թողնելու թույլտվության տալու հարցը:

Գրությանը ի պատասխան՝ արդարադատության նախարարությունը կալանավորված անձանց և դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների իրականացմանը նպաստելու նպատակով քննարկում է կազմակերպել Դիտորդների խմբի և քրեակատարողական վարչության պետի հետ:

Քննարկման ընթացքում քրեակատարողական վարչությունն առաջարկել է խմբի կողմից ներկայացված հոգեբանների և ՔԿՀ-ների հոգեբանների հետ հանդիպում կազմակերպել՝ հետագա անելիքները քննարկելու համար: Սակայն նշված հոգեբանների ՔԿՀ մուտքի թույլտվություն տրամադրելու առաջարկը դարձյալ մերժել են՝ պատճառաբանելով ծանրաբեռնվածությունը:

ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

Խմբի գործունեության խոչընդոտումներ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների Խումբը 2016թ. բարձրաձայնում է Խմբի աշխատանքի սահմանափակումների և խոչընդոտումների վերաբերյալ, քանի որ ավելի քան 10 տարիների գործունեության ընթացքում Խմբի աշխատանքները երբեք այնպես չեն խոչընդոտվել, ինչպես 2016թ. ընթացքում:

Դիտորդների խումբը ստանում է բազմաթիվ ահազանգեր ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պահվող անձանցից և նրանց հարազատներից՝ քրեակատարողական հիմնարկներում մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ, սակայն այցելություններ կատարելիս աշխատանքները խոչընդոտվում են ՀՀ ԱՆ ՔԿՀ-ների աշխատակիցների կողմից:

Խմբի աշխատանքների խոչընդոտման արատավոր պրակտիկան սկիզբ է առել 2016թ. մարտ ամսից և շարունակվում է մինչ օրս:

2017թ. հունվարի 10-ին Խմբին է դիմել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի նախկին կալանավոր Հ.Հ.-ի պաշտպանը՝ հայտնելով, որ իր պաշտպանյալը 2016թ. դեկտեմբերի 30-ին «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ից տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ՝ առանց իր անձնական իրերի, նույնիսկ պաշտպանից գաղտնի, քանի որ իրավասու մարմինները պաշտպանին չեն հայտնել Հ.Հ.-ի գտնվելու վայրի մասին: Նաև տեղեկացրել է, որ Հ.Հ.-ն չունի հագուստ և հիգիենայի պարագաներ:

Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խմբի աշխատանքները որոշ կալանավորված անձանց այցելելու մասով պարբերաբար խոչընդոտվել են, և Խմբի անդամները հնարավորություն չեն ունեցել հանդիպելու Հ.Հ.-ին և տեղում ծանոթանալու նշված հանգամանքներին, Խումբը 2017թ. հունվարի 12-ին դիմել է ՀՀ ԱՆ՝ առաջարկելով պարզաբանել Հ.Հ.-ին առանց անձնական իրերի ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ տեղափոխելու, ինչպես նաև փաստաբանից նրա տեղը թաքցնելու հանգամանքները:

Խմբի դիրքորոշմամբ՝ փաստաբանի կողմից բարձրացված հարցերը պարունակում են անմարդկային վերաբերմունքի տարրեր:

2017 թվականի փետրվարի 14-ին Խմբի անդամները այցելություն են կատարել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ և ցանկություն հայտնել հանդիպելու Ա.Ս.-ին:

Սակայն ՔԿՀ-ի անձնակազմը դիտորդներին տեղեկացրել է, որ Ա. Սարգսյանի վերաբերյալ առկա է քննիչի որոշում՝ կալանավորված անձի՝ արտաքին աշխարհի հետ կապը արգելելու վերաբերյալ, իսկ հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդների՝ խուց մտնելը կամ ազատազրկված անձին առանձին հանդիպելը հավասարազոր է տեսակցության[60]:

Հատկանշական է այն փաստը, որ 2017 թվականի փետրվարի 13-ին ՀՀ ազգային ժողովի պատգամավորներ Նիկոլ Փաշինյանը և Էդմոն Մարուքյանն այցելություն են կատարել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, և նրանց թույլատրել են տեսակցել Ա. Սարգսյանին:

Ստեղծված իրավիճակում քննիչի որոշումը փաստացի տարածվել է միայն Դիտորդների խմբի անդամների վրա, ինչը զուրկ է որևէ իրավական հիմքից:

2017 թվականի փետրվարի 22-ին Դիտորդների խմբի անդամներն ահազանգի հիման վրա այցելություն են կատարել «Երևան-Կենտրոն» ՔԿՀ: Խմբի անդամները այցելության ընթացքում ցանկություն են հայտնել հանդիպել Վահան Շիրխանյանին,

[60] http://pmg.am/hy/news/successful-cases/2017-02-15-13-34-06

սակայն ՔԿՀ-ի անձնակազմը տեղեկացրել է, որ Վ. Շիրխանյանի վերաբերյալ առկա է քննիչի որոշում՝ կալանավորված անձի՝ արտաքին աշխարհի հետ կապը արգելելու վերաբերյալ, իսկ դիտորդների՝ խուց մտնելը կամ ազատազրկված անձին առանձին հանդիպելը հավասարազոր է տեսակցության[61]:

2017թ. մարտի 6-ին Խումբը այցելություն է կատարել ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ՝ մամուլում տեղ գտած հայտարարության հիման վրա՝ «Վահան Շիրխանյանը հայտնվել է ՔԿՀ ամենավատ ու գերխոնավ խցում՝ պաշտպանը ահազանգում է»[62]:

Դիտորդները ցանկություն են հայտնել հանդիպել և զրուցել Վահան Շիրխանյանի հետ: ՔԿՀ անձնակազմը, սակայն, արձագանքել է, որ առկա է կալանավորված անձի տեսակցությունները սահմանափակող քննիչի որոշում, ըստ որի՝ արգելվում է վերջինիս կապը արտաքին աշխարհի հետ: Այդ արգելքը տարածվում է նաև հասարակական դիտորդների նկատմամբ[63]:

Դիտորդները ցանկություն են հայտնել առանց վերջինիս հետ հանդիպելու դիտարկել այն խուցը, որտեղ պահվում է Վահան Շիրխանյանը: Վայրկյաններ անց ՔԿՀ անձնակազմը տեղեկացրել է, որ Վ. Շիրխանյանը **«ի վիճակի չէ դուրս գալ խցից»:**

Դիտորդներին մտահոգության տեղիք է տվել նաև այցի ընթացքում «Երևան Կենտրոն» ՔԿՀ պետի կողմից արձանագրված անհարգալից պահվածքը, այն է՝ վիրավորական որակումները, ինչպես Խմբի, այնպես էլ Վ. Շիրխանյանի փաստաբանի նկատմամբ:

Հիմք ընդունելով վերը ներկայացվածը՝ Խումբը արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանին է դիմել գրությամբ՝ արձանագրելով, որ Վ. Շիրխանյանին հանդիպելը և վերջինիս հետ զրուցելը **արգելելը** կամայական խոչընդոտ է դիտորդների օրինական աշխատանքի համար:

Ավելին, այն դիրքորոշումն է արտահայտել, որ նման արգելքը ողջամիտ կասկածներ է հարուցում այն մասին, որ «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում Վ. Շիրխանյանի պահման պայմանների վերաբերյալ տարածված մամուլի տեղեկատվությունը հավաստի է:

Նաև ՔԿՎ վարչակազմի կողմից ոչ մասնագիտական մոտեցումն ու հայտարարությունը մտահոգիչ է համարել դատապարտված և կալանավորված անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Ի պատասխան՝ ՀՀ ԱՆ ՔԿՎ-ն տեղեկացրել են, որ չի հիմնավորվել ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ ծառայողների կողմից ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու և ծառայողական լիազորությունները վերազանցելու դեպքը, հետևաբար ծառայողական քննություն նշանակելու առիթն ու հիմքերը բացակայում են:

2017թ. մարտի 13-ին Դիտորդների խումբը գրությամբ դիմել է արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանին:

Խումբն իր վրդովմունքը և մտահոգությունն է հայտնել ՔԿՀ-ներում հասարակական դիտորդների, անազատության մեջ պահվող անձանց և վերջիններիս շահերը պաշտպանող փաստաբանների նկատմամբ ՔԿՀ-ների աշխատակիցների կողմից անբարյացկամ և ոչ կոռեկտ վերաբերմունքի, արված արտահայտությունների կապակցությամբ:

ՔԿՀ-ների աշխատակիցների և մասնավորապես պետերի նման վերաբերմունքը որակելով որպես համակարգում առկա ամենաթողության և անպատժելիության արդյունք՝ Խումբն առաջարկել է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ քրեակատարողական համակարգում նկարագրված խնդիրը վերացնելու ուղղությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին շրջանում ՀՀ ԱՆ քրեակատարողական

[61] http://www.pmg.am/hy/news/successful-cases/2017-02-24-13-59-24

[62] https://www.pastinfo.am/hy/news/2017/03/05/%D5%8E%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6-%D5%87%D5%AB%D6%80%D5%AD%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%B6%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%A1%D5%B4%D5%A5%D5%B6%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BF-%D5%AD%D6%81%D5%B8%D6%82%D5%B4/516780

[63] http://pmg.am/hy/news/successful-cases/2017-03-06-11-01-38

հիմնարկները սկսել են խոչընդոտել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների Խմբի աշխատանքներին, մասնավորապես չեն թույլատրում հանդիպել այն կալանավորված անձանց հետ, ում նկատմամբ առկա է քննիչի կողմից տեսակցությունների վերաբերյալ արգելք, 2017թ. **մարտի 17-ին** դիտորդները ընթացիկ հաշվետվությամբ դիմել են արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանին՝ խնդրելով տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում քանի կալանավորված անձ կա, որոնց վերաբերյալ նախաքննական մարմինների կողմից կիրառվել է սահմանափակում տեսակցությունների նկատմամբ/*Տես Աղյուսակ 1/:*



Այսպես, 2017թ. առաջին կիսամյակում ՀՀ ԱՆ «Աբովյան» և «Արթիկ» ՔԿՀ-ներում նախաքննական մարմնի կողմից տեսակցությունների նկատմամբ սահմանափակում կիրառված կալանավորված անձինք չեն պահվել:

ՀՀ ԱՆ «Գորիս» ՔԿՀ-ում պահվող կալանավորված անձանցից 1-ի (մեկ) նկատմամբ է կիրառվել սահմանափակում՝ մերձավոր ազգականների, զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ տեսակցությունները, ինչպես նաև հեռախոսային խոսակցությունները արգելվել են, մյուսների նկատմամբ արգելանք չկա:

Նախաքննական մարմինների կողմից ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ-ում պահվող 2 (երկու) կալանավորված անձանց նկատմամբ կիրառվել է տեսակցությունների սահմանափակում:

ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ում պահվող կալանավորված անձանցից միայն 2-ն (երկու) են, որոնց վարույթն իրականացնող մարմինն արգելել է տեսակցությունն ու հեռախոսազանգերն ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների և այլ անձանց հետ:

ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ-ում պահվող 4 (չորս) կալանավորված անձանց նկատմամբ առկա են տեսակցությունների և հեռախոսային խոսակցություններն արգելելու մասին որոշումներ:

ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում 7 (յոթ) կալանավորված անձանց նկատմամբ առկա է հեռախոսային խոսակցությունների, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվամիջոցների և այլ անձանց հետ խոսակցությունները արգելելու մասին նախաքննական մարմինների որոշում: Կալանավորված անձանցից մեկին մասնակի՝ թույլատրել նրան տեսակցել իր մերձավոր ազգականների հետ:

ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում քննիչի կողմից տեսակցությունների և հեռախոսազանգերի վերաբերյալ որոշումներ կայացվել են 9-ը (ինը) կալանավորված անձանց նկատմամբ:

ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում պահվող արգելանք ունեցող կալանավորված անձինք 20-ն (քսան) են:

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում կալանք կրող թիվ 682 կալանավորված անձանցից թվով 48-ի նկատմամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ սահմանվել է արգելանք տեսակցությունների և հեռախոսազանգերի վրա, իսկ չորսի նկատմամբ սահմանվել է մասնակի արգելանք:

2017 թվականի ապրիլի 2-ին Խմբի անդամները այցելություն են կատարել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ և ցանկացել դիտարկել խցերի պայմանները, սակայն ՔԿՀ-ի աշխատակիցները տեղեկացրել են, որ չեն կարող թույլ տալ, քանի որ Խմբի անդամները պետք է անցնեն ընտրական տեղամասի միջով: Նույն օրը Խմբի անդամները, ահազանգի հիման վրա, այցելել են ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ: Այնտեղ նույնպես Խմբի անդամներին ներս չեն թողել՝ պատճառաբանելով, որ ընտրություններ են: Խնդրին լուծում տալու համար խմբում ներգրավված հասարակական կազմակերպությունները հանցագործության մասին հաղորդումներ են ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայություն, որոնց քննությունը դեռևս շարունակվում է, սակայն որևէ արդյունավետ քննություն չի ապահովվում:

Վերոգրյալի հիման վրա Խումբը 2017թ. ապրիլի 3-ին ընթացիկ հաշվետվությամբ դիմել է ՀՀ ԱՆ:

Հաշվետվությանն ի պատասխան՝ ՀՀ ԱՆ-ից տեղեկացրել են, որ վերոնշյալ դեպքի վերաբերյալ հրապարակումներ են կատարվել համապատասխանաբար «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի կայքէջերում՝ առանց նախապես մեկնաբանություններ ստանալու ՀՀ ԱՆ-ի կողմից՝ խախտելով Խմբի գործունեության էթիկայի կանոնները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկել են քննարկել «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի պատասխանատվության ենթարկելու հարցը և արդյունքների մասին հայտնել ՀՀ ԱՆ-ին:

Խնդրին լուծում տալու համար Խմբում ներգրավված հասարակական կազմակերպությունները հանցագործության մասին հաղորդումներ են ներկայացրել ՀՀ Հատուկ քննչական ծառայություն, որի քննությունը դեռևս շարունակվում է և որևէ արդյունավետ քննություն չի ապահովում:

Խմբի դիրքորոշմամբ ՀՀ ԱՆ կողմից ներկայացված պատասխան գրությունը առհասարակ չի բխել Խմբի ներկայացրած հաշվետվության բովանդակությունից: Ավելին՝ իրավական գնահատական չի տրվել այն հանգամանքին, թե արդյոք «Նուբարաշեն» և «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ների աշխատակիցները թո՞ւյլ են տվել ոչ իրավաչափ գործողություններ, և տվյալ ուղղությամբ որևէ քննություն չի կատարվել:

Ի պատասխան ՀՀ ԱՆ ՔԿՎ 2017թ. ապրիլի 4-ի N 04/16.2/5308-17 գրության, Խումբը հայտնել է, որ 2017 թ-ի ապրիլի 2-ին Խմբի անդամներ Արման Սահակյանը և Հասմիկ Հարությունյանը ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ցանկացել են իրականացնել 2017թ. ապրիլի 2-ին Հայաստանում անցկացվող Ազգային Ժողովի ընտրությունների դիտորդություն, դրա համար նրանք որպես դիտորդ հավատարմագրված են եղել «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի» Վանաձորի գրասենյակ ՀԿ-ի կողմից (Կազմակերպությունը դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված է եղել կենտրոնական ընտրական հանձնաժողովում):

Այս կապակցությամբ նշել է, որ ընտրական իրավունքը նույնպես հանդիսանում է ազատազրկված անձանց իրավունքներից մեկը, ու այս հանգամանքը որևէ կերպ հակասության մեջ չի մտնում Խմբի անդամների առջև դրված առաքելության հետ:

Միևնույն ժամանակ ՀՀ արդարադատության նախարարին 2017թ. ապրիլի 3-ին ուղղված թիվ 17-22 գրությամբ նշել է, որ ընտրական գործընթացին որպես դիտորդ մասնակցելու սահմանափակման վերաբերյալ Խմբի անդամները (հետևաբար և Խումբը) որևէ խնդիր չեն բարձրացրել:

Ինչ վերաբերվում է գրությամբ արտահայտած այն մտքին, որ ապրիլի 2-ին ունեցած հեռախոսազրույցի ընթացքում Խմբին ներկայացվել է, որ վերոնշյալ անձինք ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ կարող են մուտք գործել որպես ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամ՝ բացառապես իրականացնելով դիտորդական խմբի անդամին վերապահված լիազորությունները, սակայն խմբի ադամների հետ քննարկելուց հետո այս տարբերակը Խմբի համար ընդունելի չի եղել, ապա այս կապակցությամբ դիտորդները հայտնել են, որ ինչպես ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարին ուղղված 2017թ. ապրիլի 3-ի թիվ 17-22 գրությամբ, Խմբի անդամների աշխատանքներին խոչընդոտելու վերաբերյալ բարձրացված հարցերը վերաբերվել են բացառապես Խմբի անդամների՝ որպես ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամներ իրենց առաքելությունը կատարելուն:

Ինչ վերաբերվում է Խմբի դիրքորոշմանը՝ Արման Սահակյանի և Հասմիկ Հարությունյանի խմբի անդամի լիազորությունների դադարեցման հարցին, ապա Խումբը հայտնել է, որ 2017թ. ապրիլի 5-ի ժողովում քննարկվել է հիշյալ անդամների կողմից վարքագծի կանոնների հնարավոր խախտում թույլ տալու հարցը:

Խումբը մանրամասն ուսումնասիրել է տվյալ հարցը, որի արդյունքում պարզվել է, որ Խմբի աշխատանքների խոչընդոտման վերաբերյալ Արման Սահակյանը 02.04.2017թ. տեղեկատվություն է տեղադրել իր facebook-յան էջում, որից հետո՝ հայտարարություն է հրապարակել՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կայքում, որը հետագայում տարածվել է համացանցով, այդ թվում տեղադրվել է նաև «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի կայքում:

Հաշվի առնելով, որ հայտարարության տարածման հեղինակը հանդիսացել է Ա.Սահակյանը, Խումբը արձանագրել է վարքագծի կանոնների խախտում և նկատողություն է հայտարարել Ա.Սահակյանին: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ Ա.Սահակյանի վարքագիծը պայմանավորված է եղել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Կենտրոն» ՔԿՀ-ների աշխատակիցների ակնհայտ անօրինական գործողությունների և Խմբի անդամների նկատմամբ դրսևորված անհարգալից վերաբերմունքի հետ, ինչպես նաև, որ Խումբը նախկինում չի արձանագրել Ա.Սահակյանի կողմից վարքագծի կանոնների խախտում և վերջինս ընդունել էր իր կողմից թույլ տված վարքագծի կանոնների խախտման փաստը, Խումբը չի դադարեցրել Արման Սահակյանի լիազորությունները՝ որպես խմբի անդամ:

2017 թվականի սեպտեմբերի 27-ին Դիտորդների խմբի անդամները «Նուբարաշեն» ՔԿՀ կատարած այցի ընթացքում հանդիպել են կալանավորված անձ Ա. Ք.-ին: Հանդիպման ժամանակ Ա. Ք.-ի ձախ աչքն ամբողջությամբ կապտուկի մեջ էր: Բացի այդ, դիտորդների գնահատմամբ, Ա. Ք.-ն գտնվում էր հոգեբանորեն ընկճված և լարված վիճակում: Նշված հանգամանքները խմբի անդամների մոտ համոզմունք են ձևավորել, որ Ա. Ք.-ի կյանքի և առողջության համար առկա է լուրջ սպառնալիք:

2017 թվականի հոկտեմբերի 5-ին և հոկտեմբերի 13-ին Խմբի անդամները կրկին այցելություններ են կատարել՝ հանդիպելու նշված անձին, սակայն նրանց աշխատանքը խոչընդոտվել է: Հիմնարկի ղեկավարությունը չի թույլատրել հանդիպել կալանավորված անձին՝ պատճառաբանելով, որ քննիչի կողմից առկա է տեսակցությունների արգելք:

Դիտորդները հոկտեմբերի 6-ին և 23-ին համապատասխանաբար թիվ 17-67 և 17-69 ընթացիկ հաշվետվություններով դիմել են *արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանին*՝ առաջարկելով միջոցներ ձեռնարկել Դիտորդների խմբի անդամների աշխատանքը չխոչընդոտելու ուղղությամբ և քննարկել նախաքննության

մարմինների կողմից տեսակցությունների արգելքի վերաբերելիությունը Դիտորդների խմբի նկատմամբ[64]:

Ի պատասխան Խմբի թիվ 17-67 ընթացիկ հաշվետվության՝ ՀՀ ԱՆ-ից հայտնել են, որ կալանավորված անձ Ա. Ք-ի անվտանգությունը ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ապահովված է, նրա կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգ չկա: Իսկ կալնավորված անձի աչքի տակ առկա կապտուկի վերաբերյալ նախապատրաստվում են նյութեր:

Ինչպես նաև հայտնել են, որ «ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի վարչակազմի կողմից Խմբի անդամներից որևէ մեկին տեսակցություն չի տրամադրվել: Միաժամանակ պարզվել է, որ 2017թ. սեպտեմբերի 29-ին՝ ժամը 12:50-ից մինչև 13:45-ն ընկած ժամանակահատվածում, կալանավորված անձ Ա. Ք-ին տեսակցել է վերջինիս պաշտպան Ա.Ֆանյանը:

Նույն ժամանակահատվածում՝ ժամը 12:25-ից մինչև 13:40-ը ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում են գտնվել նաև Խմբի անդամներ Զ.Հովհաննիսյանը և Ս.Գաբրիելյանը, ովքեր քննչական գործողությունների կատարման համար հատկացված սենյակներից մեկում, ի չարս օգտագործելով դիտորդական խմբի առաքելությունն, առանց ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի վարչակազմի գիտության և թույլտվության, հնարավոր է, որ հանդիպած լինեին այնտեղ գտնվող կալանավորված անձ Ա.Ք.-ին:

Նշվածի կապակցությամբ Խումբը խնդրել է մանրամասնել, ինչ հիմնավորմամբ է նշվել, որ Ա.Ք.-ի անվտանգությունը ապահովված է, իսկ նրա կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգ չկա, այն դեպքում, երբ նույն գրությամբ նշել են, որ կալանավորված անձի աչքի տակ առկա կապտուկի վերաբերյալ նախապատրաստվում են նյութեր:

Խմբի դիրքորոշմամբ՝ ստացվում է, որ անձի նկատմամբ ենթադրյալ բռնության հանգամանքը դեռևս չպարզված, շուտափույթ հայտարարվում է, որ անվտանգության որևէ խնդիր չկա և ՔԿՀ-ում պահվող անձանց մոտ որևէ խնդիր չունի:

Խումբը անհանգստություն է հայտնել, որ ՔԿՀ-ներում անձի անվտանգության խնդիրների վերաբերյալ դրսևորվում է նման մակերեսային մոտեցում:

Հաջորդ խնդրի հետ կապված է այն հանգամանքի հետ, որ ՀՀ ԱՆ դիրքորոշմամբ՝ Խմբի անդամները ի չարս օգտագործելով իրենց առաքելությունը, առանց ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի վարչակազմի գիտության և թույլտվության, հնարավոր է, որ հանդիպած լինեին այնտեղ գտնվող կալանավորված անձ Ա.Քոչինյանին:

Նշվածի կապակցությամբ Խումբը հայտնել է, որ դիտորդները իրենց առաքելությունն իրականացնելու ընթացքում երբևէ զարտուղի մեթոդների չեն դիմել և չեն դիմում:

Իսկ իրականությունն այն է, որ նշված օրը, դիտորդները ցանկացել են հանդիպել Ա. Ք.-ին, վերջինիս հիմնարկի աշխատակիցները տեղեկացրել են դիտորդների այցի մասին, սակայն նա հրաժարվել է խցում հանդիպել դիտորդների հետ:

Այնուհետև, երբ դիտորդները քննչական սենյակներում հանդիպումներ են ունեցել այլ կալանավորված և դատապարտված անձանց հետ, հիմնարկի՝ դիտորդներին ուղեկցող աշխատակիցը հայտնել է, որ Ա.Քոչինյանը գտնվում է քննչական սենյակներում և կարող են անձամբ իրենից տեղեկանալ, ցանկանո՞ւմ է արդյոք հանդիպել դիտորդներին, թե ոչ և դիտորդներին ուղեկցել է նշված սենյակը, որտեղ փաստաբանի հետ տեսակցելիս է եղել Ա.Քոչինյանը:

Երբ դիտորդները հարցրել են, այս անգամ Ա.Քոչինյանը տվել է դիտորդների հետ հանդիպելու իր համաձայնությունը, որից հետո, Ա.Ք.-ի փաստաբանը հեռացել է և ներկա չի գտնվել դիտորդների հետ հանդիպմանը:

Պատասխան գրությամբ Խումբը տեղեկացրել է, որ նախ, դիտորդները Ա.Ք.-ին

[64] http://www.pmg.am/hy/news/successful-cases/2017-12-11-10-28-33

երբևէ չեն ճանաչել, և նրանք չէին կարող ենթադրել, որ այդ պահին նա կարող է գտնվել քննչական սենյակներից որևէ մեկում, բացի այդ, եթե դիտորդների հետ հանդիպումը տեղի է ունեցել առանց աշխատակիցների գիտության, ապա փաստաբանի հեռանալուց հետո ինչո՞ւ է Ա.Ք.-ը մնացել առանց հսկողության:

Խմբի կողմից նշված փաստարկները կարող են ապացուցվել տեսագրությամբ, քանի որ քննչական սենյակների միջանցքը տեսագրվում է: Եթե ՀՀ Արդարադատության նախարարությունը, իրոք, շահագրգիռ էր ճշմարտությունը բացահայտելու հարցում, ապա կարող էր ստանալ այդ տեսագրությունները, որից կարող էր անել ենթադրություններ:

Բացի այդ՝ անհիմն ենթադրություններ անելուց առաջ, եթե հաշվետվությամբ նշված հանգամանքները բավարար չէին, հնարավոր էր դիտորդների խմբից ստանալ լրացուցիչ տեղեկատվություն մանրամասների վերաբերյալ և այդ տեղեկատվությունը համադրել մնացած փաստերի հետ՝ ճշմարտությունը բացահայտելու համար:

Այս միջադեպի պատճառը, ըստ Դիտորդների խմբի, նաև այն է, որ 2016թ. սկսած, քրեակատարողական հիմնարկների կողմից սկսվեցին Խմբի աշխատանքների կամայական խոչընդոտումներ, ի հակառակ՝ օրենքի պահանջների և երկար տարիների ընթացքում ձևավորված իրավակիրառ գործունեության, չունենալով որևէ հիմնավորում, քրեակատարողական հիմնարկները դիտորդներին սկսեցին արգելել հանդիպել այն կալանավորված անձանց հետ, ում նկատմամբ առկա էր արգելք քննիչի կողմից: Թեև նախկինում երբևէ նման խնդիր չէր առաջացել: Դրա պատճառներից է նաև անպատժելիությունը և լուրջ հարցերին մակերեսային մոտեցումները:

2017թ. հոկտեմբերի 25-ին Խմբի անդամները այցելել են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ: Այցելության ժամանակ խմբի անդամները ցանկացել են հանդիպել Սերգեյ Կյուրեղյանին, ով գտնվում էր պատժախցում: Սակայն հիմնարկի աշխատակիցները չեն թույլատրել հանդիպել վերջինիս՝ պատճառաբանելով, որ քննիչի կողմից առկա է տեսակցությունների նկատմամբ մասնակի արգելանք (թույլատրում են միայն ընտանիքի անդամներին):

Վերոգրյալի հիման վրա՝ Խումբը թիվ 17-72 ընթացիկ հաշվետվությամբ առաջարկել է քայլեր ձեռնարկել Խմբի աշխատանքների խոչընդոտները հետագայում բացառելու ուղղությամբ:

2017թ. նոյեմբերի 15-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, հնարավոր բռնության վերաբերյալ ահազանգի հիման վրա Դիտորդների խմբի անդամները այցելել են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ՝ Գևորգ Սաֆարյանին հանդիպելու նպատակով:

Սակայն ՔԿՀ-ի պատասխանատու հերթապահը տեղեկացրել է, որ այդ պահին քնի ժամ է, և չի թույլատրում տեսակցել Գ. Սաֆարյանին:

Դեպքի վերաբերյալ Դիտորդների խմբի անդամները ‹‹Նուբարաշեն›› ՔԿՀ-ում կազմել են արձանագրություն:

2017թ. նոյեմբերի 16-ին Դիտորդների խմբի անդամները հրատապ հաշվետվությամբ դիմել են ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանին՝ Խմբի գործունեության խոչընդոտման խնդիրների և կալանավորված անձ Գ. Սաֆարյանի նկատմամբ կիրառված հնարավոր բռնության վերաբերյալ:

Խնդիրն այն է, որ նախկինում բազմիցս Խումբը անարգել ներս է մտել քրեակատարողական հիմնարկ նաև գիշերային ժամերին, սակայն երբևէ այդ պատրվակով խմբի աշխատանքները չեն խոչընդոտվել:

Դիտորդներն առաջարկել են ծառայողական քննություն անցկացնել և պատասխանատվության ենթարկել Խմբի աշխատանքները խոչընդոտած համապատասխան աշխատակիցներին[65]:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ քննության շահերից ելնելով՝ ձերբակալված

[65] http://pmg.am/hy/news/successful-cases/2017-12-01-13-41-15

կամ կալանավորված անձանց տեսակցությունը օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

Նույն օրենքի 48-րդ հոդվածի համաձայն, առանց հատուկ թույլտվության ձերբակալվածներին պահելու վայր և կալանավորվածներին պահելու վայր անարգել մուտքի և ելքի իրավունք ունեն՝

- Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը,
- Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահը, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորը, պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը կամ նրա համապատասխան տեղակալը,
- Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը, նրա տեղակալները, ինչպես նաև այն դատախազները, ովքեր օրենքով սահմանված կարգով հսկողություն են իրականացնում պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու նկատմամբ,
- ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վերադաս մարմինների պաշտոնատար անձինք,
- միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա,
- Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավասու պետական ծառայողները և հայեցողական պաշտոն զբաղեցնող իրավասու անձինք, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետները,
- Հայաստանի Հանրապետության այն դատավորները, ովքեր օրենքով սահմանված կարգով քննում են կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու կամ կալանքի տակ պահելու օրինականության հետ կապված հարցերը, ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքների և ազատությունների խախտման, ինչպես նաև ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերի այլ գործողությունների դեմ բողոքները,
- **<u>սույն օրենքի 47-րդ հոդվածով սահմանված՝ արգելանքի և կալանքի տակ պահելու կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդները:</u>**

Ինչպես երևում է վերոգրյալում, 48-րդ հոդվածում նշված մարմիններն ու անձինք հանդիսանում են օրենքով նախատեսված հենց այն բացառությունները, որոնց նկատմամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի արգելքը չի կարող տարածվել:

ՀՀ արդարադատության նախարարի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողության իրականացման կարգը և հասարակական դիտորդների խմբի կազմը սահմանելու մասին» 2005թ. նոյեմբերի 18-ի թիվ ՔՀ-66-Ն հրամանի 11-րդ կետով[66] հստակեցվել են դիտորդների Խմբի անդամների իրավասությունները, ըստ որի սահմանվել է, որ դիտորդների Խմբի անդամները իրավասու են անարգել այցելել քրեակատարողական հիմնարկներ և մարմիններ, ծանոթանալ տարաբնույթ փաստաթղթերի բովանդակությանը, այդ թվում՝ ազատազրկվածի կամ քրեակատարողական մարմինների հսկողության

66 http://pmg.am/hy/about-us/group-order

տակ գտնվող անձի համաձայնությամբ՝ նրա անձնական գործին և գրագրությանը, (բացի գաղտնի փաստաթղթերից,) հիմնարկի իրավիճակին, ինչպես նաև հանդիպել ազատազրկվածներին և քրեակատարողական մարմինների հսկողության տակ գտնվող անձանց: Անհրաժեշտության դեպքում կարող է կատարվել ձայնագրում, լուսանկարում, տեսագրում՝ պահպանելով սույն Կարգով կամ Խմբի գործունեության էթիկայի կանոններով կամ իրավական այլ ակտերով նախատեսված դրույթները:

Խմբի ստեղծման պահից երբևէ այդ հիմքով խմբի աշխատանքները չեն խոչընդոտվել: Խոչընդոտները սկսվել են 2016 թվականին՝ քաղաքական հնչեղություն ունեցող գործերով (Վահան Շիրխանյան, Ժիրայր Սեֆիլյան, «Սասնա Ծռեր» և հարակից գործեր): Այնուհետև այդ արգելքը տարածվել է նաև մյուս կալանավորված անձանց նկատմամբ:

Դիտորդների Խումբը խստագույնս դատապարտում է իր աշխատանքների խոչընդոտմանն ուղղված նման գործելակերպը և Խմբի աշխատանքների սահմանափակումը դիտարկում է որպես կալանավորված անձի հավանական խոշտանգման ենթարկելու վերաբերյալ փաստերը թաքցնելու փորձ, քանի որ Խմբի լիազորությունների սահմանափակումն անօրինական է և կրում է անհատական բնույթ:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից Դիտորդների խմբի 2016թ. տարեկան զեկույցի մեջ արձանագրված փաստերի ուսումնասիրություն

2017թ. հոկտեմբերի 30-ին տեղի է ունեցել Խմբի 2016թ. գործունեության տարեկան հաշվետվության շնորհանդես-քննարկումը, որի ժամանակ դիտորդները ներկայացրել են ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում 2016թ. իրականացված ուսումնասիրությունների արդյունքները և արձանագրված խնդիրները:

2017թ. նոյեմբերի 3-ին Խումբը ՀՀ գլխավոր դատախազության կողմից ստացել է գրություն մի շարք հարցադրումներով, որոնք վերաբերում էին զեկույցի շնորհանդես-քննարկման ընթացքում բանախոսների նշած այնպիսի խնդիրներին, ինչպիսիք են օրինակ՝ խցերի գերբնակեցումը, կոռուպցիոն դրսևորումները, խտրականությունը, խոցելի խմբերը, պահման պայմաններ:

Վերը նշված հանգամանքները պարզելու, ինչպես նաև դրանց ընթացքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով լուծելու նպատակով ՀՀ գխավոր դատախազության պատիժների և հարկադանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը Դիտորդների խմբին խնդրել է տրամադրել այդ փաստերը հիմնավորող և Խմբի տրամադրության տակ գտնվող նյութերը, այդ թվում՝ կալանավորված անձանց և դատապարտյալների հարցման արձանագրությունները և այդ անձանց վերաբերյալ անձնական տվյալներ[67]:

Գրության մեջ նաև նշվել է, որ տրամադրված տեղեկատվությունը կօգտագործվի գաղտնիության սկզբունքի կիրառմամբ՝ առաջնահերթություն տալով տեղեկատվություն տրամադրած դատապարտյալների և կալանավորված անձանց անձնական անվտանգության իրավունքի ապահովմանը:

Դիտորդների խմբի անդամները 2017թ. նոյեմբերի 20-ին գրությամբ պատասխանել են ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից տրված բոլոր հարցադրումներին:

Միևնույն ժամանակ Դիտորդների խմբի անդամները տեղեկացրել են, որ հարցումները դատապարտյալների և կալանավորված անձանց հետ կատարվել են անանուն և գաղտնիության պայմաններում, համապատասխանաբար որևէ տեղեկատվություն հարցված անձանց վերաբերյալ չի հավաքագրվել և չի պահպանվել, այդ իսկ պատճառով՝ հավելյալ տեղեկատվություն տրամադրել չեն կարող:

2017թ. դեկտեմբերի 12-ին Դիտորդների խումբը ստացել է ՀՀ գլխավոր դատախազություն, որտեղ նշվում է, որ Դիտորդների խմբի 2016թ. տարեկան հաշվետվությունը ուսումնասիրվել է նրանց կողմից:

Արդյունքում որոշում է կայացվել, որ հաշվետվությունը չի կարող դիտարկվել որպես քրեական գործ հարուցելու առիթ:

Սակայն այնտեղ նշված փաստերը ՀՀ գլխավոր դատախազության կողմից կուսումնասիրվեն ևս մեկ անգամ և հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում կձեռնարկվեն օրենքով նախատեսված համապատասխան միջոցներ:

Հիերարխիկ հարաբերություններ

Ինչպես նախորդ տարիներին, 2017 թվականը նույնպես արձանագրվել է ՔԿՀ-ներում չգրված «քրեական օրենքների» և հանցավոր հիերարխիկ միջանձնային համակարգի առկայությունը: Պետք է նշել, որ նման հարաբերությունների առկայությունը որոշ դեպքերում նույնիսկ որոշիչ դեր է ունենում ՔԿՀ ներսում ներքին հարաբերությունների կարգավորման համար: Ինչ վերաբերում է պատասխանատու պաշտոնատար անձանց, ապա վերջիններս ոչ միայն թերանում են միջոցներ ձեռնարկել, այլ նաև երբեմն համագործակցում են քրեական հեղինակությունների հետ և կարևորում նման

[67] http://pmg.am/hy/news/successful-cases/2018-01-24-12-51-54

հարաբերությունների առկայությունը: Ինչը բացատրվում է նրանով, որ նման դեպքերում ավելի հեշտ է կազմակերպել հիմնարկի կառավարումը:

Դիտորդները փաստում են նաև, որ ազատազրկված անձինք նման հարաբերությունների մասին հաճախ չեն բարձրաձայնում՝ ելնելով անվտանգության նկատառումներից, իսկ բարձրաձայնելու դեպքում՝ խնդրում են, որ խումբը չհրապարակի նման տեսակ տեղեկատվությունը:

Նման դեպքեր խումբը արձանագրել է նաև 2017 թվականի կտրվածքով: Արձանագրվել են իրավիճակներ, երբ ազատազրկված անձինք խմբին խնդրել են դիմել ԱՆ՝ այլ ՔԿՀ կամ այլ խուց տեղափոխվելու նպատակով, ելնելով զուտ տվյալ ՔԿՀ-ում կամ խցում չգրված «քրեական օրենքների» առկայությունից:

Դիտորդների խմբի անդամները տարբեր ՔԿՀ-ներ այցելությունների ժամանակ տեղեկատվություն են ստացել նաև այն մասին, որ քրեական հեղինակությունները ցանկության դեպքում կարող են այցելել ցանկացած խուց և ճնշում գործադրել դատապարտյալների նկատմամբ: Քանի որ քրեակատարողական հիմնարկները հագեցված են տեսախցիկներով, Խումբը դիմել է ՀՀ ԱՆ՝ տրամադրել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Արմավիր» ՔԿՀ-ների վերջին 1 ամսվա կտրվածքով տեսախցիկների տեսագրությունները:

Խմբի գրությանն ի պատասխան ԱՆ-ից տեղեկացրել են, որ ՀՀ ԱՆ ՔԿՎ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ների վարչակազմերի կողմից սահմանված կարգով ձեռնարկվում են համապատասխան միջոցներ կալանավորված անձանց, ինչպես նաև դատապարտյալների օրենքով սահմանված փոխհարաբերություններն ապահովելու՝ այդ թվում նաև կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից մեկ այլ կալանավորված անձի կամ դատապարտյալի իրավունքները ոտնահարելու փորձերը կանխելու ուղղությամբ:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 194-Ն հրամանով հաստատված կարգի առաջին գլխի 13-րդ կետի 3 ենթակետի համաձայն՝ Հիմնարկի անվտանգության ապահովման պլան՝ միջոցառումների համալրի պլան, որը ներառում է պահպանության ներքին և արտաքին օբյեկտների սխեմաները, պահպանության ներքին և արտաքին օբյեկտներում նշանակված մշտական պահակետերը, այդ պահակետերում անվտանգության ապահովման գործառույթներ իրականացնող ծառայողների՝ սույն կարգից բխող պարտականությունները, հիմնարկի այն ծառայողների ցուցակը (հասցեներով և հեռախոսահամարներով), ովքեր ենթակա են անմիջապես կանչվելու տագնապ հայտարարելու դեպքում, ղեկավար անձանց ցուցակը, որոնք պետք է ՊՀ-ի կողմից տեղեկացվեն իրավիճակի բարդացման պայմաններում, ընդ որում՝ պահպանության ներքին և արտաքին օբյեկտների սխեմաները, հաշվեցուցակային պահակետերը համարվում են գաղտնի:

Հիմք ընդունելով նշված դրույթը և հաշվի առնելով, որ տեսախցիկներով տեսագրված են ՀՀ ԱՆ ՔԿՀԺի հաշվեցուցակային պահակետերն՝ ՀՀ ԱՆ Նուբարաշեն և Արմավիր ՔԿՀ-ների տեսախցիկների տեսաձայնագրությունների տրամադրումը հիմնավորված չէ:

Խումբը ևս մեկ անգամ փաստում է, որ քրեակատարողական հիմնարկներում առկա ոչ կանոնադրական, քրեական ենթամշակույթի և չգրված օրենքներով հարաբերությունները ոչ միայն ազդում են ընդհանուր ներքին բարոյահոգեբանական վիճակի վրա, այլև լուրջ խոչընդոտներ են ստեղծում վատ վերաբերմունքի, խոշտանգումների և կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման համար:

Ամփոփելով ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում իրականացված մշտադիտարկման արդյունքները՝ դիտորդների Խումբը արձանագրել է, որ, ի թիվս այլ խնդիրների, շարունակում է օրակարգային մնալ նաև հետխորհրդային տարիներին ձևավորված քրեական ենթամշակույթի գոյությունը:

Խմբի կողմից ԱՆ ներկայացված օրենսդրական առաջարկները

2017 թվականի ընթացքում դիտորդների Խումբը հանդես է եկել նաև մի շարք օրենսդրական առաջարկություններով: Վերջիններս վերաբերել են՝

- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգերի վերաբերյալ
- Քրեակատարողական ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ
- Խմբի գործունեության կարգի վերաբերյալ
- 2018-2038թթ. քրեակատարողական համակարգում իրավիճակի բարելավման ծրագրի վերաբերյալ.
- քրեակատարողական հիմնարկներում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ապահովելու վերաբերյալ.
- քրեակատարողական օրենսգրքում նախաձեռնած փոփոխությունների վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առողջապահություն և բուժսպասարկում

1. ՔԿՀ-ներին ապահովել համապատասխան դեղորայքով, ժամանակակից սարքավորումներով՝ երաշխավորելով առաջնային պատշաճ բուժօգնություն:
2. Երաշխավորել կալանավորված անձի և/կամ դատապարտյալի՝ քաղաքացիական բժշկական հիմնարկում հետազոտվելու անհրաժեշտության դեպքում բժշկական հաստատությունն ու բժշկին՝ ընտրելու իրավունքը, հատկապես այն դեպքում, երբ ազատությունից զրկված անձն ինքն է հոգում հետազոտության ծախսերը:
3. ՔԿՀ-ներում բուժսպասարկման կազմակերպումն և իրականացումը փոխանցել ՀՀ առողջապահության նախարարության ենթակայությանը:
4. Իրականացնել ՔԿՀ բուժանձնակազմերի պարբերական մասնագիտական վերապատրաստումներ:
5. Վերանայել ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշմամբ սահմանված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկը և որոշումների կայացման գործընթացը, ընդլայնել որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկը:

Պահման պայմաններ

1. ՀՀ ԱՆ ՔԿՀ-ները համապատասխանեցնել ՀՀ օրենսդրության պահանջներին և միջազգային չափանիշներին՝ ազատությունից զրկված անձանց պահել միայն խցային տիպի սենյակներում՝ ըստ ուղղիչ հիմնարկի տիպերի՝ ապահովելով նրանց նվազագույն բնակելի տարածքով՝ 4քմ յուրաքանչյուր անձի համար:
2. «Նուբարաշեն» ՔԿՀ-ի առաջին հարկում փակել պատժախցային և կարանտինային մասնաշենքերը:
3. Կարճաժամկետ պլանի համար ձեռնարկել վերանորոգման աշխատանքներ «Նուբարաշեն» ՔԿՀ այն բոլոր խցերում, որտեղ պայմանները խնդրահարույց են: Երկարաժակմետ պլանով փոփոխությունների համար օրակարգում ներառել «Նուբարաշեն» ՔԿՀ հետագա շահագործման դադարեցման հարցը և այն նոր ՔԿՀ-ով փոխարինելու հնարավորությունները:
4. Քայլեր ձեռնարկել «Նուբարաշեն» ՔԿՀ աշխատակիցների համար աշխատանքային բարվոք պայմաններ ապահովելու համար:
5. Բարելավել «Գորիս» ՔԿՀ շենքային պայմանները, երկարաժամկետ պլանի համար պլանավորել այն նոր հիմնարկով փոխարինելու հարցը:
6. Լուծել «Աբովյան» ՔԿՀ ոռոգման ջրի հարցը՝ ապահովելով կանաչապատ տարածքի պահպանումը հիմնարկում:
7. Անհապաղ վերանորոգել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ սանհանգույցները:
8. Հավասարապես արժանավայել կացարանային և խցային պայմաններ ապահովել «Արթիկ» ՔԿՀ-ում ազատազրկված անձանց համար:

Սնունդ և սննդի որակ

1. Օրենքով նախատեսել ՔԿՀ-ներում տրամադրվող սննդի փորձաքննություններ անցկացնելու հստակ ընթացակարգը, պարբերականությունը: Ապահովել փորձաքննությունների արդյունքների հրապարակայնությունը:
2. Բարելավել ՔԿՀ-ներում սննդի պատրաստման և պահման պայմանները:
3. Ապահովել առավել մեծ սննդային արժեք ունեցող սննդի տրամադրումը, պարբերաբար թարմացնել ճաշացանկերը՝ ապահովելով տրամադրվող սննդի բազմազանություն՝ մեկ շաբաթվա կտրվածքով:

4. Ուշադրություն դարձնել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց սննդի որակին ու բազմազանությանը:
5. Պրակտիկայում ապահովել հասանելիք դիետիկ և հավելյալ սննդի տրամադրումը:

Կոռուպցիոն դրսևորումներ

1. Բարելավել ՔԿՀ-ների աշխատողների աշխատանքային և սոցիալական պայմանները, բարձրացնել վերջիններիս աշխատավարձերն ու ներդնել խրախուսման մեխանիզմներ:
2. Ապահովել արդյունավետ պատասխանատվության միջոցներ ՔԿՀ աշխատակիցների կողմից կոռուպցիոն դրսևորումների մեջ ներգրավված լինելու դեպքերում:
3. Վերանայել ՔԿՀ-ում աշխատանքի ընդունվողների հանդեպ գործող ընդունելության պահանջները, սահմանել իրատեսական ու գործուն չափանիշներ:
4. Բարելավել և զարգացնել ՔԿՀ-ներում մատուցվող սոցիալ-հոգեբանական ծառայությունների որակը, ներդնել վերականգնողական արդարադատությանն ուղղված նոր ու գործուն ծրագրեր:
5. Վերացնել ՔԿՀ գերբնակեցումը, նախատեսել ՔԿՀում համապատասխան հաստատված քանակից ավելի դատապարտյալ և/կամ կալանավորված անձ հիմնարկ ընդունելու և պահելու օրենսդրական արգելք:
6. Վերանայել բջջային հեռախոսի՝ որպես արգելված իրի կիրառման պրակտիկան, օրինականացնել բջջային հեռախոսի օգտագործումը և սահմանել վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ:

Արգելված իրերի հայտնաբերում և գործողությունների ձեռնարկում

1. Ընդունել իրավական ակտ, որով կսահմանվի ՔԿՎ՝ հաշվառում վարելու պարտավորությունը, որի մեջ, ի թիվս այլ հաշվառման ենթակա տեղեկությունների, ներառված կլինեն
1. նշանակված տույժերը՝ ըստ արարքների և ՔԿՀ-ների,
2. բողոքարկված տույժերը՝ ըստ ՔԿՀ-ների,
3. հայտնաբերված բջջային հեռախոսների թիվը՝ ըստ ՔԿՀ-ների:
2. Կատարել արդյունավետ ծառայողական քննություն յուրաքանչյուր արգելված իր ՔԿՀ-ում հայտնաբերելու դեպքում:
3. Օրինականացնել ՔԿՀ-ներում բջջային հեռախոսների օգտագործումը: (Հիմնավորում՝ Դիտորդների խմբի կողմից 2014-2017 թթ. կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ ՔԿՎ-ն և այլ իրավասու մարմիններն ի զորու չեն կառավարել ՔԿՀ-ներ արգելված իրերի, մասնավորապես բջջային հեռախոսների ներթափանցումը, ինչն էլ, իր հերթին, հանգեցնում է բացահայտված[68] և չբացահայտված[69] հանցագործությունների):

Կանայք և անչափահասներ

1. «Աբովյան» ՔԿՀ-ի շենքային պայմանների և խոնավության վերացման ուղղությամբ կատարել հիմնանորոգման աշխատանքներ:
2. Լուծել անչափահաս ազատազրկվածների հանրակրթության մատչելիության խնդիրը, որպես պետության՝ օրենքով ամրագրված պարտավորություն, հնարավորություն տալով վերջիններիս կրթություն ստանալ հանրակրթական դպրոցներում:

[68] Տես, օրինակ, «Արթիկ» ՔԿՀ-ում արգելված իրեր են հայտնաբերել: Հասանելի է http://www.slaq.am/arm/news/1094877/

[69] Տես Դիտորդների խմբի 2013թ., 2014-2015թթ. զեկույցները: Հասանելի է http://pmg.am/hy/library/researches/106-2016-03-12-23-16-01 և http://pmg.am/images/2014-2015_PMG_Annual_report.pdf

3. Լուծել կանանց հիգիենայի և տաք ջրի հասանելության խնդիրը:Նախաձեռնել ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի №1543-Ն որոշման մեջ փոփոխություն՝ հաշվի առնելով ազատությունից զրկված կանանց ընդհանուր հիգիենայի պահպանման անհրաժեշտությունը:

4. Ընտանիքի, հատկապես երեխաների հետ կապն ամրապնդելու համար նախատեսել տեսազանգի հնարավորություն: Դիտարկել ՔԿՀ տարածքից դուրս երեխաների հետ շփման հնարավորությունները և օրենսդրական կարգավորումները:

5. Ավելացնել հոգեբանի ևս մեկ հաստիք՝ կանանց հոգեբանական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

6. Բարելավել ՔԿՀ զբոսանքի տարածքի և մարզադահլիճի վիճակը:

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում

1. Կատարել պրոբացիոն ծառայողների կադրային փոփոխություն՝ հագեցնելով վերականգնողական արդարարդատության մտածողությամբ օժտված մասնագետներով՝ հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, քրեագետներ և այլն:

2. Իրականացնել պրոբացիոն ծառայողների կարճաժամկետ և երկարաժամկետ վերապատրաստումներ:

3. Հնարավորինս նվազեցնել քրեակատարողական ծառայության դերը պատժից պայմանական վաղաժամկետ ազատման գործում:

4. Իրականացնել քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների պարբերական մասնագիտական կարողությունների զարգացում:

5. Ստեղծել քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների վարքագծի փոփոխության գնահատման ստատիկ և դինամիկ աշխատանքի համար պայմաններ (զբաղվածության ապահովում, մասնակցություն տարբեր միջոցառումների և այլն):

6. Սահմանել Քրեակատարողական հիմնարկի կողմից դատապարտյալի վերաբերյալ զեկույցի ներկայացման համար հստակ և իրատեսական չափանիշներ:

7. Օրենսդրությամբ նախատեսել ավելի կարճ ժամկետներ դատարանի կողմից ցմահ ազատազրկված դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը մերժելու դեպքում կրկին հարցը քննարկելու համար:

Հիերարխիկ հարաբերություններ

Ազատությունից զրկված անձանց դասակարգում՝ ըստ վերջիններիս քրեական հայացքների.

1. Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող բանտային քրեական մշակույթի հետևորդներին առանձնացնել այդ մշակույթի հետևորդ չհամարվող ազատությունից զրկված անձանցից:

Սոցիալական վերականգնողական ծառայությունների ուժեղացում

2. Ընդլայնել ՔԿՀ-ներում սոցիալական վերականգնողական ծառայություններն ու հնարավորությունները հետևյալ միջոցներով՝ մանկավարժների հետ հանդիպումների ժամ, օտար լեզվի ուսուցման հնարավորություններ, համակարգչի հմտությունների դասավանդում, սպորտային միջոցառումներին ներգրավվելու հնարավորություններ, խմբակային հոգեբանական ժամ և այն:

3. Նշված միջոցառումները կյանքի կոչելու համար ակտիվորեն համագործակցել հասարակական կազմակերպությունների հետ:

4. Խթանել դատապարտյալների զբաղվածությունը՝ ստեղծել աշխատատեղեր, ստեղծել բարենպաստ պայմաններ արհեստակցական միությունների ձևավորման համար, կազմակերպել պատրաստած ապրանքների վաճառք ինչպես առցանց, այնպես էլ այլ եղանակներով:

5. Անչափահաս երեխաներ ունեցող դատապարտյալների համար ավելացնել իրենց

երեխաների հետ ամսական կտրվածքով այցելությունների թիվը, իսկ մինչև հինգ տարեկան երեխաներ ունեցող կանանց շաբաթ-կիրակի օրերին թույլատրել վերադառնալ տուն՝ երեխաների խնամքի համար[70]:

6. Քրեակատարողական հիմնարկներում կազմակերպել հայրերի/մայրերի հետ երեխաների ժամ՝ խմբակային քննարկումների և հայրերի/մայրերի հետ որոշակի հարցերի շուրջ հանդիպումների տեսքով: Հանդիպումները պետք է կայանան երեխաների համար առավելագույնս հաճելի և բարենպաստ պայմաններում:

7. Սահմանել հաստիքներ մաքրման և սանիտարահիգիենիկ աշխատանքների համար, վերացնել նման աշխատանքները բացառապես խոցելի խմբերի կողմից իրականացնելու պրակտիկան:

Կադրային քաղաքականության և պայմանների վերանայում

1. Էականորեն բարձրացնել ՔԿՀ-ների աշխատակիցների աշխատավարձերը և ներգրավել որակյալ կադրեր: Ավելացնել աշխատակիցների սոցիալական երաշխիքները:
2. ՔԿՀ-ներում ավելացնել հսկիչների թիվը, նրանց համար ստեղծել ծառայողական բարեկարգ պայմանները, իսկ առկա պայմանները բարելավել (հանգստի սենյակ, ճաշասենյակ, աշխատասենյակ):
3. Իրականացնել կադրերի ռոտացիա, մասնավորապես ՔԿՀ-ների աշխատողներին որոշակի պարբերականությամբ տեղափոխել մի քրեակատարողական հիմնարկից մյուսը՝ կանխելով նաև կոռուպցիոն սխեմաների ձևավորումը[71]:
4. Անպատժելիության մթնոլորտի վերացում
5. Ապահովել կարգապահական միջոցների արդյունավետ կիրառումը վարչակազմի ներկայացուցիչների և ազատությունից զրկված անձանց նկատմամբ:
6. Կարգապահական վարույթի ընթացքում ապահովել անձի ընթացակարգային իրավունքները:
7. Ապահովել քրեական պատասխանատվության միջոցների արդյունավետ կիրառումը ինչպես ազատությունից զրկված անձանց, այնպես էլ ՔԿՀ վարչակազմի համար:

[70] Տես՝ Վրաստանի Քրեակատարողական օրենսգիրքի 72 հոդված, 13 գլուխ, լրացումը ուժի մեջ է մտել 2017թ.:

[71] Երևան քաղաքում գտնվող քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների համար նման տեղափոխությունը սոցիալական բարդություններ չի առաջացնի:

ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ.594-013
էլ. փոստ suren.krmoyan@justice.com

N 04/626781-18
«03» 11 2018թ.

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
(ՀԱՍՑԵ՝ ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓԱԿՈՒՂԻ 8, 112 ՍԵՆՅԱԿ)

Հարգելի՛ տիկին Հարությունյան,

Ի պատասխան Ձեր՝ 2018 թվականի օգոստոսի 8-ի թիվ 18-60 գրության՝ կից ներկայացնում եմ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2017 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մեկնաբանությունները: Խնդրում եմ ընդունել ի գիտություն, որ առաջիկա շաբաթվա ընթացքում Հաշվետվության վերաբերյալ կարող են տրամադրվել լրացուցիչ մեկնաբանություններ:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս քրեակատարողական համակարգում իրականացվում են լայնածավալ բարեփոխումներ՝ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը պատրաստակամ է քննարկման առարկա դարձնել դրանց վերաբերյալ առաջարկությունները, ինչպես նաև աջակցել մշտադիտարկման աշխատանքների իրականացմանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

Կատարող՝ Արփինե Սարգսյան
Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչություն
Հեռ. 594-021

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի (այսուհետ՝ Խումբ) 2017 թվականի տարեկան հաշվետվության մեջ (այսուհետ՝ Հաշվետվություն) անդրադարձ է կատարվել քրեակատարողական համակարգի մի շարք ոլորտներին, մասնավորապես՝ բժշկական օգնության և սպասարկման որակին, կալանավորված անձանց և դատապարտյալների սննդի կազմակերպմանը և սննդի որակին, կալանավորված անձանց և դատապարտյալների պահման պայմաններին, խոցելի խմբերի իրավունքներին, կոռուպցիոն դրսևորումներին, անվտանգության ապահովմանը, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատմանը և այլն:

Ստորև ներկայացնում ենք Հաշվետվության մեջ ընդգրկված՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներին առնչվող դիտարկումների վերաբերյալ համապատասխան նկատառումները[1]:

Մասնավորապես.

1. ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ

ՀՀ արդարադատության նախարարությունը Եվրոպայի Խորհրդի հետ համատեղ իրականացնում է «Ամրապնդել առողջապահությունը և մարդու

[1] 2017 թվականի և 2018 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված բարեփոխումներին և կատարված աշխատանքներին առավել մանրամասն Խումբը կարող է ծանոթանալ քրեակատարողական ծառայության պաշտոնական կայքէջում (https://ced.am/) հրապարակված հաշվետվություններում:

իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որի շրջանակներում համապատասխան փորձագետների կողմից կազմակերպվել է այցելություն ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ՝ բժշկական սարքավորումների ներկա վիճակին ծանոթանալու համար: Փորձագետների կողմից իրականացվել է առկա բժշկական պարագաների և սարքավորումների գնահատում, որի հիման վրա մշակվել է քրեակատարողական հիմնարկներին անհրաժեշտ բժշկական պարագաների, սարքավորումների տեսակների և քանակակազմի ցանկը, որը համաձայնեցվել է ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ: Փորձագետի կողմից մշակվել է նաև ցանկում ներառված սարքավորումների տեխնիկական նկարագրերը: Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպվել է վերոնշյալ ցանկով նախատեսված սարքավորումների գնումների մրցույթը, որի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից մինչև 2017 թվականի հուլիսի 10-ը համապատասխան սարքավորումները մատակարարվել են քրեակատարողական հիմնարկներ: Մասնավորապես՝ 11 քրեակատարողական հիմնարկներում առաջնային բժշկական օգնության տրամադրման համար արդեն իսկ ձեռք են բերվել 20 անուն 90 միավոր անհրաժեշտ բժշկական սարքավորումներ և պարագաներ, ինչպիսիք են՝ էլեկտրասրտագրիչներ, ականջադիտակներ, ակնադիտակներ, շաքարաչափեր, բակտերիոլոգիական լամպեր, գինեկոլոգիական բազմոց, բժշկական զննության բազմոցներ, INT գործիքների հավաքածուներ, վիրահատական գործիքների հավաքածուներ, գինեկոլոգիական գործիքների հավաքածու, սեղանի ավտոկլավներ, ատամնաբուժական համալիրներ՝ հավաքածուներով, չորօդային մանրէազերծիչներ, սառնարաններ և այլն:

Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների անձնակազմի համար կազմակերպվել է եվրոպական չափանիշներին համապատասխան վերապատրաստման դասընթացներ՝ առողջապահության, մարդու իրավունքների և բժշկական

էթիկայի թեմաներով: Վերոնշյալ ծրագրի շրջանակներում մշակվել է «Բժշկական էթիկա և մարդու իրավունքներ» և «Առողջության խթանման և կանխարգելման միջոցառումներ» խորագրերով դասընթացները, որոնց հիման վրա իրականացվել են քրեակատարողական ծառայության շուրջ 800 աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ: Միաժամանակ, բոլոր քրեակատարողական հիմնարկների թվով 14 հոգեբանների համար իրականացվել են մասնագիտական մեկ շաբաթյա դասընթացներ՝ մասնագիտական գիտելիքների և հմտությունների բարելավման նպատակով:

Հարկ է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված և ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 19-ի նիստի N 2 արձանագրային որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացման» հայեցակարգով առաջադրվել են քրեակատարողական առողջապահության ինստիտուցիոնալ անկախության վերաբերյալ հայեցակարգային լուծումներ: Հիմք ընդունելով վերը նշված հայեցակարգը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2018 թվականի մարտի 1-ին ընդունվել է N 204-Ն որոշումը, որի ուժով հիմնադրման միջոցով ստեղծվում է «Քրեակատարողական բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ՊՈԱԿ): Վերջինս իր գործունեությունն սկսելու է 2019 թվականի հունվարի 15-ից:

ՊՈԱԿ-ի ստեղծմամբ.

- կապահովվի քրեակատարողական համակարգի բժշկական ծառայությունների մասնագիտական և ֆինանսական անկախությունը,
- ՊՈԱԿ-ի համար կստեղծվի ձեռնարկատիրական գործունեության մասնագիտական որոշակի տեսակներով զբաղվելու հնարավորություն, ինչը հավելյալ ֆինանսական միջոցների ներգրավման աղբյուր կհանդիսանա,
- քրեակատարողական համակարգի բժշկական ծառայությունների համար հանրային առողջապահական համակարգին ինտեգրելու հնարավորության կստեղծվի,

- կապահովվի որակյալ բուժանձնակազմ ներգրավելու հնարավորությունը:

Միաժամանակ, մշակվել են համապատասխան օրենսդրական նախագծեր՝ ուղղված քրեակատարողական հիմնարկներում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների որակի, արդյունավետության բարձրացմանը:

Ինչ վերաբերում է բուժզննումների արդյունքում հայտնաբերված մարմնական վնասվածքներին, ապա հիշյալ իրավահարաբերությունները հստակ կանոնակարգված են ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլխով, ըստ որոնց կալանավորված անձանց պահելու վայր ընդունվելիս (այդ թվում՝ տարանցմամբ) անձինք անցնում են նախնական բժշկական զննություն, որի արդյունքներն արձանագրվում են համապատասխան մատյանում՝ բժշկական օգնություն ցույց տալու և մարմնական վնասվածք կամ առողջական վիճակի վերաբերյալ այլ գանգատ արձանագրելու նպատակով:

Բոլոր բժշկական զննություններն անց են կացվում քրեակատարողական կամ այլ ծառայողների լսողության և տեսողության սահմաններից դուրս:

Բոլոր այն դեպքերում, երբ բժշկական զննության արդյունքում հայտնաբերված մարմնական վնասվածքը կամ առողջական վիճակի վերաբերյալ գանգատը, ըստ կալանավորված անձի կամ դատապարտյալի հայտարարության, հետևանք է նրա նկատմամբ հանցագործության հատկանիշներ պարունակող որևէ արարքի, ապա բժշկական զննություն իրականացնող անձը դրա մասին տեղյակ է պահում կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմին:

Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը դրա մասին անհապաղ տեղյակ է պահում իրավասու մարմիններին (վարույթն իրականացնող մարմնին և դատախազություն):

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ ՊՈԱԿ-ի նախատեսվող հաստիքային միավորների քանակը կազմելու է 217 հաստիքային միավոր, իսկ համալրվող 54 քրեակատարողական համակարգի բուժաշխատողների մեծամասնությունը կազմելու է միջին բուժանձնակազմը, ինչը նպատակ է հետապնդում ազատությունից զրկված անձանց համար ապահովել միջազգային ստանդարտներին համապատասխան բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ:

Հայտնում ենք նաև, որ պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների ցանկն ու դրանց չափորոշիչները հստակեցնելու և հիվանդությունների միջազգային դասակարգման տասներորդ վերանայված տարբերակին համապատասխանեցնելու նպատակով 2017 թվականի հուլիսի 6-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 800-Ն որոշումը: Միաժամանակ, նկատի ունենալով նշված որոշմամբ կարգավորված հարաբերությունների դերն ու նշանակությունը՝ Ծրագրի շրջանակներում տեղացի փորձագետների կողմից մշակվել է նաև նշված որոշման ամբողջովին նոր խմբագրությունը:

Առողջապահական մարմինների բուժհիմնարկներ բուժման նպատակով ուղեգրելու հարցի կապակցությամբ հայտնում ենք, որ 2017 թվականի ընթացքում բուժման նպատակով առողջապահական մարմինների բուժհիմնարկներ ուղեգրվել են 336 կալանավորված անձինք և դատապարտյալներ, որից 208-ը պետպատվերի շրջանակներում, իսկ հետազոտվելու նպատակով՝ 1412-ը, որից 469-ը պետպատվերի շրջանակներում:

Այս համատեքստում հարկ է նաև փաստել, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգի 2018թ. բյուջետային հայտի քննարկումների ընթացքում ընդունվել են քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին դեղորայքով և բժշկական նյութերով ապահովելու նպատակով ներկայիս 43,000,000 դրամը 150,000,000 դրամի հասցնելու առաջարկությունները:

2. ՍՆՆԴԻ ՈՐԱԿ

2017 թվականի մայիսի 18-ի ՀՀ կառավարության 542-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշման մեջ, որով համապատասխան կարգավորում է ստացել քրեակատարողական հիմնարկներում պահվող հղի, կերակրող մայր, անչափահաս և (կամ) հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին տրվող սննդատեսակների ընտրությունը: Միաժամանակ, հաշվի առնելով կալանավորված անձանց և դատապարտյալների կրոնական համոզմունքները և մշակութային առանձնահատկությունները՝ վերոնշյալ որոշման մեջ կատարված փոփոխությունների արդյունքում, համապատասխան իրավակարգավորում է ստացել նաև սննդատեսակների ձեռքբերման և համապատասխան ճաշատեսակների պատրաստման գործընթացը:

Նշված փոփոխությունների արդյունքում նշված որոշման 1-ին կետը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերով.

«4) հիմք ընդունելով բժշկի կողմից տրված եզրակացությունը կամ խորհրդատվությունը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող հղի, կերակրող մայր և (կամ) հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվում է սույն որոշման N 1 հավելվածով նախատեսված սննդատեսակներից պատրաստված համապատասխան ճաշատեսակներ: Հիմք ընդունելով բժշկի կողմից տրված եզրակացությունը կամ խորհրդատվությունը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող հղի, կերակրող մայր, անչափահաս և (կամ) հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվում է սույն որոշման N 4 հավելվածով նախատեսված հավելյալ սնունդ.

5) սույն որոշման N 1 հավելվածով նախատեսված սննդի օրական նվազագույն չափաբաժիններից ձավարեղենի, մակարոնեղենի, կարտոֆիլի, այլ բանջարեղենի նվազագույն չափաքանակները տրամադրվում են սեզոնային

կարգով, իսկ ձավարեղենի, մակարոնեղենի, կարտոֆիլի, այլ բանջարեղենի օրական նվազագույն չափաբաժիններից շեղումներ թույլատրվում են՝ ապահովելով շաբաթական կտրվածքով օրական նվազագույն չափաբաժինների և տվյալ օրվա համար բավարար կալորիականության սննդի հատկացումը.

6) սույն որոշման N 1 հավելվածով նախատեսված սննդատեսակները ձեռք բերելիս և դրանց համապատասխան ճաշատեսակները պատրաստելիս հնարավորինս հաշվի են առնվում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների կրոնական համոզմունքները, ինչպես նաև մշակութային առանձնահատկությունները (կենդանական ծագման սննդամթերք չօգտագործողներ)»:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների համար պատրաստվող ճաշերն ավելի ախորժելի դարձնելու նպատակով՝ նախապատրաստվում է ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու ՀՀ կառավարության որոշման նախագիծ, ըստ որի՝ սննդի օրական չափաբաժիններում ավելացվելու են համեմունքներ (մեղր, սունկ, չորացրած կանաչեղեն, սև և կարմիր պղպեղ, ինչպես նաև նախատեսվում է բարձրացնել կերակրի աղի չափաբաժինը):

Անդրադառնալով կալանավորված անձանց ու դատապարտյալներին տրամադրվող սննդի ապահովմանը և դրա որակի բարձրացմանը՝ հայտնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից նախատեսվում է փորձարկել քրեակատարողական ծառայության մի շարք գործառույթների, այդ թվում՝ սննդի ապահովման գործառույթը մասնավոր հատվածին պատվիրակելու (outsourcing) ծրագրեր: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից մասնավոր ընկերությունների հետ իրականացվել են մասնագիտական քննարկումներ, ձեռք են բերվել պայմանավորվածություններ քրեակատարողական հիմնարկներում իրականացնելու սննդի պատրաստման, առաքման և մատակարարման նոր

արդյունավետ համակարգի ներդրման փորձնական ծրագրեր: Առաջին փորձնական ծրագիրը «Մաստեր սերվիս» ՍՊ ընկերությունն իրականացրել է «Գորիս» ՔԿՀ-ում, որտեղ շուրջ 1 շաբաթ (ապրիլի 15-ից ապրիլի 21-ը) 100 դատապարտյալների մատուցվել են ընկերության կողմից նոր եղանակով պատրաստված ճաշատեսակներ:

Մասնավորապես, ընկերության կողմից արտադրական պայմաններում ճաշատեսակները պատրաստվելուց անմիջապես հետո հատուկ սարքավորումների միջոցով կատարվել է սննդամթերքի շոկային սառեցում մինչև -180C-ից -240C: Այնուհետև, ճաշատեսակները -180C-ից -240C աստիճան սառեցված վիճակում սառցարան մեքենայով տեղափոխվել են «Գորիս» քրեակատարողական հիմնարկ: Ճաշատեսակները պահեստավորվել են քրեակատարողական հիմնարկներում, հատուկ վառարանների միջոցով տաքացվել և տաք վիճակում մատակարարվել քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց: Մատակարար ընկերության կողմից ծրագիրը փորձարկելու, սառեցված սնունդը պահելու և տաքացնելու համար ընկերության կողմից «Գորիս» քրեակատարողական հիմնարկի խոհանոցում ժամանակավոր տեղադրվել են սառցարաններ, սառնարաններ և կոնվեկցիոն վառարան:

Ծրագրի իրականացման ընթացքում կալանավորված անձանց և դատապարտյալների, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկի ղեկավարության և աշխատակիցների կողմից ստացվել է դրական գնահատական սննդի որակի, ինչպես նաև սննդի մատակարարման նշված եղանակի վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ միջազգային պրակտիկայում հանրային հատվածի որոշ գործառույթներ մասնավոր հատվածին պատվիրակելու հիմնական նպատակներից է որակի ապահովումը և ծախսերի կրճատումը, իսկ Ընկերության կողմից առաջարկվող գումարային չափը գերազանցում է ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների չափը, ներկա պահին սննդի ծառայությունների մատուցումը մասնավոր կազմակերպության կողմից իրականացնելը հնարավոր չէ: Այդուհանդերձ, Արդարադատության նախարարությունը շարունակում է

ջանքեր գործադրել քրեակատարողական հիմնարկներում սննդի որակը բարելավելու և հնարավորության դեպքում այդ գործառույթը մասնավոր հատվածին պատվիրակումն ապահովելու ուղղությամբ:

Միաժամանակ, հարկ ենք համարում հայտնել, որ գնումների գործընթացն իրականացվում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, և հետևաբար, գնման գործընթացը իրականացվել է փաստացի մրցակցային եղանակով, որի արդյունքում հաղթող մասնակից կազմակերպությունների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր: Միաժամանակ ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների պայմանագրային գինը ձևավորվում է գնման ընթացակարգի արդյունքում և յուրաքանչյուրի արդյունքում կարող է ձևավորվել նախորդից տարբերվող գին:

3. ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց կենցաղային պայմանները բարելավելու նպատակով 2017թ. ընթացքում շինարարական և վերանորոգման աշխատանքներ են իրականացվել բոլոր քրեակատարողական հիմնարկներում: Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ **ներկայումս քրեակատարողական հիմնարկներում գերծանրաբեռնվածության խնդրի լուծման արդյունքում քայլեր են ձեռնարկվում դատապարտյալներին և կալանավորներին ավելի բարվոք պայմաններ ունեցող խցեր տեղափոխելու ուղղությամբ:**

ՀՀ վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի հետ կնքված պայմանագրի շրջանակներում 2017 թվականին իրականացվել են նախկին ՀՀ ԱՆ «Էրեբունի» ՔԿՀ-ի ավարտական և ընդունման-հանձնման ակտերի աշխատանքները:

Ըստ պայմանագրերի, բոլոր այն հիմնարկներում, որտեղ իրականացվել են էներգախնայողության աշխատանքներ, ընդունման-հանձնման ակտից հետո մեկ տարվա ընթացքում երաշխիքային սպասարկումն իրականացնում են կապալառու կազմակերպությունները: Երաշխիքային ժամկետի ավարտից հետո ՀՀ ԱՆ

քրեակատարողական ծառայությունն իրականացնում է վերջնական հանձնում-ընդունում: 2017թ.-ին ընդունվել են ՀՀ ԱՆ «Հրազդան», «Վարդաշեն», «Դատ. Հիվանդանոց», «Վանաձոր», «Նուբարաշեն», «Սևան» և «Կոշ» ՔԿՀ-ների աշխատանքները:

ՀՀ ԷԽ հիմնադրամի հետ կնքված պայմանագրի համաձայն ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում ավարտվել է արևային էլ. էներգիայի, ջրատաքացուցիչների և էներգախնայող լամպերի տեղադրման աշխատանքները:

Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Ամրապնդել առողջապահությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում» ծրագրի շրջանակներում առաջնային բժշկական օգնության տրամադրման համար նախատեսված սենյակների ընդհանուր պայմանների բարելավման համար վերանորոգման աշխատանքներ են իրականացվել բոլոր քրեակատարողական հիմնարկներում, բացի ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ից:

Ստորև ներկայացվում են կատարված աշխատանքներն՝ ըստ քրեակատարողական հիմնարկների.

<u>«Նուբարաշեն» ՔԿՀ</u>

Աշխատանքներ են իրականացվել արտաքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի մասնակի վերանորոգման ուղղությամբ:

Վերանորոգման և հարդարման աշխատանքներ են իրականացվել մի շարք խցերում և սանհանգույցներում, ընդ որում՝ **նշված աշխատանքներն իրականացվում են պարբերաբար**: «Նուբարաշեն» ՔԿՀ առաջին հարկում գտնվող բանտախցերը շահագործումից հանվել են, բացառությամբ, պատժախցերի և կարանտինային խցերի, որոնք շահագործումից հանել հնարավոր չէ՝ հիմնարկում տվյալ ռեժիմներին համապատասխան տարածքի բացակայության պատճառով: Կարանտինային խցերին հարող միջացքով անցնող ջրահեռացման համակարգի խցանման հետևանքով առաջացած

խնդիրները լուծվել են, մասնավորապես՝ խցերը և միջանցքները մաքրվել և ախտահարվել են:

Վերանորոգվել և հարդարվել է պահպանության մասնաշենքը:

Մասնակի վերանորոգվել և հարդարվել է ռեժիմային գոտու մուտքի պահակակետը:

«Սևան» ՔԿՀ

Վերանորոգվել և հարդարվել է ռեժիմային գոտու խոհանոցը և միջանցքը:

Մասնակի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել հանրակացարաններում:

Ռեժիմային գոտում կառուցվել է նոր աշխատասենյակ և սանհանգույց փաստաբանների համար: Վերսկսվել են պարսպի կառուցման աշխատանքները:

«Վարդաշեն» ՔԿՀ

Վերանորոգվել և հարդարվել են մեկուսարանի խցերի մեծ մասը, միջանցքներն ու աստիճանավանդակը:

Վերանորոգվել է զբոսահրապարակը:

Հարդարվել է խոհանոցային հատվածի միջանցքը:

Ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են իրականացվել ռեժիմային մասնաշենքի խցերում:

«Էրեբունի» տեղամաս

Մասնակի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել արտաքին և ներքին ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում:

Վերանորոգվել և հարդարվել են տեղամասում տեղակայված հատուկ նշանակության բաժնի աշխատասենյակները, սանհանգույցները, միջանցքը, խոհանոցը և մարզադահլիճը:

«Արմավիր» ՔԿՀ

Ձևափոխման աշխատանքներ են իրականացվել մետաղական դռների դիտանցքների և փոքրիկ դռնակների վրա, անվտանգության ապահովման համար:

Մասնաշենքերում իրականացվել է սանհանգույցների կապիտալ վերանորոգում:

Երեք մասնաշենքերի միջև կառուցվել են փշալարից նոր արգելապատնեշներ:

Վերանորոգվել և փոխարինվել են ջեռուցման կաթսայի մարտկոցները:

Վերանորոգման և հարդարման աշխատանքներ են իրականացվում խցերում, միջանցքներում, խոհանոցում, բուժ. կետում և աշխատասենյակներում:

«Կոշ» ՔԿՀ

Քայքայված հիմքերի պատճառով երկու տեղամասում քանդվել էր արգելագոտու պարիսպը, այն սեղմ ժամկետում վերակառուցվել և ամրացվել է:

Վերանորոգման աշխատանքներ են իրականացվում ճաշարանի մասնաշենքի սանհանգույցում:

Մասնակի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել հանրակացարաններում:

«Գորիս» ՔԿՀ

Վերանորոգման և հարդարարման աշխատանքներ են իրականացվում պահպանության խմբի հանգստի սենյակում և սանհանգույցում:

Մասնակի վերանորոգման և հարդարման աշխատանքներ են իրականացվել ռեժիմային մասնաշենքում:

«Աբովյան» ՔԿՀ

Ընթացիկ վերանորոգման և հարդարման աշխատանքներ են իրականացվել կանանց և մեկուսարանի տեղամասերում:

Մասնակի հարդարման աշխատանքներ են իրականացվել պահեստային մասնաշենքում:

«Արթիկ» ՔԿՀ

Վերանորոգման և հարդարման աշխատանքներ են իրականացվել բնակելի գոտու խցերում, սանհանգույցներում և միջանցքներում:

Հիմնովին վերանորոգվել է ճաշապատրաստման արտադրամասը:

«Հրազդան» ՔԿՀ

Վերանորոգվել է զբոսահրապարակը: Խցերում և սանհանգույցներում իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ:

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ

Իրականացվել են բնակելի գոտու հիվանդասենյակների մասնակի վերանորոգման և հարդարման աշխատանքներ, ինչպես նաև իրականացվել է արտաքին և ներքին ջրամատակարարման ցանցի ու սանհանգույցների ընթացիկ վերանորոգում:

«Երևան-Կենտրոն» ՔԿՀ

Խցերում իրականացվել են մասնակի վերանորոգման և հարդարման աշխատանքներ:

Բաղնիքում տեղադրվել է նոր ջրատաքացուցիչ: Բոլոր զբոսախցերի վրա կառուցվել է ծածկոց:

«Վանաձոր» ՔԿՀ

Կապիտալ վերանորոգվել է երկարատև տեսակցության երկու սենյակ և դեղատունը: Հարդարվել են ճաշարանային մասնաշենքը և ռեժիմային մասնաշենքի միջանցքները: Ընդհանուր ջեռուցման համակարգին է միացվել ճաշարանի մասնաշենքը և գրադարանը:

Ընթացիկ վերանորոգվել են խցերը և միջանցքները:

Ընթացիկ վերանորոգման և կարգաբերման աշխատանքներից զատ՝ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ցանկով, որպես միջոցառում, նախատեսվել է միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական հիմնարկի կառուցումը՝ որպես վերջնաժամկետ նախատեսելով 2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տաս-նօրյակը: Դրան զուգահեռ՝ կքննարկվի նաև առկա որոշ քրեակատարողական հիմնարկների ապամոնտաժման հարցը:

4. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

Հաշվետվությամբ ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ 2016 թվականի համեմատությամբ՝ 2017 թվականին կոռուպցիոն ռիսկերի նվազեցման առումով գրեթե փոփոխություններ չեն եղել: Հատկանշական է, որ խնդրո առարկա պնդման հիմքում դրվել է հաշվետու ժամանակահատվածում կատարված ուսումնասիրությունը, որի աղբյուրը հանդիսացել են ազատությունից զրկված անձինք, որոնք հաշվետու ժամանակահատվածում գտնվել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում և / կամ նրանց ազգականները:

Այսինքն՝ Խումբը Հաշվետվությամբ փաստում է քրեակատարողական հիմնարկներում կոռուպցիոն դրսևորումների առկայության մասին՝ **հիմնվելով միայն ազատությունից զրկված անձանց և / կամ նրանց ազգականների հաղորդած տեղեկությունների վրա (ըստ Հաշվետվության), ինչը հանգեցնում է խնդրո առարկայի վերաբերյալ միակողմանի դիրքորոշման ներկայացմանը:**

Նման դրսևորումների մասին հստակ փաստ և տեղեկատվություն ներկայացնելու դեպքում ՀՀ արդարադատության նախարարությունը հետևողական է օրենքով սահմանված միջոցներ ձեռնարկելուն և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելուն:

Այս համատեքստում հարկ է վերահաստատել այն, որ կոռուպցիայի դեմ պայքարը շարունակում է մնալ Արդարադատության նախարարության թիրախներից մեկը:

Այսպես, 2017թ. ընթացքում իրականացվել է թվով **306** ծառայողական քննություն (**29**-ը՝ ՆԱԲ-ի կողմից, **277**-ը՝ ՔԿՀ-ների) (2016թ.՝ **231**):

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **76** ուսումնասիրություն (2016թ.՝ **96**), որից **22**-ը ստուգայցերի շրջանակում:

Անցկացված ծառայողական քննությունների և ուսումնասիրությունների արդյունքում **183** ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության (2016թ.՝ **155**), ընդ որում՝

1) նկատողություն՝ **112** (2016թ.՝ **102**),

2) խիստ նկատողություն՝ **59** (2016թ.՝ **43**),

3) պաշտոնի իջեցում՝ **3** (2016թ.՝ **2**),

4) ծառայությունից ազատում՝ **8** (2016թ.՝ **8**), որից՝ պայմանագրի լուծում՝ **1**,

5) կոչումի իջեցում՝ **1** (2016թ.՝ **0**):

Հաշվետու ժամանակահատվածում **17** ծառայողի նկատմամբ **հարուցվել է քրեական գործ** (2016թ.՝ **6**), լիազորությունները դադարեցվել է **22** ծառայողի (2016թ.՝ **9**):

Հարկ է նաև նշել, որ 12 քրեակատարողական հիմնարկների ամենօրյա գործունեության թիրախային ոլորտներն առցանց վերահսկելու (հանձնուքների ընդունման, կարճատև տեսակցությունների անցկացման, բնակելի գոտի մուտք գործող անձանց անձնական իրերի պահեստարանների և այլն), ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, ծառայությունում, կրկին տնտեսված միջոցների հաշվին, **քննարկվում է «Օպերատիվ կառավարման կենտրոն» ստեղծելու հնարավորությունները**:

5. ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐ

Խմբի կողմից նշված «քրեական» օրենքներին չենթարկվող կամ դրանք խախտած, որոշակի հանցագործություններ կատարած կամ նույնասեռական անձանց վերաբերող խնդիրներին, ապա հարկ է նշել, որ անազատության մեջ պահվող անձանց շրջանում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ ձևավորելու հրամայականները մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում: Բոլոր այն դեպքերում, երբ ի հայտ են գալիս քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի պահանջները դիտավորությամբ խախտողներ և դատապարտյալների շրջանում հիերարխիկ դիրքեր ստեղծելու փորձ կատարողներ, ապա վերջիններիս նկատմամբ անխուսափելիորեն կիրառվում են տարաբնույթ օրինական միջոցներ:

Ինչ վերաբերում է խցային պայմաններին, ապա, ինչպես նշեցինք, **ներկայումս քրեակատարողական հիմնարկներում գերծանրաբեռնվածության խնդրի լուծման արդյունքում քայլեր են ձեռնարկվում դատապարտյալներին և**

կալանավորներին ավելի բարվոք պայմաններ ունեցող խցեր տեղափոխելու ուղղությամբ:

Հաշմանդամություն ունեցող անձինք

Հաշվետվության մեջ Խմբի կողմից անդրադարձ է կատարվել նաև հաշմանդամություն ունեցող անձանց պահման պայմաններին, որոնք, ըստ Խմբի մեկնաբանության, չեն կարող ապահովել հենաշարժողական ամբողջական խնդիրներ ունեցող անձանց կարիքները: Ներկայացված պնդման առնչությամբ հարկ է նշել հետևյալը.

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների երաշխավորման խնդիրը մշտապես գտնվում է ՀՀ արդարադատության նախարարության ուշադրության կենտրոնում:

Հաշմանդամություն ունեցող դատապարտյալների և կալանավորված անձանց կարիքների գնահատման նպատակով նշված անձանց շրջանակում իրականացվել է հարցում: Հարցման հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի համատեղ ջանքերով հաշմանդամություն ունեցող դատապարտյալներին և կալանավորված անձանց տրամադրվել են անհրաժեշտ բժշկական նշանակության ապրանքներ:

Կարևորելով քրեակատարողական հիմնարկներում հաշմանդամություն ունեցող դատապարտյալների և կալանավորված անձանց մատչելի պայմանների ապահովման խնդիրը՝ ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 27-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2019 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1025-Լ որոշմամբ որպես միջոցառում նախատեսվել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում հաշմանդամություն ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների համար մատչելի պայմանների ապահովումը: Բացի այդ, նույն որոշման համաձայն՝ քրեակատարողական հիմնարկները պետք է ապահովվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումներով:

Այս համատեքստում, հարկ է փաստել, որ չնայած ֆինանսական միջոցների բացակայությանը, արդեն իսկ միջոցներ են ձեռնարկվել անազատության մեջ պահվող և տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց կարիքներին համապատասխան մատչելի պայմանների ստեղծման ուղղությամբ: Մասնավորապես, քրեակատարողական հիմնարկներում իրականացվում են համապատասխան շինարարական աշխատանքներ, օրինակ՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար կացարանների (խցերի) վերակառուցում, զուգարանակոնքերի տեղադրում և լոգասենյակների կահավորում (ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում արդեն իսկ կահավորված է 1 խուց, իսկ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում՝ 2 խուց):

Կանայք և անչափահասներ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից շարունակվում են քայլեր ձեռնարկվել ազատությունից զրկված անձանց՝ տեսազանգի միջոցով հաղորդակցվելու իրավունքը երաշխավորելու ուղղությամբ:

Այսպես, մերձավոր ազգականների հետ կարճատև տեսակցության օբյեկտիվ հնարավորություն չունեցող ազատությունից զրկված անձանց (հեռավորություն, հարազատի հիվանդություն, այլ երկրի բնակություն և այլն), այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների տեսակցության իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ՀՀ կառավարության 2006 թվականի թիվ 1543-Ն որոշման մեջ կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում նախատեսվել է նշված անձանց ամսվա ընթացքում երկու անգամ մինչև 20 րոպե տևողությամբ տեսազանգից օգտվելու իրավական հնարավորություն: Տեսազանգից օգտվելու իրավունքը պատշաճ կերպով իրացնելու նպատակով տեսազանգի համակարգն արդեն իսկ պիլոտային եղանակով փորձարկվել է Արդարադատության նախարարության «Նուբարաշեն», «Վարդաշեն», «Աբովյան», «Դատապարտյալների հիվանդանոց», «Արմավիր», «Կոշ» և «Արթիկ» քրեակատարողական հիմնարկներում և գործել առանց խափանումների: Փորձարկման աշխատանքները շարունակվում են:

Տեղեկացնում ենք, որ տեսազանգի տրամադրման իրավական հնարավորություն ընձեռող որոշումն ուժի մեջ է մտնելու 2018 թվականի նոյեմբերի 1-ից:

Անդրադառնալով խոցելի խմբերի զբաղվածությանը և կրթությանը՝ հարկ է արձանագրել հետևյալը.

«Իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակություն» ծրագրի շրջանակում «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Աբովյան» ՔԿՀ-ում իրականացվել են հետևյալ դասընթացները.

- ✓ Բրուտագործություն և զարդարվեստ
- ✓ Խեցեգործություն, խեցեգործության ներկման,թրծման տեխնոլոգիա
- ✓ Ժամանակակից կիրառական արվեստ, փայտի փորագրություն
- ✓ Առողջ ապրելակերպ
- ✓ Հոգեբանություն. Ինքնաճանաչում՝ արդյունավետ հաղորդակցում
- ✓ Հեքիաթաթերապիա. Հերոսների վերլուծություն

Դասընթացներին մասնակցել են 14 կալանավորված և/կամ դատապարտված անչափահաս, 30 կին դատապարտյալ:

Բացի դասընթացներից, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող կանանց շրջանում ձևավորված ծնողական ակումբի շրջանակում կազմակերպվել է 10 հանդիպում (ծնողավարության և հոգեբանության թեմաներով), որին մասնակցել են շուրջ 50 կին դատապարտյալ:

ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) գրասենյակի կողմից ֆինանսավորվող և «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի» կողմից իրականացվող «Աբովյան քրեակատարողական հիմնարկ. Թափանցիկության, արդունավետության և վերականգնողական մշակույթի ստեղծում» ծրագրի շրջանակներում կանանց և անչափահասների զբաղվածության ապահովման նպատակով «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրականացվում են հետևյալ միջոցառումները.

1) անգլերեն լեզվի դասընթացներ (ընթացիկ փուլ, ներգրավված է 8 դատապարտյալ).

2) համակարգչային դասընթացներ սկսնակների համար (ավարտվել է, ներգրավվել է 8 դատապարտյալ).

3) ֆիտնես և յոգայի դասընթացներ (յուրաքանչյուր դասընթացին՝ 12 դատապարտյալ).

4) արվեստի և արհեստագործական սեմինարներ (10 դատապարտյալ).

5) վարսահարդարման դասընթացներ (9 դատապարտյալ, դասընթացի ավարտին տրվելու է հավաստագիր).

6) խոհարարական դասընթացներ (ներգրավվել է 7 դատապարտյալ, ներառյալ այն անձինք, որոնք աշխատում են խոհանոցում, տրվելու է հավաստագիր).

7) բիզնեսի հիմնադրմանն ուղղված վերապատրաստումներ / սեմինարներ:

Հատկանշական է, որ նշված ծրագրի շրջանակներում ապահովվելու է նշված դասընթացների շարունակականությունը:

Ծրագրի շրջանակներում «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրականացվել են վերանորոգման և կարգաբերման աշխատանքներ: Բացի այդ, հիմնարկն ապահովվել է մարզական սարքերով:

6. ԱՐԳԵԼՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ.

Անդրադառնալով բջջային հեռախոսներ հայտնաբերելու դեպքերով ծառայողական քննություններ չհարուցելուն՝ հարկ է նշել, որ արգելված իր հանդիսացող ցանկացած առարկայի հայտնաբերման, ինչպես նաև ներքին կանոնակարգի խախտման դեպքում քրեակատարողական ծառայողի կողմից հիմնարկի պետի անունով ներկայացվում է զեկուցագիր, և վերջինիս հանձնարարությամբ պարտադիր իրականացվում են համապատասխան ուսումնասիրություններ, մասնավորապես՝ վերցվում են բացատրություններ,

անհրաժեշտության դեպքում՝ որևէ փաստի հիմնավորման կամ պարզաբանման վերաբերյալ տեղեկանքներ:

Բոլոր այն դեպքերում, երբ իրականացված ուսումնասիրության արդյունքում ի հայտ է գալիս որոշակի կասկած քրեակատարողական ծառայողի կողմից իրավախախտմանն առնչվելու վերաբերյալ, ապա ՀՀ արդարադատության նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ ՔՀ-46-Ն հրամանի դրույթներին համապատասխան նշանակվում և անց է կացվում ծառայողական քննություն:

2017 թվականի ընթացքում կալանավորված անձանց և դատապարտյալների մոտ բջջային հեռախոսների հայտնաբերման դեպքերով քրեակատարողական ծառայությունում իրականացվել է 111 ծառայողական քննություն: Իրականացված ծառայողական քննություններից 22-ով 40 ծառայողի նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր:

Հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում արգելված իր հանդիսացող բջջային հեռախոսները հայտնաբերվում են ոչ միայն խցերում և կացարաններում իրականացված խուզարկությունների, այլև քրեակատարողական հիմնարկներ ներթափանցման փորձի կանխարգելման արդյունքում, մասնավորապես՝ ներնետման, հանձնուքների, ինչպես նաև կալանավորված անձանց և դատապարտյալներին տեսակցության եկած հարազատների, պաշտպանների, փաստաբանների կողմից փոխանցելու միջոցով:

Միաժամանակ, քրեակատարողական հիմնարկներ արգելված իրերի ներթափանցման դեմ տարվող պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով՝ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում (ԱԺ 01.03.2017թ. ՀՕ-49-Ն), որով օրենսգրքի 186-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման գործերը քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավասությունը վերապահվել է քրեակատարողական հիմնարկների պետերին:

Արդյունքում 2017 թվականի ընթացքում արձանագրված 52 վարչական իրավախախտման դեպքերով նշանակված վարչական տույժերով պետական բյուջե է մուտքագրվել 830,500 ՀՀ դրամ: Համապատասխան կատարողական թերթիկներ են ուղարկվել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությանը՝ տույժերի կատարողականն ապահովելու նպատակով:

Ստորև՝ խնդրո առարկա ոորտի վերաբերյալ վիճակագրական աղյուսակը:

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ	ՀԱՐՈՒՑՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ		ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ		ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԹՄՐԱՆՅՈՒԹ, ՀՈԳԵՄԵՏ (ԳՐԱՄ)		ԲՋՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍՆԵՐ		ԿՏՐՈՂ-ԾԱԿՈՂ ԻՐԵՐ		ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔ (ԼԻՏՐ)		ԳՈՒՄԱՐ		ԿԱՆԽՎԱԾ ՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ԴԵՊՔԵՐ	
	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017
«ՆՈՒԲԱՐԱՇԵՆ»	21	29	1	24	172.8075	41.6212	744	623	2112	1305	391	214.3	55000 դր.	496500 դր. 500 դոլար	41	40
«ՎԱՆԱՁՈՐ»	1	4	6	1	0	3.7	164	120	95	55	135.1	38.5	0	0	10	5
«ՎԱՐԴԱՇԵՆ»	4	1	0	0	0.03	12.7	158	89	42	39	12.48	0	41000 դր.	0	2	0
«ԵՐԵՎԱՆ-ԿԵՆՏՐՈՆ»	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
«ԳՈՐԻՍ»	0	0	0	0	0	0	16	18	21	13	4	6.1	0	5000 դր.	0	1
«ԿՈՇ»	5	5	9	5	74.22	41.8392	125	58	114	84	174.75	287.5	30 եվրո	5000 դր.	14	11
«ԱՐԹԻԿ»	8	9	17	13	107.98	147.744	328	227	14	32	621.17	342.25	10000 դր.	20000 դր.	34	28
«ՍԵՎԱՆ»	13	7	10	2	57.1102	94.2348	72	55	189	97	652	623.5	94600 դր.	23000 դր.	15	7
«ԱԲՈՎՅԱՆ»	0	0	0	0	0	0	1	2	29	7	2	2	0	15000 դր.	2	2
«ԴՀ»	9	3	1	3	10.132	24.25	72	65	33	5	106.76	104.5	0	49300 դր.	3	5
«ՀՐԱԶԴԱՆ»	3	5	6	4	0	38.2602	236	257	290	203	73.24	99.7	34000 դր.	33200 դր.	11	14
«ԱՐՄԱՎԻՐ»	8	13	3	0	251.82619	11.3932	284	325	130	223	332.5	334.6	51600 դր. 10000 ռուփի, 20 դոլլար	40000 դր.	18	8
ԸՆԴԱՄԵՆԸ	72	76	53	52	674.10589	415.7426	2200	1839	3069	2063	2505	2052.95	286200 դր. 30 եվրո 10000 ռուփի, 20 դոլլար	687000 դր. 500 դոլլար	150	121

7. Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում.

ՀՀ նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությանը համահունչ՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու ինստիտուտի կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով 2017 թվականին կատարվել են առանցքային հետևյալ փոփոխությունները.

1) պատիժը կատարող հիմնարկի վարչակազմ - անկախ հանձնաժողով - դատարան եռաստիճան ինստիտուցիոնալ մոդելից անցում է կատարվել անկախ հանձնաժողով - դատարան երկաստիճան ինստիտուցիոնալ մոդելին.

2) հստակեցվել են անկախ հանձնաժողովի և դատարանի գործառույթները՝ բացառելով նույնաբնույթ գործառույթների իրականացումը.

3) հստակեցվել է անկախ հանձնաժողովի կազմում ընդգրկվող ներկայացուցիչների ցանկը և ընդլայնվել է անկախ հանձնաժողովների թիվը.

4) սահմանվել են հստակ չափանիշներ, որոնք պետք է դրվեն անկախ հանձնաժողովի եզրակացությունների և դատարանի որոշումների հիմքում.

5) դատապարտյալին իրավունք է վերապահվել մասնակցելու իրեն վերաբերող եզրակացության կայացմանը և իրականացնելու համապատասխան պաշտպանություն, այսինքն՝ ապահովվել է դատապարտյալի լսված լինելու իրավունքը.

6) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքում նախատեսվել է փորձաշրջան:

2017 թվականին իրականացված բարեփոխումների արդյունքում պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվել է 365 անձ: Համեմատության համար նշենք, որ 2015 թվականին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվել է 153, 2016 թվականին՝ 115 անձ: ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և 2018 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և

լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Փաթեթ):

Փաթեթի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր հետևյալով.

1) Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության նախագահին վերապահված լիազորություններով պայմանավորված՝ անհրաժեշտություն էր առաջացել դադարեցնել անկախ հանձնաժողովների գործունեությունը.

2) անկախ հանձնաժողովի գործունեության ընթացքում ծագել էին մի շարք խնդիրներ, որոնք նվազեցնում էին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացի արդյունավետությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Փաթեթով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացում կատարվել են մոդելային և ընթացակարգային փոփոխություններ, որոնց առանձնահատկությունները հետևյալն են.

- **Դատապարտյալի կողմից դիմումի ներկայացման ընթացակարգ.**

Փաթեթում ամրագրվել է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու գործընթացի մեկնարկը պայմանավորում է ոչ միայն պատժի ժամկետի օրենքով սահմանված մասը կրելու, այլ նաև՝ դատապարտյալի դիմումի առկայության հետ: Այլ կերպ՝ գործընթացը սկսվում է, երբ դատապարտյալն ինքն է դիմում ներկայացնում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու համար: Ընդ որում՝ դիմումը պետք է ներկայացվի պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց ոչ շուտ, քան երեք ամիս առաջ: Դիմումի ներկայացման կարգի մասին պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը նախօրոք պարտավոր է ծանուցել դատապարտյալին:

- **Քրեակատարողական ծառայություն - Պրոբացիայի ծառայություն - դատարան մոդելի գործարկում.**

Առաջարկվող մոդելի արդյունքում դատապարտյալի պատշաճ վարքագիծը և նրա կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատող հանգամանքների վերաբերյալ զեկույցներ կտրամադրեն մասնագիտացված երկու կառույցներ, որոնք ունեն մարդկային և նյութական անհրաժեշտ ռեսուրսներ: Քրեակատարողական ծառայությունը կկարողանա պատշաճ կերպով գնահատել դատապարտյալի անձը և վարքագիծը պատժի կրման ընթացքում, իսկ Պրոբացիայի ծառայությունը՝ հասարակություն վերաինտեգրվելու հնարավորությունը:

Նշված կառույցները նախապես՝ պատժի ժամկետի օրենքով սահմանված մասը լրանալուց առաջ, կսկսեն զեկույցների կազման աշխատանքները, ինչը հնարավորություն կտա համապարփակ կերպով հետազոտել ուսումնասիրվող հանգամանքները: Զեկույցների կազման համար ծառայություններն իրենց տրամադրության տակ կունենան 80 օր:

Զեկույցների կազման դեպքում հնարավոր է չորս տարբերակ.

1) **եթե Քրեակատարողական ծառայության և Պրոբացիայի ծառայության զեկույցները դրական են**, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, **ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան ներկայացնելու մասին որոշում** և յոթ աշխատանքային օրվա ընթացքում միջնորդագրով ներկայացնում դատարան.

2) **եթե Քրեակատարողական ծառայության և Պրոբացիայի ծառայության զեկույցներից մեկը բացասական է**, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային

օրվա ընթացքում, **ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան ներկայացնելու մասին որոշում, եթե դատապարտյալը տալիս է գրավոր համաձայնություն**, և յոթ աշխատանքային օրվա ընթացքում միջնորդագրով ներկայացնում դատարան.

3) **եթե Քրեակատարողական ծառայության և Պրոբացիայի ծառայության զեկույցներից մեկը բացասական է**, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, **ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան չներկայացնելու մասին որոշում, եթե դատապարտյալը չի տալիս գրավոր համաձայնություն**.

4) **եթե Քրեակատարողական ծառայության և Պրոբացիայի ծառայության զեկույցները բացասական են**, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, **ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան չներկայացնելու մասին որոշում, որը դատապարտյալը կարող է բողոքարկել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:**

Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ դատապարտյալի՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու իրավական հնարավորությունն ապահովելու և գործնականում հնարավոր խախտումները բացառելու նպատակով նախատեսվել է, որ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի

մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան ներկայացնելու կամ չներկայացնելու մասին որոշման և զեկույցների պատճենները, դատապարտյալի անձնական գործի ամփոփ տեղեկանքը որոշումը կայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ուղարկում է պատժի կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին: Հարցը դատարան չներկայացնելու մասին որոշումն օրենսդրությանը հակասող համարելու դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը նշված ակտը վերացնելու միջնորդագիր է ներկայացնում արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող նախարարին: Վերջինս միջնորդագրի քննության արդյունքների մասին տեղեկացնում է միջնորդագրի հեղինակին: Եթե միջնորդագրի քննության ընթացքում պարզվում է, որ դատապարտյալն օրենքով նախատեսված դեպքում բողոքարկել է պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշումը, արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող նախարարը միջնորդագիրը վերադարձնում է միջնորդագրի հեղինակին:

- **Դատապարտյալի իրավունքները.**

Զեկույցների կազման ընթացքում դատապարտյալը կպահպանի այն իրավունքները, որոնք նրան վերապահվել էին անկախ հանձնաժողովի նիստին մասնակցելու համար: Այսպես, դրական զեկույցների դեպքում՝ մինչև զեկույցները դատարան ներկայացնելը, իսկ զեկույցներից առնվազն մեկի բացասական լինելու դեպքում՝ մինչև պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի կողմից որոշում ընդունելը, դատապարտյալն իրավունք ունի.

1) իրեն մատչելի ձևով, այդ թվում՝ համապատասխան մասնագետի միջոցով ծանոթանալու իր վերաբերյալ կազմված նյութերին և անվճար ստանալու դրանց պատճենները.

2) ներկայացնելու բացատրություններ և փաստաթղթեր, հանդես գալու հայտարարություններով.

3) հայտնելու իր կարծիքը իրեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ.

4) ստանալ իր վերաբերյալ կազմված զեկույցները.

5) հայերենին չտիրապետելու դեպքում պետության միջոցների հաշվին օգտվելու թարգմանչի ծառայություններից.

6) օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքներ:

Փաթեթի անցումային դրույթներին համապատասխան՝ այն դատապարտյալների վերաբերյալ, որոնց՝

1) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու իրավական հնարավորությունը ծագել է **մինչև Փաթեթն ուժի մեջ մտնելը** և չի քննարկվել անկախ հանձնաժողովի կողմից, Փաթեթի ուժի մեջ մտնելուց հետո (*Փաթեթն ուժի մեջ է մտել սույն թվականի հունիսի 23-ին*)՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը կազմում և 3 աշխատանքային օրվա ընթացքում դատապարտյալին է ներկայացնում զեկույցը:

2) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու իրավական հնարավորությունը ծագել է **Փաթեթն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2018 թվականի սեպտեմբերի 1-ը,** պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը զեկույցը կազմում է իրավական հնարավորության ծագման պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Նշված երկու դեպքերում էլ **եթե դատապարտյալը տալիս է գրավոր համաձայնություն,** ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի գրավոր համաձայնությունն ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան ներկայացնելու մասին որոշում, և 3 աշխատանքային օրվա ընթացքում որոշումը միջնորդագրով ներկայացնում դատարան:

3) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու իրավական

հնարավորությունը **ծագելու է սույն թվականի սեպտեմբերի 1-ից հետո,** ապա նրանց վերաբերյալ կազմվում է զեկույց բացառապես այն դեպքում, երբ դատապարտյալը պատիժը կատարող հիմնարկին ներկայացնում է դիմում:

Ներդրված նոր մոդելի պատշաճ գործարկումն ապահովելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության **պրոբացիայի ծառայությանը հատկացվել 24 հաստիքային միավոր**: Միաժամանակ, **պրոբացիայի և քրեակատարողական ծառայողները վերապատրաստվել են**:

2018 թվականին իրականացված բարեփոխումների արդյունքում 23.10.2018 թվականի դրությամբ 231 անձ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվել է, առկա են նաև ընթացիկ գործեր, որոնք գտնվում են դատարանների վարույթներում: Գրանցվել է նաև աննախադեպ դեպք. պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվել է ցմահ ազատազրկման դատապարտված անձ:

8. Հացադուլի, մահվան, ինքնասպանությունների և ինքնավնասումների դեպքեր

Հարկ է նշել, որ ինքնասպանության կամ մահվան յուրաքանչյուր դեպքի առթիվ նախապատրաստվում են նյութեր, հարուցվում է քրեական գործ և իրականացվում նախաքննություն և ապահովվում գործի հետագա ընթացքը:

Նախաքննության մարմինը քննության ընթացքում մահվան պատճառները պարզելու նպատակով նշանակում է նաև դատաբժշկական փորձաքննություն, որոնց արդյունքները կցվում են քրեական գործերին, հետևաբար՝ ինքնասպանության դեպքով հարուցված քրեական գործերի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել նախաքննությունն իրականացնող մարմնին:

2017թ. վերջին տարիների մեջ առաջին անգամ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների շրջանում գրանցվել է մահացածության ամենացածր ցուցանիշը: Այսպես՝ եթե 2010թ. արձանագրվել է մահվան 37, 2014թ.՝ 38 դեպք, ապա 2017 թվականին

այդ թիվը եղել է 17: Հիվանդության պատճառով 2017թ. մահացել է 14 անձ՝ 2010 թվականի 32, 2014թ. 34-ի համեմատությամբ: Ի դեպ, նախորդ տարվա համեմատությամբ (7 դեպք) նվազել է նաև ինքնասպանությունների թիվը: 2017թ. գրանցվել է ինքնասպանության 2 դեպք:

Ստորև ներկայացվում է վիճակագրական տվյալների աղյուսակային պատկերը՝ ըստ տարիների՝

N		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	15.12.2017թ.
1.	Մահվան դեպքերի թիվը	37	32	28	19	38	28	29	17
2.	Հիվանդության պատճառով	32	26	25	17	34	24	22	

9. Խմբի աշխատանքների և փաստաբանների գործունեության խոչընդոտում.

Անդրադառնալով Խմբի աշխատանքների և փաստաբանների գործունեության խոչընդոտման վերաբերյալ դիտարկումներին՝ հայտնում ենք, որ այս հարցում բաց և թափանցիկ գործունեություն իրականացնելու հրամայականը առաջնային է և քրեակատարողական ծառայությունը իր գործունեությունն իրականացնում է օրենսդրության շրջանակներում: **ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից Խմբի գործունեությանը որևէ միջամտություն չի իրականացվում, չի ստեղծվում որևէ խոչընդոտ, քանի որ Խումբը համարվում է ՀՀ արդարադատության նախարարության «երկրորդ աչքը», որը հնարավորություն է տալիս ստանալու օբյեկտիվ գնահատական ազատությունից զրկելու վայրերում տիրող իրավիճակի վերաբերյալ:**

Ինչ վերաբերում է վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա Խմբին կալանավորված անձանց հետ տեսակցություններ չտրամադրելուն, ապա հարկ է նշել, որ բարձրացված հարցը քննարկվել է նաև ՀՀ արդարադատության նախարարի հետ տեղի ունեցած քննարկման ընթացքում, որի վերաբերյալ

նախատեսվում է իրականացնել քննարկումներ շահագրգիռ մյուս մարմինների հետ ևս:

Հիերարխիկ հարաբերությունների հիմնախնդրի առնչությամբ հայտնում ենք, որ քրեակատարողական հիմնարկներում միջանձնային, հիերարխիկ հարաբերությունների առկայությունը համակարգային խնդիր է և պահանջում է նույնաբովանդակ լուծում: Այս առումով հարկ է նշել, որ նշված խնդրի վերացմանն ուղղված անհրաժեշտ լուծումները կնախատեսվեն Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում իրավիճակի բարելավման նպատակով 2018-2038 թվականների ռազմավարության և դրա իրականացման 2018-2038 թվականների միջոցառումների ծրագրի շրջանակներում:

Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ ներկայումս գործուն քայլեր են ձեռնարկվում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթը վերացնելու ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ.594-013
էլ. փոստ suren.krmoyan@justice.com

N _____

«____»_____20 թ.

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
(ՀԱՍՑԵ՝ ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓԱԿՈՒՂԻ 8, 112 ՍԵՆՅԱԿ)

Հարգելի՛ տիկին Հարությունյան,

Ի լրումն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 04/626781-18 գրության՝ կից ներկայացնում եմ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2017 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության լրացուցիչ մեկնաբանությունները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

Կատարող՝ Արփինե Սարգսյան
Հակակոռուպցիոն և քրեակատարողական
քաղաքականության մշակման վարչություն
Հեռ. 594-021

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի (այսուհետ՝ Խումբ) 2017 թվականի տարեկան հաշվետվության մեջ (այսուհետ՝ Հաշվետվություն), ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել կալանավորված անձանց և դատապարտյալների սննդի կազմակերպմանը և սննդի որակին:

Ստորև ներկայացնում ենք սննդի որակի առնչությամբ Խմբի դիտարկումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության լրացուցիչ մեկնաբանությունները:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում սառնարանային, սառցարանային և սննդամթերքի պահեստներում օդափոխության համակարգերի բացակայության կամ ոչ լիարժեք ապահովվածության պատճառով, խնդիրներ են առաջանում կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվող սննդամթերքների, մասնավորապես՝ շուտ փչացող ապրանքների անընդհատությունն ապահովվելու գործընթացում:

Քրեակատարողական հիմնարկների սառցարանային, սառնարանային և պահեստային շինություններում օդափոխության համակարգերի և անհրաժեշտ տեխնիկայի հագեցվածության պայմաններում հնարավոր կլինի տևական ժամանակ ապահովել անհրաժեշտ քանակի սննդամթերքների (մսամթերքի, ձկնամթերքի, կաթնամթերքի, ձվի, մրգերի, բանջարեղենների և այլն) պահեստավորման և պահպանման գործընթացը: Արդյունքում՝ հնարավոր կլինի քրեակատարողական հիմնարկներում միշտ ունենալ անհրաժեշտ սննդատեսակների պահուստային ֆոնդ և նույնիսկ մատակարարման ուշացումների դեպքում ապահովել սննդամթերքների տրամադրման անընդմեջությունը:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների խոհանոցներում սննդի պատրաստման գործընթացն իրականացվում է դեռևս խորհրդային ժամանակաշրջանում արտադրված էլ. ճաշեփման կաթսաների, սալիկների և այլ տեխնիկական սարքերի միջոցով: Նշված սարքավորումների մեծ մասի շահագործման ժամկետները լրացել են: Սարքավորումների թե՛ ֆիզիկական, և թե՛ բարոյական մաշվածությամբ պայմանավորված՝ դրանց հետագա շահագործումը տարեցտարի դառնում է առավել ծախսատար և անարդյունավետ: Նույն վիճակում են գտնվում նաև կարտոֆիլ մաքրող մեքենաները, դրանց զգալի մասը դեռևս խորհրդային ժամանակաշրջանի արտադրության են:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց տրամադրվող սննդի, ճաշերի որակը և բազմազանությունն ապահովելու նպատակով, անհրաժեշտ է մի շարք քրեակատարողական հիմնարկների խոհանոցների համար ձեռք բերել էլ. ճաշեփման կաթսաներ, էլ. սալիկներ, սառցարաններ, սառնարաններ և այլ կենցաղային տեխնիկա: Վերոնշյալ սարքավորումները համարվում են կապիտալ միջոցներ, սակայն ՀՀ պետական բյուջեով ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության համար կապիտալ ծախսերի ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել, այդ իսկ պատճառով տվյալ խնդիրը դեռևս մնում է մասնակիորեն չլուծված:

Հարկ է նշել, որ 2017 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պահեստներում ժամկետանց սննդամթերք չի արձանագրվել, սննդամթերքի պահպանման ժամկետների և պահման պայմանների կապակցությամբ մշտապես իրականացվում է հսկողություն:

Անհրաժեշտ է փաստել նաև, որ քրեակատարողական հիմնարկներում պատրաստվող սննդի, ճաշերի որակի և ախորժելիության վրա մեծ ազդեցություն ունի խոհարարների մոտ մասնագիտական գիտելիքների թե՛ առկայությունը, և թե՛ մակարդակը:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում մեծամասամբ խոհարարները դատապարտյալներ են և չունեն խոհարարական մասնագիտական գիտելիքներ, որի արդյունքում հնարավոր չէ մշտապես ապահովել ճաշերի բազմազանությունը և ախորժելի արտաքին տեսքը: Խնդրի լուծման կապակցությամբ իրականացվում են ուսումնասիրություններ՝ պարզելու սննդի պատրաստման գործընթացում խոհարարական մասնագիտական գիտելիքներ ունեցող քաղաքացիական անձանց ներգրավելու նպատակահարմարության, արդյունավետության, ինչպես նաև սննդի ապահովման գործընթացը մասնավոր հատվածին պատվիրակելու հնարավորության վերաբերյալ:

Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին դիետիկ սնունդ տրամադրելուն՝ ապա դիետիկ սնունդ տրամադրվում է միայն բժշկի կողմից տրված անհատական ցանկով և սննդակարգով, որի բացակայության դեպքում դիետիկ սնունդ չի պատրաստվում:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների համար պատրաստվող ճաշերն ավելի ախորժալի դարձնելու նպատակով նախապատրաստվում է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, ՀՀ կառավարության 15 հոկտեմբերի 2015.թ-ի N 1182-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով, ըստ որի սննդի օրական չափաբաժիններում ավելացվելու է աղի չափաբաժինը և նախատեսվելու են համեմունքներ՝ չորացրած կանաչեղեն, սև և կարմիր պղպեղ և այլն:

Հարկ է նշել նաև, որ քրեակատարողական հիմնարկի պահեստում ինչ-ինչ պատճառներով պայմանավորված մի սննդամթերքի բացակայության դեպքում, համաձայն ՀՀ կառավարության 31 հուլիսի 2003թ. N 961-Ն որոշման, այն փոխարինվել է քրեակատարողական հիմնարկների պահեստում առկա այլ սննդամթերքով:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձինք մշտապես ապահովվել են սննդանյութերի և էներգիայի նկատմամբ օրգանիզմի ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան սննդամթերքով (կապված տարիքից, օրգանիզմին անհրաժեշտ է օրեկան ապահովել սննդամթերք՝ 2450-2800 կկալ էներգետիկ արժեքով):

2017 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվել է սննդամթերք, որի էներգետիկ արժեքը, մեկ անձի հաշվարկով՝ օրական միջինը կազմել է - 3182 կկալ:

Ինչ վերաբերում է 2017 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ մատակարարված «տավար մսի պահածո»-ին, հայտնվում է, որ 2017 թվականի ընթացքում «տավար մսի պահածո» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրով որպես պարտադիր պայման սահմանված չի եղել պատվիրատուի անվանումը և «ենթակա չէ վաճառքի» գրառումը, դա տեխնիկական բնութագրով նախատեսվել է կատարել «Պատվիրատուի» ցանկության դեպքում: Իսկ «տավար մսի պահածո» ապրանքատեսակի մատակարարող ընկերության հետ պայմանագրի միակողմանի լուծումից հետո՝ մատակարարող ընկերությունը դիմել է դատարան ինչի վերաբերյալ դատական վարույթը դեռ չի ավարտվել:

Հեռ.՝ +374 98 606393
էլ. փոստ՝ prisonarmenia@gmail.com
www.pmg.am